49.542-82
L-44

29

Bibliothek
157

491.542-82
Կ-44

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՒԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԳԻՆԸ Է. 40 ՈՊՓ.

ԲՐԻՖՈՒՆԻ ԵՒ ՃՈՒԱՑՐԱՅ

ԹԻՓԼԻՍ

Тип. М. Вартанянца, Гановск. ул. д. № 3.

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1906

Հ. ԱՂԱՅԵԱՆՑԻ

ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՒԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԲԱՐԵՓՈԽԱՆ ԵՒ ՃՈԽԱՑՐԱՆ

Հեղինակի անփակաւ եւ փոխադրած յօդուածներու արտատպութեան իրաւունքը վերապահուած է.

ԹԻՓԼԻՍ

Тип. М. Вартанянца, Гановск. ул. д. № 3.

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1906

11839

Дозволено Цензурою, 25 Января 1906 г. Тифлисъ.

15-7-2014



ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՆԱՐՀ

1. ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

Արի դու, արի, քո գալըդ բարի,
Սիրուն նոր տարի, նոր օրեր բեր մեզ։
Ջիւն առար սարերին, անձրև՝ արտերին,
Կարկուտը՝ չարին, դուվ արևը՝ մեզ։
Անթառափ ծաղիկից, աննեղուկ կարմրուկից,
Բարի ցաւերից ազատ պահիր մեզ։
Մայրական գթով, գրկաբաց ձեռքով,
Ուրախ ժպիտով առ քո գիրկը մեզ։

2. ԹՌՉՆԻԿՆԵՐ

1.

Տատիկին շրջապատեցին թոռնիկները և աղաչեցին, որ թռչնիկները շինէ իրանց։ Տատն էլ վեր առաւ փոքրիկներից մէկին, գրաւ ծնկանը, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր թափ տալով՝ երգեց.

Դռւ—դռւ—դռւ, ա դռւ—դռւ,
Նռկ—նռկ, ա—դռւ—նռկ, թռ՛ռռռ...

Երեխան թռաւ գետնի վրայ կանգնեց, ծիծաղելով ասաց.

—Ո՛ւր է, տատիկ, ես աղունակ չըզառայ։

Տատիկը պատասխանեց.—Վնաս չունի, հոգիս, դեռ փոքրիկ ծիտիկ ես, կըմեծանաս, աղունակ կըզառնաս։

$ - 2004

Յետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի դիրկը և ասաց.

Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաշաղակ շինիր։

Տատիկը նրան էլ դրաւ ծնկներին և առաջւան պէս երգեց.

Չա—չա—չա, կա—չա—չա,
Ղակ—ղակ, կա—չա—ղակ, թը՛ռուռ...

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինիր, աղաչեց ամենից փոքրիկը։

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թռցնելով՝ երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլւրլւում եմ, ճիւկ, ճիւկ, ճիւկ,
Ոստոստում եմ, թռչկոտում եմ, ուիւկ, ուիւկ, ուիւկ.
Ընկի, թևիկ, արի փետրիկ,
Որ ես դառնամ փոքրիկ ծիտիկ,
Փոքրիկ ծիտիկ, պիծիկ, միծիկ, թը՛ռուռ...

3. ՆՈՐ ՏԱՐԻ

Եկէք, երեխէք, եկէք,
Շուք ձիւրի տանը, պար բռնենք,
Զրւարճանանք ու խնդանք,
Նորիկ տարուն բարի տանը.
Դէհ, գոչենք և երգենք՝
Բարով, բարով, բարով։

Մայրիկն այսօր մեզ տրւաւ
Շիր ու չամիչ և տասւ՝
«Քաղցր ու անոյշ պտուղէք,
Ալևորիք ու տեսնէք
Զմա տարի, շատ բարի,
Բարով, բարով, բարով։


Շնորհապարգ նոր-տարի,
Քո գալուստդ շնորհաւոր,
Դու մեզ համար այս տարի
Բարի եղիր ամեն օր,
Մինչև կաս ու կերթաս
Բարով, բարով, բարով։

4. ՍԱԳԵՐ

ՏԱՆՏԻԿԻՆԸ

Ջու—ջու, ջու—ջու խոտակեր,
Սև ու սպիտակ իմ սագեր.
Հերիք, որչափ լողացիք,
Կարմիր տոտիկ լըւացիք։
Հերիք, որչափ դեսի մօտ
Որդեր կերաք դուք տղմոտ,
Գնանք, գնանք դէպի տուն,
Ձեզ կուտ կըտամ իրիկուն։

ՍԱԳԵՐԸ



—Ղա—դա, դա—դա, գոռացին,
Թող ջուր մանենք մենք կրկին,
Դեռ չենք ուզում գնալ տուն,
Մանել ապուռ հաւաբուն,
Ջրի մէջը վայր ու վեր
Պէտք է մաքրենք մեր թևեր.
Ղա—դա – դա, գա—դա—գա՜...

5. ՄԱՆԿԱԿԱՆ ՀԼՔՒԱԹ

Գնացի ջաղաց։ Ջաղացպանն ինձ ուղարկեց վայտի։ Ման եկայ, ման եկայ, շատ փնտրեցի, վայտ չըգտայ։ Վերջը գըտայ մի բեհեռուկ (կոճղ)։ Թրեցի, խրեցի, շատ խրեցի ոտքով ու քարով, գուրս չհկաւ տեղիցը։ Ասացի.—Մ՛յ բեհեռուկ, ինչ քաջ ես։ Ասեց.—Թէ որ քաջ եմ, ինչու է կացինն ինձ կտրում։

—Մ՛յ կացին, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչու է դարբինն ինձ ծեծում։

—Ա՛յ դարբին, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ է Երկինքն ինձ տանում։

—Ա՛յ երկինք, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ է ամպը երես ծածկում։

—Ա՛յ ամպ, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, անձրևն ինչո՞ւ է մէջիցս վայր թափւում։

—Ա՛յ անձրև, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ եմ դետնին թափւում։

—Ա՛յ դետին, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինձ վրայ ինչո՞ւ է խոտ բրտնում։

—Ա՛յ խոտ, ինչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, տաւարն ինչո՞ւ է ինձ արածում։

—Ա՛յ տաւար, ի՞նչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ է գայլն ինձ ուտում։

—Ա՛յ գայլ, ի՞նչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, շունն ինչո՞ւ է փախցնում ինձ։

—Ա՛յ շուն, ի՞նչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ է ծեծում ինձ պառաւը։

—Ա՛յ պառաւ, ի՞նչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ ինձանից չի վախենում մուկը։

—Ա՛յ մուկը, ի՞նչ քաջ ես.—Թէ որ քաջ եմ, ինչո՞ւ է բունում ինձ կատուն։

—Ա՛յ կատու, ի՞նչ քաջ ես.—Այո՛, քաջ եմ, և այս մեծ տան պահողն եմ, մկներին մահ տալողն եմ, սուրբի ծայրին նստողն եմ, մեր շան աչքի ղրողն եմ։



6. ԿԱՏՈՒ

Փխրիկ—փխրիկ, դու չար փորրիկ, շատ սիրուն ես, խորամանկ ես, մետաքսապատ թաթեր ունիս, սուր եղունգով մատներ ունիս։ Ականջներդ շուտ են լսում, մեծ

աչքերդ մթնում փայլում, երկար բեխերդ ոլորած, խեղճ մկներին մահ ես նետում։

Քո ընկերիդ երբ տեսնում ես, պոչդ այս—այն կողմն ես շարժում, մէջդ ծալում, կըռացնում, աչքերդ փակ մըռռացնում, բայց թէ չանկարծ մի խեղճ մուկիկ մի անկիւնից դուրս է ընկնում, քո պողպատէ թաթիկներով գլխին խփում ես, սպանում։

---

7. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ա.

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Սիրուն ձագիկ, չունե՞ս մայրիկ և կամ հայրիկ,
Որ թռչում ես ոլոր-մոլոր մեր չորս բոլոր։

Զ Ա Գ Ի Կ

Ուրուրն այսօր տարաւ իմ մօր։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ձագիկ, մի լար, որբիկ, մի լար,
Դու չես միայ տատէր անմայր։

—

Եկէք քոյրեր ու եղբայրներ,
Ընկնենք տարեր ու անտառներ.
Գնանք գտնենք, խնդրենք մէկին,
Որ մայր դառնայ այս խեղճ ձագին։

—

Սիրուն հաւքեր, երկնից հաւքեր,
Առէք ձեզ մօտ, ձագին տանէր։

Կ Կ Ո Ւ

Կռւկ—կռւ. կռւկ—կռւ...

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, կըկռւ, այլոց բընում
Չու ես գնում, մայր չես դառնում։

Ա Գ Ռ Ա Ւ

Գռա՛, գռա՛, գռա՛...

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, ագռաւ, գող գիշակեր,
Քեզ չենք յանձնիլ, մի կռայեր։

ԿՌՈՒՆԿ

Կըռո՛ւ, կըռո՛ւ, կըռո՛ւ...

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, կըռո՛ւնկ գարնանասէր,
Մեր երկիրներ կայ ցուրտ ձմեռ։

ՏԱՏՐԱԿ

Վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ...

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, աստրակ, գիտենք լաւ ես,
Ազնիւ հաւ ես, բայց լալկան ես։

ՉԱԳԻ ՄԱՅՐԸ



Մարդն ուրուրին սպանեց,
Ինձ ճանկերից ազատեց.
Տըւէք ձագս, խնդրում եմ,
Ո՞վ է գտել, փնտրում եմ։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Մ՛ո, ա՛ռ, մայրի՛կ,
Քո խեղճ ձագի՛կ,
Սիրուն ծըտի՛կ,
Որ չըթռչի
Ոլոր-մոլոր
Մեր չորս բոլոր։

—

Ձագո՛ւկ, ձագու՛կ, ուրա՛խ կաց,
Մօրըդ գնա գրկաբաց.
Հեռը թռիր, հեռացիր,
Անցած ցաւըդ մոռացիր։

—

Ձագը մօրը սիրում է
Առանց նրբան տեսնում է,
Երբ որ նրբան գտնում է,
Ուրախ ճըչում, ճխում է։

Բ.

Ա. ԱՇԱԿԵՐՏ

(Առում է անգործ մանկանը).

Ով դու մանուկ ծաղկահասակ,
Հերիք անգործ, պարապ ման գաս.
Ջուր մի՛ կորցնիր ոսկի ժամերդ,
Թէ չէ՝ ազէա, բիրտ կըմնաս։

Բ. ԱՇԱԿԵՐՏ

Ուղա՛, խղճա՛ քո օրերին,
Արդէն անցաւ քո ութ տարին.
Ի՞նչ ես տուրել թափառելով,
Հասկացե՛լ ես չարն ու բարին։

Գ. ԱՇԱԿԵՐՏ

Չէ որ մեղք է խղճուկ հայրըդ,
Որ բանում է միշտ անդադար,
Թէ ինչ է՝ իր ուրին մի օր
Դառնայ լաւ մարդ իրեն համար։

ՈՒՄԲԸ

Գոնէ նայի՛ր ու մեզ աս քեզ
Աշխատութեան օրինակ.
Եւ մի՛ անգին ժամանակըդ
Փչացնէը շարունակ։
Ե՛կ, ե՛կ, հերիք պարապ շրջես,
Դորանից քեզ օգուտ չըկայ.
Ելի վարժարան, կարդա մեզ հետ,
Որ խեղճ հայրըդ ուրախանայ։

ԱՆԳՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Ինչի՞ կըգամ ձեր վարժարան,
Որ դուր գերի՞ ես դառնամ։
Ազատ ուրախ փողոցներում
Լաւ չէ՞ խաղամ ու մանգամ։

ՈՒՄԲԸ

Մենք էլ երբ որ բոլորովին

Դասերս լաւ կը սերտենք,
Այն ժամանակ ազատ ուրախ
Խաղ կը խաղանք ու կերգենք։

ԱՆԳՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Հապա եթէ վարժապետը
Յանկարծ ծեծէ ու պատժէ.
Մի թէ այդ վատ պատժարանում
Գալ ու նստելը արժէ։

ԽՈՒՄԲԸ

Այստեղ ոչ թէ ծեծ ու պատիժ,
Այլ ուսում են մեզ տալիս,
Միայն ծոյլ, վատ աշակերտը,
Նախատուում է ու լալիս։

ԱՆԳՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Հապա որ միշտ հրամանով
Դուք կանգնում էք ու նստում,
Եւ ինձ նման ուզած բոպէն
Ձեզ մանգալ էլ չէք կարում։

ԽՈՒՄԲԸ

Ով որ չունի կարգ ու կանոն,
Նա ասում է անկիրթ մարդ,
Կարգ կանոնը մանկանց համար
Են գովական սիրուն զարդ։

Ե՛կ, ասում ենք, եկ վարժարան,
Ձեզ կշտանալ թափառելով.
Ում ուզում ես՝ գնա հարցրու,
Մարդ կըզառնաս ուսումով։

ԱՆԳՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Ես էլ կըգամ, ես էլ կըգամ,
Էլ չեմ շրջիլ պարապ դուրս,
Ես էլ ձեզ հետ միշտ կըկարդամ,
Էլ չեմ ընկնիլ դռնէ դուրս։

ԽՈՒՄԲԸ

Ե՛կ մեզ մօտ, եկ մեզ մօտ,
Բեզ կընդունենք մեծ սիրով.
Միասին, միասին,
Խաղանք, խնդանք երգելով։

ԲՈԼՈՐԸ

Եկէք եղբայրք, թև թևի տանք,
Իրար գրկենք, ուրախանանք.
Քանի այսպէս դեռ մանուկ ենք,
Ուսում առնենք, խնդանք, խաղանք։

Դէհ, եղբայրք, դէհ, եղբայրք,
Ուրախ երգենք ու խաղանք.

Կեցցէ, կեցցէ մանուկ հասակ,
Կեցցէ ուսում, խաղի ժամեր.
Կեցցէ յաւէտ մեր վարժարան,
Կեցցեն և մենք, աշակերտներ։

Պար բռնենք ու երգենք,
Քանի որ իրար հետ ենք.
Տրայ-լայ-լայ, տրայ-լայ-լայ,
Տրայ-լայ-լայ, լայ-լայ-լայ։

---

8. ԱՔԱՂԱՂՆ ՈՒ ՀԱՒԸ





—Ծուղրուղո՛ւ, սանամէր,
Էն մէկ հաւ կար, ուր գնաց.
—Ծարաւ աղբրում կուլ գնաց։
—Ի՞նչ կար կոցում.—Շիր ու չամիչ։
—Ո՞ւր էր տանում.—Հարս ու փեսին։
—Ո՞ւր էր հարսը.—Ոսկէ թախտին։
—Ի՞նչ էր էփում.—Համով կորկոտ։
—Ո՞ւր էր դրել.—Բայ պատուհան։
—Ո՞վ է կերել.—Սև փիշիկը։
—Ա՛յ սև փիշիկ, վայ սև փիշիկ,
Քո մէրն ուտի քո թըշիկ։

9. ՁՈՐՍ ԵՂԱՆԱԿ

I

Օրը տաքցաւ, ձիւնը հալւեց արևից,
Քըչքըչալով ջուր է հոսում դռներից.
Սար ու ձորեր զարդարւեցին կանաչով,
Դաշտը ծածկւեց ոչխարների հօտերով։
Հա—հա—հա, գարուն է,
Տեսէք ինչպէս սիրուն է։

II

Սաստիկ շոգ է. ցորեն զարի հասել են,
Հնձողները խոտը քաղել, պիրկել են,
Բոլոր ծառեր ծածկըւել են տերևով,
Պըտուղները «ճիթ» են անում ժպտալով.
Չօ—չօ—չօ, ամառ է,
Արեը խիստ կըլսաէ...

III

Ձոգերն անցան. պտուղները բաղեցին,
Հացով, մրգով ամբարները լցրեցին,
Երկինքն ամպեց, բարակ անձրև է մաղում,
Մերկ դաշտերը և ծառերը ողողում։
Է՛յ—էյ—էյ, աշուն է,
Տեսէք ինչպէս նախշուն է ..

IV

Օրը կարճ է, արե՛ւ չըկայ, շատ ցուրտ է,
Ձեռմակ ձիւնը բուլա-բուլա կըրըթէ,
Մարդ անասուն, բուք-բորանից վախեցած,
Տաք-տաք տներ, խոր-խոր բներ են մտած։
Օ՛յ—օյ—օյ, ձմեռն է,
Անտանելի մի բնոն է...

---

10. ՏԱՒԱՐԱԾԻ ՁԱՅՆԸ

Մի խամ տատրած, բաւական քաղցած, աղբըի մօտ նստած, ուտում էր չոր հաց։

—Յամար մի ուտիլ, ասեց ընկերը։

—Բա ինչո՞վ ուտեմ, ուրիշ բան չունեմ։

—Դանակո՛վ, եղբայր, դանակով...

—Էդ լաւ ասեցիր, դանակով կտրեմ, ջրումը թրջեմ, էլ ցամաք չուտեմ...

---

11. ԵՐԿՈՒ ԵՒ ՄԻ

Երկու ականջ ունիս, մի բերան,
Հասկացիր դու լաւ,
Աշխարհիս վրայ կըլսես շատ բան,
Ու խօսիր սակաւ։
Աչքերըդ երկու ունիս, մի բերան,
Հասկացիր դու լաւ.
Աշխարհիս վրայ կըտեսնես շատ բան,
Ու պատմիր սակաւ։
Դու երկու ձեռք, մի բերան ունիս,
Հասկացիր ինձ լաւ.
Ամրողջ ժամերով պիտի աշխատիս,
Եւ ուտես սակաւ։

---

12. ՁՈՐՍ ԵՂԲԱՅՐ

Չորս եղբայր են, ամեն տարի
Երկըւիս վրայ ման են գալի.
Չորսն էլ ջոկ-ջոկ ունին հասակ,
Պարկեշներն են հագար տեսակ։

Փոքը եղբայրն է պատանի,
Բաղբոջ, տերև, սաղարթ ունի.
Պայծառ արև, կանաչ արօտ,
Որոնց տղայը են միշտ կարօտ։

Երկրորդ եղբայրն երիտասարդ
Տալիս է մեզ անձրև առատ,
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Յոյս է տալիս առատ հնձի։

Երրորդ եղբայրն է չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս,
Բաժանում է տղոց իր գանձ,
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ։

Չորրորդ եղբայրն է ծերունի,
Յուրտ ու խաւար շալկած ունի,
Ցրտի, անտառ ամայացած,
Դաշտ ու արօտ ձիւնով լըցւած։

---

13. ԳԱՐՈՒՆ

Գարուն սիրուն ու նախշուն
Բերաւ մեր տուն բիւր ողջոյն.
Սոխակն ունէր իր երկին,
Վարդիկն ունէր իր սրտին։

Արօտ գալար ուսերին,
Սարեակ, ծիծառ ճղներին,
Յրստակ աղբիւր, պարզ առուակ,
Հապար ու բիւր սար, ձորակ,
Հովիտ, անտառ, դաշտ ու մարդ,
Ջուր ցանէին առնորակ։

---

14. ՀՈՎԻՒ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջը մահճակալ,
Ձեչոտ քարը գլխակալ,
Մի հին կարպետ ուսերին,
Այս է հովիւ անկողին։

Երբ անձրև է կաթկաթում,
Եւ կարպետը թըխկ-թըխկում,
Հովիւն անուշ քնի մէջ
Քաղցր երազ է տեսնում.
Եւ խնդում,
Ծիծաղում։
Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ, քունդ անուշ...

---

15. ՋՐԱՂԱՑՈՒՆԻ ՆՆՋԱՐԱՆՔ

Երեք չորս հատ ջաղացաքար կարդով շարած պըտըտւում են, իրանց տեղ դըղրդըռոցով ամբողջ շէնքը դղրդըդում են, չանչխանների չըխչըխկոցից մարդի ականջ խլանում է, իսկ ջաղացպանն ալրաթաթախ խոր քնի մէջ խորմփում է։ Բայց ջաղացը եթէ յանկարծ կտրէ ձայնը, լռէ, սառչի,—ինչպէս մի թունդ թնդանօթից՝ ջաղացպանը վեր կըթռչի։

---

16. ՋԱՂԱՑ

Ջուրը նաւից արշաւելով՝
Կատաղաբար ձայն է հանում,
Եւ ջաղացի յատակի տակ
Կարծես ամպեր են գոռգոռում.
Գոռ—գոռ—գոռ...
Գոռ—գոռ—գոռ...
Անիւների խիստ շարժելուց
Ամբողջ յատակն է գողգողում,
Եւ երկանի պարաւելուց
Փոքրիկ լեզուակն է չըխչըկում.
Ձախ—չոխ—չուխ.
Ձախ—չոխ—չուխ..
Նա շարժւում է օրօրւելով,
Լիքն ամբարի դունչը շարժում.

Որից վերին երկնի մէջ
Մաքուր ցորեն է ներս թափւում.
Թափ – թօփ – թռւփ,
Թափ—թօփ—թռւփ...
Իսկ քարի տակ մանրւելով,
Ալիւր դարձած ասշան է ածւում,
Եւ ջաղացը սիպտակ փոշին
Վերմակի պէս վրան փռւում.
Փառ – փօռ – փռւռ,
Փառ—փօռ—փռւռ...

---

17. ՊԱՐԶԱՄԻՏ ՀՈՎԻՒ

Օդոստոսին էր թէ յուլիս ամսում,—լաւ չեմ յիշում,—մի անմեղ հովիւ քաղաք չըտեսած, իր ոչխարակալ հերկայն մահակը ուսին դրած, մտաւ բաղարը խլըշկոտալով, զարմանալով։

Խրտնած պախրի պէս շատ դէս դէն ընկաւ, վերջը կանգ առաւ մրգավաճառի խանութի առջև և աչքը ձգեց լիք թարախներին, հասուն մրգերին։

Ի՞նչ պատուղ ասես որ նա չըտեսաւ, չըհիացաւ.— տեսակ-տեսակ տանձ ու խնձոր, դեղձ ու խաղող, թուզ ու սալոր, նուռ, սերկևիլ, ունաբ ու հուն, կարմիր, փայլուն։

Հովիւը նայեց մրգավաճառին ու մտաց ապշած, որ այնչափ հասուն մրգերի միջին ձեռք չէր պիպցնում մէկին կամ միւսին։

«Սա կույր կըլինի», հովիւը կարծեց և փորձել ուզեց։ Մահակը մեկնեց դէպի բախակալը և քիչ էր մնում, աչքն էր կոխում։

—Է՛յ, ինչ ես անում, գոռաց բախակալը սաստիկ բարկացած։

—Բա՛... ես հէնց իմացայ, դու կույր կըլինիս...

—Է՛յ, ինչ ես ասում, ես եմ կոյր, թէ դու.

—Ի հարկէ, դու ես, պնդեց հովիւը։—Եթէ դու կոյր չես և լաւ ես տեսնում, բա այդ բոլ մըրգից ինչի չես ուտում...

18. ՄԱՅՐԻԿԸ

Մի խեղճ կին ձեռքի աշխատանքովն էր պահում իր սրբերին։ Մի կիրակի, ամենից փոքը երեխային հետն առած՝ գնում է վաճառանոց, որ այնտեղ վաճառէ իր ձեռագործները։ Պատահմամբ՝ երեխան մօրից յետ է ընկնում, ամբոխի մէջ մոլորւում և սկսում է այս ու այն կողմն ընկնել լալով։

—Ինչու՞ ես լաց լինում, հարցնում են մարդիկ կաբկիցաբար, ում ես որոնում։

—Մայրիկիս եմ ուզում, պատասխանում է երեխան հեկեկալով։

—Ո՞վ է քո մայրիկը, ինչպիսի՞ կին է։

—Վա՛յ, մի՞թէ չէք ճանաչում իմ մայրիկին, նա էլի, որ ամենից լաւ մայրիկն է։

—Անունն ասա, անունն ի՞նչ է։

—Մայրիկ է, մայրիկ, մայրիկ...

Երեխի ձայնը լսելով՝ մայրիկը դուրս եկաւ ամբոխի միջից և գրկեց նրան այնպէս ջերմ սիրով, որ կարծես տասը տարի բաշած լինէը կարօտը։

---

19. «ՀԱՐԸԴ ՏԱՆԵՄ»

Իմ նանը, որդիք, մի շատ լաւ կին էր,
Ժամ ու պատարագ նա շատ կըսիրէը.
Թէ արթնանալիս, թէ քուն մտնելիս՝
Ինձ համար նա միշտ աղօթքներ կանէը։

Եւ թէ պատահէը՝ հիւանդանայի,
Կրծքիս փարելով՝ միշտ կըհարցնէը՝
«Ասա, զաւակս, ի՞նչըդ կըցաւի,
Ասա, դէհ, նանը քո չարը տանի»։

Ա՛խ, իմ մայրիկը, սիրուն մանուկնե՛ր,

1006 (29305)
157-2014
Գրադարան



Ընքան՝ բարի էր,
Ընքան անձնուէր,
Որ վերջը, իրաւ,
«Իմ չարը տարաւ»։

20. ԱՌԱԾՆԵՐ

Մօր համար բոլոր երեխէքը հաւասար սիրելի են։—Երեխէքը որ կան, մօրը հինգ մատն են, որն էլ կարես, սիրտը կը մղկըտայ։ —Որդին որ բռնութիւնը ձրւաձեզ եփի, մօր լաւութիւնից չի պրծնիլ։

21. ՎԻՇԱԿԻ ԵՐԳԵՐ

Եղբայրս ծառի տակին,
Մաղմոսը կռան տակին,
Մաղմոսն անգիր է արել,
Ղեզուն բիւլբիւլ է դառել։

Իմ եղբայրը սարումն է,
Ձրւին գօտկածալումն է,
Եղբայր ջան, շրւիդ ածա,
Քոյրըդ Լօռւայ քարումն է։

Սարէն կըգայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր,

Հրէս եկաւ եղբայրըս,
Երեք օրւան թաղաւոր։

22. ԴԻՒՂԻ ԳՐԱԳԻՑԸ

Մայրը իր որդուց նամակ ստացաւ,
Կարօտած սիրտը վեր ու վայր եղաւ.
Որդին հեռու էր՝ օտար քաղաքում,
Ծառայում մի տան, գպրոցում սովրում։
Նայում է թղթին, սև սև նշաններ,
Բայց այդ գըրերի միտքը չըգիտէր։
Տղան ինչ է գրել, պէտք է իմանար,
Բայց իրանց տանը կարդացող չըկար.
Դուրս եկաւ փողոց, մի քարի նստեց,
Գիւղի տէրտէրի որդուն հանդիպեց,
Եւ նրան կանչեց.—Տէրտէրի տղայ,
Մօտս եկ, ախպեր, այս գիրը կարդայ»...

23. ՏԱՏԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Մի քաղցած գայլ գիւղի մօտով անցնելիս՝ յանկարծ լսեց, որ մի խրճիթում երեխան լաց է լինում, իսկ տատիկն ասում է նրան.—«Սուս կաց, թէ չէ՝ գայլին կըտամ քեզ»։



Գայլը կանգ առաւ ուրախացած և սպասում էր, յուսալով, որ տատիկն իր ասածը կըկատարի։ Բայց տատիկը գրկեց երեխային և փայփայելով ասաց.—Մի լար, հոգեակս, քեզ չեմ տալ գայլին, այլ կըսպանեմ նրան, եթէ գալու լինի։

Այս որ լսեց գայլը՝ պոչը կախած հեռացաւ, ինքն իրան մրմռմռալով—«Տատերի ասածին հաւատալու չէ»։

24. ՈՐԲԻ ՊԱՀԱՆՋԸ

Որը եմ անառուն, անպաշտպան,
Տրէք, խնդրեմ, ապաստան.
Տրէք անունդ և ուսում,
Ես մարդ դառնալ եմ ուզում։

Չեմ ցանկանում շրջել զուր,
Անգործ ընկնել դռնէդուռ,
Շրի մուրալ ու ապրել,
Ողորմութեան սովորել։

Առէք ձեզ մօտ որդիքը,
Տրէք ձեռքս արհեստ, դիր,
Լինեմ խելօք ու ազնիւ,
Վայելեմ միշտ սէր, պատիւ։



25. ԼԱՒ ԸՆԿԵՐ

— Մարդիկ վեր առան կակաչի հասարակ ծաղիկը և մանուշակի հետ մի խեցիի մէջ տնկեցին։ Մի քանի ժամանակից յետոյ կակաչը մանուշակի հոտ առաց։

---

26. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

1.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած։

Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար.

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու։

2.

Ով մեծասքանչ դու լեզու
Ով հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն քո բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կա՞ն։

Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ ըզրեզ թոթովելս
Դեռ իմ մաքէն չէ ելեր։

Մայրենի անուշ լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,
Կեա՛ց միշտ լեզուդ դու հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ։

---

27. ԿՈՒՆԿ

Կաունկ, ուսաի կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կաունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս,
Մի վազեր երամիդ, շուտով կու հասնիս,
Կաունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

Թողեր եմ ու եկեր մըբերս ու այգիս,
Քանի որ ախ կանեմ, կըքաղի հոգիս,
Կաունկ պահ մի կեցիր, ձայնիկդ ի հոգիս,
Կաունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս։

---

28. ՂԱՐԻԳ ՄՇԵՑՈՒՆ

Ղարիպ ախպէր, արի մեր տուն,
Բուք-բօրանին ուր կերթաս,

Հերիք այդքան թափառելով,
Սև դարդերըդ, քամուն տաս։
Անտուն ախպէր, արի մեր տուն,
Էս էլ հայի օջախ է.
Իմ պաղ ջուրս, սև-չոր հացս
Քեզ պէս ախպօր հալալ է։
Մշակ ախպէր, արի մեր տուն.
Դարդ ու ցաւըդ ինձ պատմէ,
Հաց-լացի տանը էս մեծ ծօնին,
Սիրտս լացի կարօտ է...

---

29. ՈՐԲԻԿ

Մեկլ ու թուլակազմ եկար այս աշխարհ,
Եւ մօրըդ գրկում կառնէիր հանգիստ.
Ինչ էր զառնութիւն, չարչարանք ու վիշտ—
Քեզ ծանօթ չէին, խաղաղ էր հոգիդ։
Բայց միայն, աւաղ, մահը տարաժամ,
Տառապեալ մօրըդ գրաւ գերեզման,
Եւ քեզ, խեղճ զառնուկ, որբ, անօգնական,
Թողեց օտարի մշտափակ դրան։



30. «ՊՕՂՈՍ—ՊՆՏՐՈՍ»



Վաղուց, երբ մօտ էր երկրին երկինքը, ու լսում էր դեռ մարդկանց ՏԷը—Ինքը, էն լաւ ժամանակ երկու մանուկներ ունէին մի չար, մի անսիրտ-խորթ մէր։

—Կորէք, գնացէք աշխատանք արէք, աշխատանք արէք ու եկէք կերէք։ Ի՞նչ էք վէր թափել, անգործ ու անբան, հասած տղերք էք, հինգ-վեց տարեկան...

Այսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը, ճիպոտները տրւաւ, դրկեց հորթերը։ Անհանգիստ հորթեր, ամառւան շոգ օր. կէտ արին փախան, ընկան սար ու ձոր։ Նրանց հետեւից լալով, հևալով, փոքրիկ որբերը՝ քարէքար գալով՝ վազ էին տալիս անտառի միջում, վազ էին տալիս ու իրար կանչում.

—Պօղոս, գտա՞ր.

—Չէ՛... Պետրո՛ս, գըտա՞ր.

—Չէ՛.

—Վայ-վայ, վրէյ-վրէյ,

—Վայ-վայ, վրէյ-վրէյ...

Շատ որ ման եկան, խեղճերն յոգնեցին, եկան խորթ մօրը լալով պատմեցին.

—Նանի՛, ա՛յ նանի՛, կորան հորթերը...

—Վայ, գետինն անցնէք, ճըչաց խորթ մէրը, թո՛ղ դուք կորչէիք հորթերի տեղակ, անտակ ձորի մէջ, անժաժ քարի տակ։ Մի արջ պատահէր, մի գազան, մի գել, որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ... Դէ՛, ետ գնացէք, գնացէք, կորէք, մինչև չըգտնէք հորթերը, բերէք, աչքիս չերևաք, ա՛յ աչքի փշեր, թէ չէ՝ կըսպանեմ ես ձեզ էս գիշեր...

Ու ճիպոտն էլ եա իրանց թաթիերին, յոգնած ու սոված, արցունքն այտերին, փոքրիկ որբերը՝ անտառի միջում, գիշերւան կիսին լալիս են, կանչում.

—Պօղոս, գտա՞ր,

—Չէ՛։—Պետրոս, գտա՞ր.

—Չէ՛։

—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,

—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ...

Անդէը հորթերը չըկան ու չըկան։ Ճարնները կտրած՝ խեղճերը եկան, լալով չորեցին.—Տէր Աստուած, ասին, ինչ կըլնի, գըթաս, գոնէ թևեր տաս, թևեր տաս՝ թըռչենք, թռչենք ու կորչենք, որ էլ չըտեսնի մեզ մեր խորթ մէրը, մինչև որ գտնենք կորած հորթերը...

Հէնց ասին-չասին անմեղ բերանով, Աստուած որոտաց իր պճոտ ձայնով.

—Ա՛հա ձեզ թևեր, սիրուն երեխէք, թռչուններ դառէք, թըռած ման եկէք, որ էլ չըտեսնի ձեզ ձեր խորթ մէրը, մինչև որ գտնէք կորած հորթերը։ Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին, ծիղն ու ծղնոտը արէք անկողին, ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից, երբ որ դադարգուն եղաք ձեր տանից...

Այսպէս վերևից հէնց կանչեց Աստուած, փոքրիկ որբերը փոխեցին յանկարծ, ու թևեր առան, թռչուններ դառան։

Ու թևեր առած, թռչուններ դառած,
Դեռ մինչև էսօր, ընկած սար ու ձոր,
Ծըւում են, մնչում,
Մէկ մէկու կանչում.
—Պօղո՛ս, գտա՞ր.
—Չէ. Պետրո՛ս, գտա՞ր.
—Չէ։
—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ...

---

31. ՀՋՕՐ ՃԱՐ

Երբ իմ ծնողքս կամ ես եմ տկար,
Եւ կամ հանդիպի մի այլ պատահար,
Երբ որ աշխարհի մէջ կայ ցաւ կամ սով,
Երբ որ մարդիկ են իրար հետ խռով,—
Այդ ամեն չարին ունիմ ես մի ճար,
Այդ իմ աղօթքն է ամենի համար։

---

32. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

Սողոմոնը տասներկու տարեկան էր, որ թագաւոր դառաւ, որովհետև իմաստուն էր, այսինքն՝ այնքան խելօք էր այդ հասակումը, որ մեծերն էլ նրա չափ խելք չունէին։ Նա դեռ մի քանի օրւայ թագաւոր էր, որ նրա քաղաքում մի անսովոր բան պատահեց։

Մի սենեակում բնակում էին միասին երկու տէրբակին, երկուսն էլ ծծկեր մանուկների մայրեր։ Մի գիշեր նրանցից մէկը՝ ծիծ տալու ժամանակ՝ այնպէս խոր քնի մէջ էր մտել, որ իր բոլոր ծանրութիւնովը ընկել էր օրօրոցի վրայ, որից երեխան կտրել էր շունչը։ Հէնց որ աչքը բաց է անում մայրը, տեսնում է որ երեխան մեռել է, տէրբակնոջ կենդանի երեխան առնում է դնում իր օրօրոցումը, իսկ մեռածը դնում նրա տեղը։

Կենդանի երեխայի մայրը որ վեր է կենում առաւօտը և տեսնում մեռած երեխային իր օրօրոցումը, խղճն նկատում է, որ նա իր երեխան չէ։ Սրա վրայ երկու մայրերի մէջ վէճ ու կռիւ է սկսւում և ամեն մէկը պնդում է, որ իր մանուկը կենդանին է և ոչ մեռածը։ Բանը դատի է հասնում, բայց դատաւորները չեն կարողանում հասկանալ, թէ բոզորաւոր մայրերից որն է արդարը և որը մեղաւորը։

Վերջապէս գործը հասնում է թագաւորին։ Մայրերին հարց ու փորձ անելուց յետոյ Սողոմոն իմաստուն

հրամայում է, որ կենդանի երեխային կիսելով երկու բաժին անեն և կէսը մէկ, կէսը միւս մօրը տան։

Այս վճիռը որ լսում են՝ հարազատ մայրը թագաւորի ոտներն է ընկնում և աղաչում, որ երեխան տան միւսին, միայն թէ կենդանի մնայ, իսկ միւսն ասում է. «շատ լաւ, թող կատարւի թագաւորի վճիռը»։

—Հարազատ մայրը չի ուզենալ իր զաւակի մահը։ Տրւէք երեխան այն մօրը, որ չի ուզում նրա մահը, իսկ միւսին պատժեցէք, հրամայում է իմաստուն թագաւորը։

---

33. ԿԱՄԱԿՈՐ ՍԱՑԼԱՊԱՆՆԵՐ

Երկու սայլապան ճանապի նեղ տեղումը դէմ առ դէմ եկան։ Նրանցից մէկը գնում էր քաղաք, իսկ միւսը՝ տուն։ Մէկը բղաւում է.

—Ճանապարհ տուր, ես շտապում եմ, քաղաք պիտի գնամ շուտով։

Իսկ միւսը գոռում է.

—Ես աւելի եմ շտապում, պէտք է շուտով տուն գնամ։

Այսպէս յամառել էին երկուսն էլ և երկար ժամանակ բղաւում էին։

Բարեբախտաբար մի երթող գիւղացի հանդիպեց դրանց և ասաց.

—Իմ կարծիքով՝ ով ուզում է աւելի շուտ տեղ հասնել, նա աւելի շուտ պէտք է ճանապարհ տայ միւսին։

Այս որ լսեցին կամակոր սայլապանները, երկուսն էլ կոտրւեցին և ամեն մէկը նրանցից շտապեց միւսին ճանապա տալ շուտով։

---

34. ԲԱՐԻ ԴԱՐՁ

Սարի լանջում, ժայռի տակ,
Գուր էր բղխում սառնորակ,
Եւ ցրւելով խոտերում,
Ի զուր ճահիճ էր դառնում։

Նրա առջև մի խոր գուշ,
Ջինեց հովիւն ու տարաւ,
Խաղ ասելով նա անուշ,
Ջրեց հօտը իր ծարաւ։

Պախրէն անցաւ այն սարից,
Ձորին հանած չոր լեզուն,
Կուշտ կուշտ խմեց աղբիւրից,
Ապա նայեց Աստրծուն։

Անցաւորն հկաւ ոտքակէզ,
Սառն աղբիւրը որ տեսաւ,
Գլխարկն առաւ ու չոքեց,
Խմեց, սիրտը հովացաւ։

Ապա թէ իր օրհնանքը,
Մաղթեց մարդը այն բարի,
—Քո շինողիդ օր-կեանքը,
Ջրի նման երկարի...

---

35. ՎԱՐՊԵՆԻՆ ՈՒ ՓՇԵՆԻՆ

Վարպենին ու փշենին բռնել էին միատեղ։ Մի օր փշենին ասաց իր պզտիկիկ հարևանին.

—Բարեկամ, համբերութիւնդ ինձ զարմացնում է. ինչո՞ւ չես պատժում քո փշերով այն մեղուներին, որոնք հոտրդ ու հիւթիդ ագահաբար ծծում են տրդտրդալով։

—Ինչո՞ւ պատժեմ, հեզութեամբ պատասխանեց վարպենին, չէ՞ որ իմ հիւթից նրանք անուշ մեղր են պատրաստում։

---

36. Ա Ր Ա Ծ Ն Ե Ր

Մի ծաղկից օձը թոյն է շինում, մեղուն՝ մեղր։— Աբած լաւութիւնը չի կորչիլ։—Ինչ որ ցանես, այն կը հնձես։—Ծաշած քաջը գետնին չի մնալ։

---

37. Կ Ր Տ Ե Ն Ի [1]

Աբիր նանը դողնոց կապած,
Թոնրի ափին ամուր նստած,
Դունդ խմորը դրած դափին [2],
Կաղն է տալիս թոնրի պատին։
Բայց խմորը վատ լինելով՝
Թոնրին կպած շատ չի մնում,
Յանկարծ պատից դժըլւելով,
Թըըմփում է, մոխիրն ընկնում։
Ախ է քաշում Աբիր նանը,
Տեսնելով որ լաւ չի բանը,
Հացերը չեն մնում ողջ-ողջ,
Կըտենի են դառնում ամբողջ։
Նանի սիրտը մրմնջալիս՝
Ժամհար Մօսին ձայն է տալիս,
«Ղևրմի Աստւած, Աբիր նանի,
«Թաժա հաց բեր, Մօսին տանի,
«Որ ամեն օր եկեղեցում
«Հոգուդ համար աղօթք անի»։
Նանն ընտրում է մի կըտենի,
Ինչպէս կարմրած լաւ կրկենի [3],
Եւ տալիս է ժամհար Մօսէն,
Իրանց ժամի ժիր մըղըլտուն։
«Այս լաւ դառաւ որ սա եկաւ»,
Աբիր նանի մտքովն անցաւ.
«Այսօր ժամ չեմ գնացել ես,
«Թող հոգուս վարձք լինի այսպէս.

«Ով գիտէ հէնց դրանից է որ՝
«Կաենի դառաւ հացս այսօր»...

1. Կըտենի=կուտա հաց=կուտանա. Թոնրից վայր ընկած ու նրա շեղջումը թխած։ 2. Դափ=տէպ, որի վրայ են գնում և բաց անում խմորի գունդը և նրանով էլ ղարկում թոնրին, կողն են տալիս։ 3. Կրկենի=կարկանդակ=քեօմբա, մոխրում թխած հաց։

---

38. Հ Ա Ց Թ Ո Ւ Խ

Հացթուխն է այն ալիւրոտ մարդը,
Որ գիշերն ևս չունի քուն, դադար,
Խմորի տաշտը առաջը դրած,
Ալիւր է մաղում, մաղում անդադար։
Երկար ժամանակ կուշ-ձիգ անելով՝
Հունցում է խմորը, երեսը ծածկում,
Թոնիրը վառում, պառկում մի անկիւն
Մինչև գալիս է խմորը՝ բարձրանում։
Խմորը եկաւ, թոնիրը տաքցաւ,
Եւ մեր հացթուխը տեղից վերկացաւ,
Խառնեց կրակը, հաւաքեց մոխիրը
Ու տաշտի գիմաց նորից նա անցաւ։
Կարում է խմորը, շինում գնդակները,
Կտաւի վրայ կարգաւ շարուում,
Գնդակը վերցնում, չոքում թոնրի մօտ
Ու մէկ-մէկ կարմրած պատին կպցնում։
Հացը թխւում է, փքւում, կարմրում,
Եւ մեր հացթուխը, գլխիվայր կախւած,
Մի կողմից հանում, միւս կողմից շարում,
Մինչև որ բոլոր խմորն է պրծնում...
Լոյսը բացւեցաւ. նա էլի կանգնած
Տաշտի առաջին, մաղն է իր ձեռքում,
Տխուր երեսով ալիւր է մաղում,
Ալիւր է մաղում ու խոր հառաչում...

---

39. ԼՃԻԱՑԱՐԱՐ

Լուսաբացին՝ քաղաքում, մի մեծ կապոց ղրած ուսին,
Շտապելով դնում է լացաբար մի խեղճ կին։
Նա տանում է հարստի կեղտոտ շորերը լալու,
Նրա տրւած վճարով իր որբերին պահելու։
Այդ արհեստը իր համար դործ է դնում այն օրից,
Երբ նա զրկւեց թև-թիկունք իր քաջ մշակ ամուսնից։
Ահա հասաւ իր տունը, մեծ կաթսայով ջուր ղրաւ,
Կրակ վառեց օջախում ու կապոցը բաց արաւ։
Սուաջ քաշեց տաշտակը, սոսթեց իրեն թևերը,
Սապոն, լեղակ պատրաստեց ու լացքն սկսեց։
Ճլը՛ղդ-պլը՛ղդ,-ճլը՛ղդ-պլը՛ղդ, նա սապնում է հառնդով,
Ձորը կոխում ջրի մէջ, ճմռում, հարում ձեռներով։
Եռման ջրից քերձւում է նրա ձեռքի թոյլ կաշին,
Կռանալուց՝ կասես թէ՝ դուրս է դալիս իր հոդին։
Բայց նա յաւին չի նայում, ճլըղդ-պլըղդ՝ սապնում է,
Մինչև շորի բոլոր կեղտ ջնջւում, մաքրւում, սրբւում է։
Երբ լացքը մի առ մի ջուրն է քաշում, լեղակում,
Մղում, բակում թառ տալիս, չորանալուց հարթուկում։
Նրա մօտիկ ղրացիք, հանդիստ պառկած անկողնում,
Վաղուց արդէն քնի մէջ երբորդ երազն են տեսնում։
Այսպէս խղճուկ այս կինը, ամիս, տարի, տարիներ,
Լացքի տակ տանջւելով՝ անցնում է իր սև օրեր։

---

40. ՇԱՊԿԱ ԵՐԳԸ

Մառները թմրած, յոգնած են սաստիկ,
Արտահանունքը և՛ խոնջ, և՛ կաթմիր,
Թերմաշ շորերով նստած է մի կին,
Նստած կարում է հառնդոտ ու ժիր.
Կարիր ու կարիր...
Սովատանջ, հալ ու մաշ, վշտակիր...
Հեծում է, երգում տխուր ու վհատ

«Մի շապկի մասին» այդ կինը ապրատ։
Աբլորի կանչին զարթնում է քնից՝
Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Աստղեր փայլում են յարկի ճեղքերից՝
Դէհ, աշխատիր, աշխատիր, աշխատիր...
Եւ տանջւիր ինչպէս բրիստոնեայ մի կին՝
Բարբարոս բրդի ձեռքին միշտ գերի.
Աւաղ, մի գերի յուսահատ ու խեղճ,
Նրբա ճանկերից փրկուելին չունի։
Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Մինչդեռ չէ յաղթել քիչ բունը յամառ.
Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Քանի աչերդ չեն մարած իսպառ.
Ձուլալիր, վրձկարիր,
Խրծքալիր, պատկարիր՝
Մինչ շապկի վրայ ընկնես քնահար,
Եւ երազիդ մէջ կարես անդադար։
Ո՜հ, մարդիկ, դուք որ ձեր շուրջը ունիք
Քաղցրիկ մայր ու քոյր, կին ու ազգականք,
Ա՜խ, դա կտաւ չէ, որ դուք մաշում էր,
Այլ չարքաշ ու խեղճ մարդկային մի կեանք.
Կարիր ու կարիր...
Կարում եմ սովատանջ, վշտակիր,
Միաժամանակ շապիկ ու պատան
Եւ ամեն րոպէ ըսպասում մահւան։
Բայց, ասա՛, ինչու՞ մահից վախենամ,
Թէկուզ այդ հիւրը գար ինձ մօտ այսօր.
Չէ որ ես մահու հրեշտակի նման
Մի չոր կմախք եմ—լոկ մորթ ու ոսկոր...
Հիւծւած մի մարմին, չարատանջ մի կեանք,
Կատր հացից դուրկ և ծոմ օրն իբուն.
Ա՜խ, ով Տէր, ինչու՞ այդպէս թանգ...
Իսկ այսպէս էժան՝ իմ միսն ու արիւն.
Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Այս ծանր ժամերը, աւաղ, վերջ չունին.
Իսկ ինչ է վարձքդ—չոր հացի փշրանք,

Անպէտք ցնցոտիք, յարկէ անկոպին.
Վէրը՝ խախուտ յարկ, ցածը՝ մերկ յատակ,
Սեղան ու աթոռ թոյլ ու հաստարակ.
Լաւ է որ գոնեա
Մերկ պատի վրայ
Յաճախ տեսնում եմ ըսաւերն իմ միակ:
Աշխատիր անվոնջ, տքնիր ժամէ ժամ
Եւ միշտ նպատակաց գործիր օրավարձ,
Ինչպէս յանցաւոր մի տաժանակիր՝
Աքսոր ուղարկած անյոյս ու անդարձ:
Ջուլալիր, վրձակարիր,
Խրծըպիր, պատակարիր,
Թափիր վերջին ճիգ, գործիր անձանձիր
Մինչև դըլուխդ լիեալի ուժասպառ
Եւ սիրտ ու ձեռքդ թուլանան իսպառ:
Կարիր ու կարիր և յուրտ ձմեռը,
Նոյնպէս գարնանը—օրեր զովարար,
Երբ ծիծեռնակը գալիս է նորից՝
Գարնան վերադարձ ասնելու համար.
Իսկ ձագուկները խուսիս ցերին տակ
Միշտ ճուռզում են իրանց մօրը հետ—
Կարծես իրար մէջ պայման են դրած
Ինձ կռնակ ցոյց տալ և ծաղրել յաւէտ:
Ա՛խ, մէկ դուրս գայի թարմ շունչ քաշելու:—
Ի՜նչպէս բուրում են վարդերն անուշակ...
Միայն երկինքը լինէր իմ վրայ,
Միայն գալար խոտ իմ ոտքերիս տակ.
Ո՜ւր էր դէթ մի ժամ ըզգայի այնպէս,
Երբ դեռ փոքր էի՝ գոհ ու բերկրալից—
Հիմիկւայ նման երկիւղ չունէի,
Թէ մէկ ճեմելով կը զրկեմ ճաշից:
Ո՜հ, թէկուզ մի ժամ, միայն մի վայրկեան
Հոգիս չըտքնէր ճնշող բեռան տակ.
Աւա՛ղ, յոյս չըկայ մի վայրկեան անգամ,
Հոգսը խըլում է ողջ իմ ժամանակ.
Գոնէ արցունքով սիրտս ամոքեմ,

Բայց ո՛չ... շուտ պէտք է վերջանայ այս կար.
Ըզցո՛ւնք, կ՚ընդ առէք—ինձ մի խանգարէք,
Թէ չէ, չի լինիլ կարը միաշար:
Մատները թմրած, յոգնած են սաստիկ,
Սրտանուռնքը և խոնջ, և կարմիր—
Հնամաշ շորերով նստած է մի կին,
Նստած՝ կարում է եռանդուն ու ժիր.
Կարիր ու կարիր...
Մովատանջ, հալումաշ, վշտակիր՝—
Հեծում է, երգում հեզ ու լալագին.
Ա՛խ, թէ դէթ հասնէր վէս հարուստներին
Այս կնոջ երգը «մի շապկի» մասին:

---

41. ՊԱՌԱԻԻ ՀԱՒԸ

Հաւը օրական մի ձու էր ածում պառաւի համար: Բայց պառաւն ագահ էր. նա մտածեց. «եթէ հաւիս շատ կուտ տամ, նա մի ձուից աւելի կըտայ»: Եւ սկսեց կուտ շատ տալ, որից հաւը շատ գիրացաւ և ձուից կտրեց:

---

42. Կ Թ Ի Կ Ո Վ

Կթի կովը օրական մի կճուճ կաթն էր տալիս տիրոջը: Մի անգամ տէրը միտք արաւ, թէ ինչու՞ պէտք է կթել ամեն օր և կաթը հաւաքելով թըթուեցնել, խնոցի հարելու համար, աւելի լաւ չի՞ լինիլ՝ շաբաթը մի անգամ կթել և եօթն օրւայ կաթը միանգամից ստանալ: Այսպէս էլ արաւ, եօթն օր չըկթեց, բայց ութերորդ օրը որ ուզեց կթել, կովն էլ կաթ չըտուաւ, արդէն ցամաքել էր:



43. ՁՈՒՆՆ ՈՒ ԿԱՑՈՒՆ

I







Ժամանակով
Կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին
Գտակ չունէր,
Միայն գիտեմ ոչ՝
Որդեանց որդի,
Ճանկել էր մի
Գառան մորթի։
Եկաւ մի օր
Ձմեռնամբուխն,
Կատուի կուշտը
Տարաւ մորթին։

—Բարեաջողում,
Ո՛ւստա փիսօ,
Գլուխս մրսեց,
Ի սէր Աստոյ,
Առ էս մորթին
Ու ինձ համար
Մի գդակ կարի
Գլխիս յարմար։
Վարձիդ համար
Միամիտ ճիտ,
Համա-համա
Շատ չուշանայ։

—Աչքիս վրայ,
Քեռի Բուչի,
Մի գդակ ա,
Հօ մի քուրք չի,
Քու թանգագին
Խաթեր համար,
Ուրբաթ օրը
Համեցէք տար։
Փողի մասին
Աւելորդ ա,
Մեր մէջ խօսելն
Էլ ամօթ ա.

Ի՞նչ մեծ բան ա, տօ հէր օրհնած,
Միայն, միայն մի գդակի վարձ։

Ուրբաթ օրը քեռի քուչին,
Ցրտից սառած բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ ծանդրըը ու մեծ,
Ուստա Կատւի շէմքում կանգնեց,
Ու բարձր հաչեց.

—Ուստէն ո՛ւր ա... փափախս ո՛ւր ա։
—Մի քիչ կացի, հրէս կերևայ,—
Պատասխանեց կատւի ձագը,
Որ մտել էր պատի ծակը։

II

Ուստէն եկաւ քուրքը հագին,
Շանը տեսաւ... բեղի տակին
Իրէն-իրէն քիչ փնթփընթաց,
Ու մուշտարու վրայ թնդաց.
—Յուրտը տարաւ... վահ, անաշէն,
Չես թող անում մի շունչ քաշեն.
Հեշտ բան հօ չի, դեռ հիմիկս եմ
Ցրցամ տըւել, որ ըակըսեմ.

—Դէ, հէր օրհնած, ըահից ասա
Էդ բարկանալդ էլ ընչի՞ս ա։
Փող եմ տըւել, վախտին կարի,
Թէ չէ, ասա՝ էգուց արի։
Համ ասում ես, համ չես կարում,
Համ բարկանում, վրէս գոռում,
Համ, հմմ, հմմ, հմմ,
Քանի, ախպէր, գնամ ու գամ...
Ասաւ շունը ու նեղացած,
Վերադարձաւ գլուխը բաց։

III

Մին էլ եկաւ, դարձեալ չըկար.
Էս անգամը դիպան իրար.
Էլ անպատիւ, անկարգ խօսքեր,
Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր.
Էլ գող կատու, էլ քաչալ շուն...
Բանը հասաւ դիւանբաշուն.

Շունը մինչև գնաց, եկաւ,
Ուստա կատուն կոտրըն ընկաւ,
Գլուխն առաւ ու մի դիշեր,
Հայդէ, կորաւ, էն կորչին էր։

IV



Էն օրւանից
Մինչև օրս էլ
Շունն էս բանը
Չի մոռացել.
Նա մաքրումը
Դեռ պահում ա.
Որտեղ կատուին
Պատահում ա,
Վեր ա թռչում,
Վըրայ վազում,
Իրեն մորթին
Ետ ա ուզում.
Իսկ սևերես
Կատուն յանկարծ
Ետ ա դառնում ու բարկացած՝
Թըքախառը փըշտացնում,
Շան մըռութը թացացնում,
Մի թամ թէ՝ տես, հէնց հիմիկս եմ
Ձրցամ տըւել, որ ըսկըսեմ։

---

44. ԵՐԵԻԵԼԻ ԽՈՀԱՐԸ

Ազան հրամայեց իր նոր վարձած սպասաւորին, որ մի քանի ձու խաշէ, իսկ ինքն սկսեց լրագիր կարդալ։ Կէս ժամ անցած՝ կանչեց ծառային և ասաց՝ շուտ բեր, մինթէ պատրաստ չէ դեռ, տես պինդ չըլինի եփած, այլ փափուկ։ Ծառան գնաց և մի ձու հանեց կոտրեց, տեսաւ որ պինդ է, շարունակեց եփել որ փափկի։ Մի կէս ժամից ազան էլի կանչեց և հարցրեց, թէ չեփւե՞ց մինթէ։

—Ո՛չ, ազա, պատասխանեց ծառան, դեռ չի փափկել...

---

45. ԱՊԱԴԱՅԻ ՀԱՄԱՐ

Մեզանում ասում են, «Ով որ ընկուզենի բուսցնի, նրա պտղից չի ուտիլ», որովհետև մի քանի տարի է տևում մինչև նրա պտուղ տալը։

Քասի ապէրը սովորութիւն ունէր ամեն տարի ընկոյզներ ցանելու, և արդէն նորաբոյս ընկուզենիները ուներ մի քանի մարդ, որտեղից հանում ու տնկոտում էր այգու ափերում։

Քասի ապօր հարևան Կիրակոսը, որ թէև դեռ երիտասարդ, բայց մի անհեռատես և ծոյլ մարդ էր, ծիծաղում էր ծերունու վրայ և ասում.

—Ա՛յ հալևոր, ինչո՞ւ ես չարչարւում, ոտիդ մէկը գերեզմանումն է, դու հօ դրա պտղից չե՞ս ուտելու, էլ ո՞ւմ համար ես տնկում այդ ծառերը։

—Քեզ համար եմ տնկում, Կիրակոս, քեզ համար, պատասխանում է ալևոր Քասին,—քեզ ու քեզ նմաններիի համար եմ տնկում, որ սրա պտղից ուտէք և ինձ ողորմի տաք։

---

46. Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր

Մարդ չըկայ, որ իր տնկած ծառը չըսիրի։—Իր տնկած ծառի պտուղն ուտիլը աշխարհք աժի։—Մարդու տնկած ծառը իր զաւակն է, երկուսն էլ պահել պահպանել են ուզում, երկուսից էլ բարի և առատ պտուղ է սպասւում։—Ամեն ծառ իր պտղից կըճանաչւի։—Պտղատու ծառը ճղները քաշ կըզցի (խոնարհ կըլինի)։—Պտղատու ծառին քար գցող շատ կըլինի։—Լիքը հասկերը գլխները կռացնում են, իսկ դատարկները՝ ցից են պահում։

---

47. Ծ Ա Ռ Ի Կ

Ա՛յ նորատունկ իմ ծառիկ,
Չիւեր արա զեղեցիկ,

Արմաա՞ձգէ դու հողում,
Որ չըշարժէ քեզ մըշիկ։

Ես ամեն օր քեզ համար
Ջուր կըբերեմ սափորով,
Եւ քո տակը կըփորեմ,
Որ զօրանաս դու շուտով։



Ծաղիկ, տերև ու պտուղ
Թող զարդարեն քո ճիւղեր,
Նրանց վրայ թող երգեն
Անոյշ ձայնով սոխակներ։

Հաստապրո՛ւ քո բունը,
Այն ժամանակ փոթորիկ
Թող մունչէ, որոտայ,
Չի վնասիլ քեզ, ծառի՛կ։

---

48. ԾԱՌԵՐԻ ՎԻՃԸ

Ծառերը վիճում էին միմեանց հետ, թէ իրանցից ո՞րն է լաւը։ Կաղնին ասեց.—Ես բոլոր ծառերի թագաւորն եմ, իմ արմատը շատ խոր է թաղուած գետնի մէջ, բունս հաստ է, գագաթս մինչև երկինքն է հասնում, իմ տերևներս շատ զեղեցիկ են, և ճղներս կարծես երկաթից լինին ձուլած։ Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհում, մըրկի առաջ չեմ թեքւում։

Խնձորենին լսեց կաղնու խօսքերը և ասեց.—Չատ էլ մի պարծենար, սիրելի կաղնի, որ դու այդքան մեծ ես ու հաստ. դու այս ասա, թէ քո պտուղն ո՞վ է դործածում բացի խոզերից, իսկ իմ կարմիր ու սպիտակ խնձորները ամեն սեղանի վրայ փառաւոր տեղ ունին։

Լսում է մայրին, շարժում է փշոտ գլուխը և ասում.—Սպասեցէք մի քիչ, շուտով կըգայ ձմեռը և դուք երկուսդ էլ կըմերկանաք, իսկ ինձ վրայ կըմնան իմ կանաչ փուշերը։ Առանց ինձ՝ ցուրտ երկիրներում ապրել

անկարելի է. ինձանով մարդիկ տաք բնակարաններ են շինում և իրանց կրակը վառ պահում։

Այս վէճը լինում էր հիւսիսային ցուրտ երկրի ծառերի մէջ, որոնք մեր տաք երկրի բազմատեսակ պտղատու ծառերի մասին տեղեկութիւն չունին։ Մարդ իմանայ, ինչ կասէին մեր դեղձին ու ծիրանին, մեր ընկուզենին ու շագանակենին, մեր նռնենին ու թզենին, և բոլոր միւսները։

---

49. ԳԻՂՈՒՄԸ

Գիւղից վերև, ճանապի վրայ տերևախիտ մի ծառ կայ,
Անտառիցը նա զատւած, մարդու կացնից ազատւած,
Դեռ կանգնած է և շոգին հով է տալիս մշակին
Իսկ նրանից ոչ հեռու, մի լեռնային պարզ առու,
Դուրս գալով մութ ծըմակից՝ խոխոջում էր փրփրալից։
Սակայն նա չէր շատ էլ խոր, երբ գառնում էր ճիշտ կէսօր,
Եւ մենք տապից նեղանում, գնում էինք լողանում.
Ծաղում էինք, վազըզում գոյնզգոյն մանրիկ աւազում։
Եւ մեր ճիչը մանկական միանալով մի առ ժամ,
Այն վըտակի ազմուկին, խաղաղ, հանգիստ հովիտին,
Կենդանութիւն էր տալիս, ահա, որքան էր դիւր գալիս.
Երբ որ ակռոր խումբը մեր աղաղակով վազում էր։
Թիթեռնիկի հետից, որ թռչում էր թփերից.
Եւ միշտ յոգնած ժամանակ հանգչում էինք ծառի տակ։

---

50. ՊԱՐՏԻԶՊԱՆԻ ԿՏԱԿԸ

Մի ծերունի պարտիզպան շատ անգամ ասում էր որդուցը, որ ջանասէր լինին, բայց որդիքը ծոյլ էին և ականջ չէին դնում։ Երբ ծերունին զգաց, որ մահը մօտ է, կանչեց որդուցն ու ասաց.

—Սիրելի զաւակներս, իմ ունեցած չունեցածս այս տունն ու պարտէզն է. ուրիշ բան չունիմ որ ձեզ թող-

նեմ։ Բայց պարտիզումս իմ պապիցս ու հօրիցս մնացած դանձ կայ թաղած, եթէ լաւ փորէք, փորփրէք, անշուշտ կը գտնէք։

Ծերունու մահից յետոյ որդիքն սկսեցին փորփրել պարտէզը։ Փորեցին, փորփրեցին, ոչինչ չը գտան, բայց հետևեալ տարին ծառերն այնքան պտուղ տըւին, այնպէս առատ, որ երբէք տըւած չէին։ Այդ ժամանակ միայն հասկացան տղէքը, թէ ինչ գանձ էր իրանց պապերի թողածը։ Այնուհետև սիրեցին աշխատութիւնը և աշխատասիրութեամբ ապահով ապրելու հնարը գտան։

---

51. ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գութան, վարի, գութան,
Օրն էկել է ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրովէլ։

Քաշիր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր, քաշենք, վար անենք,
Ճիպոին արա, քշիր, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Պարտքատէրը գանգատ գնաց,
Բեհլուէն կըզայ, կըծեծի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
Կըբարկանայ, կանիծի։

Էն օրն էկան թովջի արին,
Հարկ են ուզում տէրութեան,
Ի՞նչ տամ կօտին ու բէգարին,
Վարի, վարի, իմ գութան։

Ձեռըս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Արի, գութան, վարի, գութան,
Օրն էկել է ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրովէլ...

---

52. ԵՐԿՐԱԳՈՐԾ

Ո՜հ, երկրագործ, երկրագործ,
Քանի սիրուն է քո գործ.

Արևը չըծագած՝ մաճն է քո ձեռքիդ, եօթը զոյգ եզ, զոմէշ լծած գութանիդ. ծրում ես, պատռում դու կոշտ ու խոպան, լեռներ ու ձորեր, անդ ու անդաստան։

Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի, հաճար ու վարսակ, բրինձ ու բամբակ։ Ծլում են, ծաղկում ճակտիդ քրտինքով քո վարած դաշտեր, որ լի էր փշով։

Ընցնում է գարուն, ոսկեզօծ հասկեր լցւում, ծածկւում են քո սիրուն արտեր, քամին փչում է, արտը տատանում, կարծես նոր-հարս է, հօրանց է գնում։

Հասնում է ամառ. մանգաղը ձեռքիդ, հնձում ես, հնձում, խուրձեր կապոտում, խուրձերը բարդ-բարդ սայլով ու ձիով կրում ես, բերում կալումդ դիպում։ Հաշան ես անում, կասում ու քամում մարդուր ցորենը տանըդ ամբարում, իսկ չոր գարմանը՝ ձմեռուան պաշար՝ անասնոց համար մարագդ լըցնում։

Եւ երբ փչում է ցրտաշունչ ձմեռ, խրճիթում նըստած, քո խոփն ես սրում, արօր ու գութան սարքում, պատրաստում, և գարնան գալուն նորից սպասում։

Ո՜հ, երկրագործ, երկրագործ,
Քանի սիրուն է քո գործ։

---

53. ՀԱՅՕԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,

Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
Առաջ տարէք արօրը։
Վարը վարենք, ակոս ծրենք,
Ցոր ակոսներ հողի մէջ,
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Խուրձեր դիզենք կալի մէջ։
Կըգայ ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կանցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունինք,
Երբ լիք լինի մեր հօրը։
Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը,
Թող՝ էլ չասեն մեր դրացիք,
Ծոյլ են Հայի եզները։

---

54. ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար, ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր,
Արեգակը ծովի ծայրէն ծագել է,
Ջերմուխիւնը ձորն ու դաշտը փուել է։
Ընկերները վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարի գերանդիով հնձեցին։
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանդչիլ կաղնիների հովումը։
Ա՛յ մարդ, վեր կաց, սառը ջրով լըւացիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր,
Քանի հով է, հունձդ հնձէ արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։
Խուրձդ կապէ, բարդդ բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի։
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը։
Ի՞նչ ես պատկել, ինչ ես քնել, սիրական,
Արեգակի շողը հասաւ մեր դրան,

Մի ծուլանար, ժամանակը խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ։

---

55. ԱՄՊԵՐ

Ամպեր են վազում բարձր լեռներից խիստ քամու ձեռից, փախչում, գնում են, կարծես խրտնում են ծարաւ արտերից։

Կացէք, ա՛յ ամպեր, ինչո՞ւ էք փախչում, անձրև չէք թափում, մեր ծարաւ արտեր՝ օրեր համրելով՝ ձեզ են սպասում։

Քամի, դու քամի, խղճա արտերին, թող այդ ամպերին. թող կանգնեն, թափեն անձրևի շիթեր, ջրեն մեր արտեր։

Քամին հանդարտուեց, մեղմ անձրև թափեց, արտերը ջրեց։ Ամպը բարձրացաւ, ցօղուն արձակեց ու հասկեր բռնեց։ Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց, խնդաց ու ասաց.—

Փառք քեզ, ով Աստուած,
Որ տըւիր մեզ հաց,
Շրթողիր քաղցած։

---

56. ԵՂԻԱՅԻ ՀԱՆԳԸ

Մէկ օր Եղիան վերևից կանչեց և մարդկանց յայտնեց, թէ այսուհետև ձեզ չեմ օգնելու, անձրև չեմ տալու։ Այս ասաց թէ չէ՝ երկինքը կապուեց, էլ ոչ մի կաթիլ անձրև չըկաթեց։

Եւ այնուհետև աղբիւրը լռեց, առուն ցամաքեց, վարդը թառամեց, անտառը դեղնեց, դաշտը սևացաւ, արտը չորացաւ, անասուն և մարդ, թռչուն ու գազան, անջուր մնալով՝ ուշաթափ եղան։

Եղիան որ տեսաւ, թէ ինչ բան եղաւ, ծիծաղը եկաւ և ծիծաղեցաւ... բայց ինչպէս ծիծաղ... այնպէս որո-

տաց, որ երկինք գետինք-թնդաց, դղրդաց. սև ամպերն իրար այնպէս զարկւեցին, որ փայլակ, կայծակ, շանթեր հանեցին։ Երկինքը մթնեց, յորդ անձրև թափեց, նըւազածներին թրջեց, ողողեց և ուշքի բերեց։

Եւ այնուհետև սար ու ձոր զարթնեց. աղբիւրը քըլքըլաց, առուն քըչքըչաց, շուշանը ծաղկեց, արտը կանաչեց, արտուտը երգեց, աքլորը կանչեց, հաւը ձու ածեց, մաքին գառ ծնեց, գառը մորթեցինք Եղիայի համար, որ մեզ խնայի, էլ հանաք չանի։

---

57. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՋՐԵՐ

Սարերի ձիւնը դեռ չի վեր կացել,
Բայց դաշտ ու հովիտ փթթել են, բացւել.
Ձիւնի ջրերը ուրախ քրքիջով
Ցած են գլորւում հովիտի մէջով,
Եւ ամեն մարդու համբաւ ցանկալի,
Ամեն մանուկի աւետիս տալի։

—«Ահա կենսաբեր գարունը եկաւ,
Նոր հոգի, նոր կեանք մեր երկրին տւաւ.
Դուք էլ, մանուկներ, նոր եռանդ առէք,
Գարնան ծաղկի պէս դուք էլ ճոխացէք»...

---

58. Կ Ա Ր Կ Ո Ւ Տ

Կանաչ անդաստանը ծփում է հանդարտ,
Հազիւ վրայից քամի է անցնում,
Գիւղացին զբւարթ, ուրախ ու հըպարտ
Նայում է արտին և չի կշտանում։

—«Դարձեալ մի ամիս քրտինք կըթափեմ,
Մինչև որ սիրուն իմ արտը հասնի,
Աղբիւրի վճիտ ջրով կըջրեմ,—
Եւ ոսկի հունձը պատրաստ կըլինի։

Բայց ահա, մըրրիկը կուտակեց ամպեր,
Սև ամպերն ահեղ ձայնով գոռացին

Եւ տեղից կարկուտ... Ո՜հ, ափսոս հասկեր.
Ջարդւած զօրքի պէս գետին փռւեցին...

Աստւած իմ, այս ինչ սև օր ինձ մթնեց,
Անբախտութիւնը իմ մէջքը կոտրեց.
Յոյսեր, չարչարանք,—բոլորը կորաւ,
Իմ սիրուն արտը կարկուտը տարաւ։

---

59. ԱՆՏԱՌՆ ՈՒ ՎՏԱԿԸ

Փոքրիկ վտակը, որ խոխոջելով հոսում էր խիտ անտառի միջով, մի օր սկսեց տրտնջալ իր վիճակի վրայ։

—Ի՜նչ դժբախտ եմ ես, ասում էր ինքն իրան. այս զզւելի անտառը ծածկում է ինձանից պարզ երկինքը և թոյլ չի տալիս, որ արեգակի պայծառ ճառագայթները և զովարար քամին ազատ խաղան ջրերիս հետ։ Ո՜ւր էր թէ մարդիկ կտրատէին, ոչնչացնէին այս վիթխարի անտառը։

—Սիրելի զաւակս, պատասխանեց անտառը,—դու շատ անփորձ ես և դեռ չես հասկանում որ իմ ստւերն է պաշտպանում քեզ և կենդանի պահում, եթէ ոչ՝ արևն ու քամին քեզ կըչորացնէին։

---

60. Ա Ր Ի Ւ Կ

Լերկ քառաժայռից մի վճիտ առւակ
Բղխում է մեղմիկ խոխոջ հանելով,
Ծոր-խոր ձորերով հոսում են արագ
Փրփրած ալիքներն արծաթի փայլով։

Առաջ է վազում քաղցր շըշուկով
Դաշտեր, անտառներ և մարգեր մանում,
Եւ քըչքըչալով՝ վեր-վար ոռոնելով՝
Գարնան կենսառու գալուստն աւետում։

61. ՀՆՁԻՈՐՆԵՐ

(Մանկական խաղ)

Ահա եկաւ խոտ հարողը,
Ուսին դրած գերանդին,
Բոլոր խոտը սա հարել է,
Բան չի թողել մեր հանդին։

—Ա՛յ խոտ հարող, ասա տեսնենք
Դու ի՞նչպէս ես խոտ հարում.
—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ խոտ հարում.

Հէպ, հօպ,
Հէպ, հօպ։

—Ա՛խ, ինչ լաւ է, եկէք սովրենք
Մենք էլ այսպէս խոտ հարենք

Հէպ, հօպ,
Հէպ, հօպ։

Ահա եկաւ արտ հնձողը,
Ձեռքին փայտի մատնոցները,
Պատրաստել է սուր մանգաղը
Պէտք է հնձէ մեր արտերը։

—Հնձող եղբայր, ասա տեսնենք
Դու ի՞նչպէս ես հունձ անում.
—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ հունձ անում.

Հէպ, հօպ, հէ՛պ...
Հէպ, հօպ, հէպ...

—Ա՛խ, ինչ հեշտ է, եկէք սովրենք,
Մենք էլ այսպէս հունձ անենք,

Հէպ, հօպ, հէպ...
Հէպ, հօպ, հէպ...

---

62. ՏԻԿՆԻԿԻ ՀԱՐՒ ԱՆԻՔ

Հռիփսիկը նշանել էր իր մի աղջիկ տիկնիկին,
Պէտք է լինէր բարի ու բաժինք պէտք է զուգէր հարսնացուին.
Օր ու գիշեր աշխատում է մեր Հռիփսոն անդադար,
Ինչեր ասես որ չի կարում կտորներից անհամար.
Տարիներով տանը պահած չըթի պատառ չըմնաց,
Ինչ կար մաշած կամ կիսամաշ, բաժինքումը կուլ գնաց.
Ահա եկան խնամիքը՝ Անօն, Եղօն ու Նուշին,
Պիտի տեսնեն նոր բաժինքը, որ պատկեն տիկնիկին.
Խնամիքը նստուեցան տան գաւթումը ծալապատակ,
Հռիփսոն նրանց թէյ է տալիս ինքնաեռից անյատակ։
Կոտրած շիշ է ինքնաեռը, բաժակները խեցգետներ,
Շաքարի տեղ քարի մանրուքնք, բայց խմում են մեր հիւրեր։
Բաւականին օդ կուլ տըւին, կում անելով թէյի տեղ,
Իրանց օրում չէին խմած այսպէս եփած թէյ համեղ։
Պռօշները լըպստելով՝ թէյի սարջը վերցրին,
Տեսակ-տեսակ քաղցրաւենիք կոտրած խոնչով մօտ բերին.
Մի խնձոր էր մաս-մաս արած, ինչպէս հաղորդ փրկուԹեան,
Գդալիկն էլ ալի շիւղ էր, նրանով կերան քաղցրացան։

—

—Բաժինքը բե՛ր, խնամի Հուռի,—ասաց մէկը նրանցից,—
ՈւԹ տարեկան պառաւ Եղօն, որ մեծն էր ամենից։
Հռիփսիկը դրաւ մէջ տեղ մի բաւական մեծ բօխչա,
Առաջ հանեց ցանցով գործած մի մատնաչափ խալիչա,
—Շատ սիրուն է, ասաց Եղօն, զալար կենան մատները,
Իսկ Աննիկը չըհաւանեց, Թուխ են, ասաց, Թելերը.
Բայց կողէնքին հաւանեցին, խաս կտորից էր կարած,
Բալիշները բմբլով լցած, յուլունք կոճակներ արած.
Մախմուր երեսը մուԹաքի, աբրէշումի վինջերը,
Նախշուն վերմակը աւլասի խոպատ տարաւ խելքները։
—Ապրի՛, ապրի՛ Հռիփսիկը,—մեր խնամիքն ասացին,
Ամեն կտոր վերցընելիս «բարով մաշեն» կրկնեցին.
—Տեսէք, ասաց Հռիփսիկը, դեռ էլի կան շատ բաներ.
Մէջ տեղ բերաւ հազար ու մէկ մանր-մանր կտորներ։

Սիպտակեղէն ունէը կարած մի դիւժինից էլ աւել,
Եւ այդ բոլորն ինքն իր ձեռքով լուացել էր, օսլայել։
Քանի՛ թղթի արկղիներում բաներ ունէը դարսուտած,
Ընծաթեղէն ու ոսկեղէն, բայց ոչ մետաղ ժանգոտած.
Սոխի կճպից ոսկեղէնն էր, սխտորինից արծաթին,
Փող էլ ունէը սոխի կճպից տասը ոսկի շատ դեղին...

—

—Դէ բեր, դէ բեր մեր հարսնացուն,
Տեսնենք ինչպէս ես դուգել։
Տեսան հարսին, շատ սիրուն էր, բայց սկսան շշնջել.
Ինամիքոնց մէկն ասում էր,—դեղ է քսել երեսին,
Միւսն ասում էր,—ոչ, երեսը դէմ է արել կրակին։
—Տեսէք, ասաց Հռիփսիկը, ահա աղջիկ փաշ-փաշա,
Ունքերը խաս աբրէշում է, նախշուն աչքերը շուշա.
Կրծքի քորոցն ադամանդ է, իսկ ճակտինը՝ դուստ ոսկի,
Ականջի օղերը զմրուխտ են, մատնիքները փիրուզի.
—Շատ մի՛ գովիր, քորոցներ են տեսակ տեսակ գոյներով,
Անցեալ օրը չարչի Գէւոն տասն էր տալիս մի հացով...



—Բաւական է, բերէք տղին, նատեցրէք միասին,
Նարօտ բերէք կանաչ-կարմիր, կապենք վզերն երկուսին.
Եղան հանեց իր ծոցիցը մեր տիկնիկի նոր փեսան,
Մէկն իր ձեռքը դուռնա շինեց, «դռւ-դռւ» կանչեց բար-
ձրաձայն...

Հաւքւեցին աղջիկ, տղայ, երգ երգեցին, պարեցին,
Ինչպէս կարգն էր հարսանիքի՝ պակաս բան չըթողեցին։

—

Ծաղացէք, ով մանուկներ, շատ խաղացէք,
Միայն տիկնիկ և թէ բաժինք ձեր իսկ ձեռքով շինեցէք...



63. ՏԱՏԻԿԻ ՀԻՔԻԱԹԸ

Տատիկը գնաց պահարանից խնձորները բերաւ թոռնների համար, ամեն մէկին մի խնձոր տըւաւ, մէկն էլ իր համար դրաւ սեղանի վրայ, ու ինքն սկսեց իր գուլբան անել.

—Շուտ, տատիկի խնձորն ինչ լաւն է, է, ասեց Սուրէնը։

—Տատիկն ինչ կանէ խնձորը, պատասխանեց Աշոտը։ Ահա վաթսուն տարի է, ինչ որ նա խնձոր է ուտում։

—Ի հարկէ, տատիկի կերածը կորած է, աւելացրեց Մուշեղը։ Նա իսկի ատամները էլ չունի, ինչպէս պիտի ուտի։

Այս ամենը լսում էր տատը, տեսնում էր որ իր թոռնները մի խնձորի համար պատրաստ են տատիկի գուլպն ու խնամքը մոռանալ, նա փոխանակ խրատելու՝ ասեց.

—Բաւական է, երեխէք, ականջ դրէք, ես մի հէքիաթ պիտի պատմեմ, ով որ լաւ լսի, ես իմ խնձորը նրան պիտի տամ։

Այս որ լսեցին թոռնները, շատ ուրախացան, որովհետև շատ էին սիրում տատիկի հէքիաթները, իսկ հիմա աւելի էլ ուրախացան, քանի որ հէքիաթից յետոյ խընձորը էլ պիտի ստանային։

—Մի քաղաքում ապրում էին մայր ու որդի։ Նրանք վանդակում պահում էին մի սիրուն թռչնիկ, անունը Դեղձանիկ։ Ամեն առաւօտ Դեղձանիկը երգում էր և ուրախացնում թէ մօրն ու որդուն և թէ հարևաններին։ Նա այնպէս ճըլուրլում ու ծըլուրլում էր, այնպէս դայլայլում, որ աղբատն իր աղքատութիւնն էր մոռանում, սգաւորն իր տխրութիւնը, քաղցածն ու ծարաւը հաց ու ջուրն էին մոռանում, յոգնած ննջողները՝ քունն ու յոգնածութիւնը։ Որ ասեմ ամեն հիւանդ առողջանում էր, ամեն տկար զըւարթանում,—սուտ չեմ լինիլ ասած, որովհետև ուրախանում էին ամենքը, իսկ ուրախութիւն զգալը ամեն տկարութեան միակ դեղ ու դարմանն է։

—Եթէ այդպէս է, տատիկ, մենք կաշխատենք միշտ ուրախ լինել, ասեց Աշոտը և միւսներն էլ ձայնակցեցին նրան, ասելով.—Այո, այո...

—Ուրախ լինելը շատ լաւ բան է, ասեց տատիկը, բայց այնքան էլ հեշտ չէ։ Դուք այն ժամանակ պիտի այնպէս բան չանէք, որ նա առիթ գտնայ ձեր տխրութեանը։ Ինչևիցէ, մենք հիմա մեր հէքիաթն ասենք։ Դեղձանիկը որդուն էր, որի անունը Ըրշակ էր. նա էր կերակրում, խնամում։ Մայրն ամեն առաւօտ մի կտոր շաքար էր տալիս Ըրշակին որ նա տանի Դեղձանիկին տայ իր ձեռքով։ Ըրշակն էլ ամեն օր շաքարի կտորը թրջում էր կաթի մէջ և տալիս Դեղձանիկին։

Այսպէս անցաւ մի քանի ժամանակ, մէկ էլ յանկարծ հիւանդացաւ սիրուն թռչնակը, էլ չերգեց և լռեց յաւիտեան։ Մեռաւ խեղճը, որը ու պանդուխտ, զերութեան մէջ, վանդակում փակուած։

Ամենից շատ տխրեց Ըրշակը. նա այնպէս կսկիծ

տուաը թրպրտաց, թափ տըւաւ թևերը, դուրս թռաւ բնից, բարձրացաւ վեր ու վեր և սկսեց երգել բարձրաձայն.—ձիւ, ճիւ, ճիւ, ճիւի—ւիւի, ճիւի—ւիւի, վուտ—վուտ—վուտ, ճր՜ռռռ... որ մեր լեզուով կընշանակէ, «ինչքան լաւ է առաւօտը վաղ վերկենալը և ինչքան դուրեկան թարմ օդ ծըծելը։

Երկրորդ ճառագայթը նապաստակի վրայ ընկաւ։ Նապաստակն ականջները խըրշացրեց նայեց դէս ու դէն և յատկըտելով մտաւ ցօղաթաթախ կանաչկուտը և սկսեց նախաճաշիկ անել մեղրածոր խոտերով։

Երրորդ ճառագայթը հաւաբունն ընկաւ։ Աքաղաղը թափ տըւաւ թևերը և կանչեց. ծուղրուղո՜ւ... ղո՜ւ—ղո՜ւ—ղո՜ւ։ Կանչեց աքաղաղը հաւերին, որ ցած իջնեն թառերից և առաւօտեայ նախաճաշիկն անեն։ Հաւերը ցած թռան, կըռկռացին և աքաղաղի հրաւէրով սկսեցին բըջրուջ անել։ Քիչ յետոյ տանտիկինը դուրս եկաւ և շաղ տըւաւ նրանց առջև զոզնոցն ածած կուտը, որի վրայ թափւեցին բոլոր հաւերը և իրար բերնից խլելով՝ բուշերը լըջցրին ցորենի և գարու հատիկներով։

Չորրորդ ճառագայթը փեթակի վրայ ընկաւ։ Մեղուները տաքացան և դուրս ընկնելով՝ դէս ու դէն թռան տզտզալով՝ որ մեղրածոր ծաղիկներից իրանց անունն ստանան։

Հինգերորդ ճառագայթն ընկաւ մի ծոյլ մանուկի անկողնու վրայ և սկսեց ուղղակի նրա աչքերը ծակծըկել, բայց նա շուռ եկաւ միւս կողքի վրայ և նորից քնեց։

---

66. Ա Ր Ե Ւ

Արև, արև, դու մեզանից
Երբ հեռացար դէպ հարաւ,
Ձմեռն եկաւ և ամեն ինչ
Յափրշտակեց ու տարաւ։

Աստած սիրես՝ էլ մի գնար,
Մի թողնիր մեզ քեզ կարօտ,
Քեզ կըպատունք, քեզ կըդովենք
Միշտ իրիկուն առաւօտ։

Որքա՜ն գոհ ենք, որ դու բերիր
Գարնան անուշ եղանակ,
Ա՜խ, երանի՛ գարուն լինի
Տարին բոլոր ժամանակ։

Տես, թէ ինչպէս փըթըթել են
Ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Տես թէ ինչէս տարածւել է
Ամենայն տեղ անուշ հոտ։

Քեզ են գովում թռչնիկները
Իրենց քաղցը դայլայլով,
Հովիւը իր մեղմ սրինգով,
Հօտաղն անուշ հօլօլով։

Չէ, արև ջան, էլ չըգնաս,
Էլ չըթողես մեզ կարօտ,
Գնա քնիր գիշերները,
Առաւօտը եկ մեզ մօտ.

---

67. ՏՅՈՒՐ ԵՐԵԽԱՑ

Երբ որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Աքլոր, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,
Չի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով,
Գնացին իրանց գործին ըշտապով։

Միայն ծոյլ տղան չըգնաց դպրոց,
Գիրքը շըպրտեց ու փախաւ փողոց,
Իրիկուն դիմն էլ չհետ գարձան ուրախ,
Միայն տղան էր տրտում, գլխակախ։

---

68. ԹՌՉՈՒՆՆԵՐ

Այգումը կային շատ ծառեր, պտուղներ և ծաղիկներ։ Հաւ եղանակ էր. անձրև չըկար, արևը տաք։ Որդերը դուրս սողացին հողից և ուրիշ տեղերից և-մտան խնձորների, տանձերի և կեռասների մէջ. լըպրծուկներն սկսեցին ուտել բանջարեղէնը և տերևները։ Թիթեռները, բզէզները, ճանճերը, իշամեղուները, կրէտները և մօծակները թռչում էին ծաղիկների և ծառերի շուրջը, մտնում էին ծաղիկների մէջ, կեղևի տակ և փճացնում ամբողջ այգին։ Այգեպանն սկզբումը նրանց չէր նկատում, նրանք բոլորն էլ, այնքան փոքր են, որ տերևները և ծաղիկները նրանց ամենքին ծածկում են։ Նա տեսաւ, որ այգին փճանում է, պըտըտում է այգու մէջ և ուր նայում է, ամեն տեղ տեսնում է բզէզները, թիթեռները և ճրճիները։ Եւ այնքան շատացել էին, որ նրանց դէմն առնելու ոչ մի հնար չունէր։

Հէնց այդ ժամանակ որտեղից որ էր թռչունները եկան և սկսեցին այգումը երգել։ Ծառերի վրայ բները շինեցին իրանց համար և բնակեցին այնտեղ։ Ձու ածեցին, ձըւաներից ձագեր դուրս եկան։ Փոքրիկ թռչունները իրանք չէին թռչում կերակուր գտնելու. նրանց համար ծնողներն էին կերակուր բերում։ Սակայն ձագուկներն ուրիշ բան չէին սիրում ուտել, բացի որդերից, ճրճիններից, ճանճերից և բոլոր վնասակար միջատներից։ Ծեր թռչուններն իրանք էլ նոյնն էին ուտում, ինչ որ իրանց ձագերին էին տալիս։

Այգեպանը նկատեց, որ հէնց որ այգում բնակեցին թռչունները և ձագեր հանեցին, խնձորներն աւելի քիչ էին որդնոտում և ծաղիկներն էլ չէին փճանում։ Սրա համար նա սիրեց թռչուններին և նրանց ներկայութիւնն օգտակար համարեց այգումը։

---

69. ՊԱՀՊԱՆԵՑԷՔ ՁԵՐ ԲԱՐԿԱՄՆԵՐԻՆ

Ձրանսիայումը դաշտերի և անտառների մէջ սիւներ կան տնկած. իսկ նրանց վրայ կպցրած են տախտակներ, որոնց վրայ գրւած են.—

«Ողնին կերակրւում է մկներով, խըխունջներով և որդերով, որոնք շատ վնասակար են։ Ձըսպանէք ողնիներին։

«Խլուրդը միշտ միջատներով, որդերով ու թրթուրներով է կերակրւում։ Նրա ստամոքսում բուսեղէն կերակուր չի գտնւած։ Ձըսպանէք խլուրդներին։

«Թռչունները չափազանց մեծ քանակութեամբ թրթուրներ ու միջատներ են ոչնչացնում։ Ձրւեր ու ձագեր չըհանէք թռչունների բներից. չաւերէք թռչունների բները։ Խրատեցէք ձեր զաւակներին որ այդպէս բան չանեն»։

(Իսկ ճնճղուկներին, այսինքն տանու ծտերին՝ պէտք է կոտորել, որովհետև նրանց ւաճ վնասն աւելի շատ է քան թէ օգուտը)։

---

70. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Երբ տեսնում եմ խաղալիս
Անմեղ անհոգ, մանուկները,
Իսկոյն միտքս են գալիս
Իմ մանկութեան քաղցր օրերը։

Օր ու գիշեր անհանգիստ
Խաղում էի անդադար,
Աշխարհային հոգ ու վիշտ
Անյայտ էին ինձ համար։

Իմ ընկերն էր ամեն ինչ—
Թէ շնչաւորը թէ անշունչ,
Ձրկար համր և ոչինչ—
Մի բան չըկար անմռունչ։



Աղբիւրն ինձ հետ խօսելիս՝
Լսում էին քարերը,
Անտառն իր մօտ կանչելիս՝
Թնդում էին ձորերը։

Բարի էին ամենքը,
Ձրկար մի հետք չարութեան,
Նոյն իսկ օձն ու կարիճը
Տիպար էին բարութեան։

Քանի անգամ եմ բռնել
Օձի պոչից ու գլխից,
Բայց նա սուս ու փուս անցել
Հեռացել է ինձանից։

Ի՞նչ էր երկիւղ կամ ամօթ—
Ձրդիտէի բնաւին,
Ամենքն էին ինձ ծանօթ,
Ես բարեկամ ամենին։

Իմ առաջին ծանօթը
Մեր կեղծաւոր փիսոն էր,
Շատ անգամ անամօթը
Ձեռիս հացը կըխլէր։



Նրան նման չէր Ջանգին՝
Մեր իմաստուն մեծ շունը,

Նա իմ դայեակն էր անգին,
Չեմ մոռանում անունը։

Ինչպէս արթուն պահապան՝
Կշտից ոչ էր հեռանալ,
Երբ մօտս էր այդ հսկան,
Ո՞վ կարար ինձ մօտենալ։

Բայց և օտար շները
Ինձ վրայ չէին հաչում,
Մեղաւորն ու անմեղը
Զատ լաւ էին ճանաչում։

Զին ինձ բացի չէր տալիս,
Թէկուզ բռնէի ագին,
Նա, որ մեծին տեսնելիս՝
Պատրաստ ունէր աբացին։

Այսպէս եկն էլ կամ կովը,
Որ շատ էլ չէր հիւրընկալ,
Երբ կանցնէի մօտովը,
Չէր յանդգնիլ հարու տալ։

Այս երջանիկ վիճակը
Շուտով անցաւ հեռացաւ,
Վարդանման աշխարհս
Փուշ ու տատասկ փոխեցաւ։

---

71. ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ

Գիւղումը կար մի տուն ծղնօտածածկ տանիքով, նրա մէջ կար մի բոյն, ուր ապրում էին ծիծեռնակի ձագուկները, որոնք դեռ չէին կարողանում թռչել։ Հայրն ու մայրը թռչում էին դաշտը կերակուր գտնելու, բայց այնտեղ երկար չէին մնում, վերադառնում էին շուտով և իրանց ձագուկների համար կերակուր էին բերում։

Մի անգամ գիւղացին՝ շատ-շատ տուն մտնելիս՝ այնպէս պինդ խփեց դուռը, որ տանիքը շարժուեց և ծիծեռնակի բոյնը վայր ընկաւ ձագուկների հետ։ Ծնողներն այդ ժամանակ դաշտումն էին։ Ձագուկները ծլւծլւացին,

մրսում էին, բայց բոյնը չէր ջարդուել, տանիքը ցածր էր։

Մայրը հեռուից լսեց զաւակների ճիչը և շտապով թռաւ դէպի տունն, իսկ հայրը տանից հեռու էր։ Մայրը չզգիտէր թէ ինչ անէը ձագուկներին։ Նա դէս ու դէն ընկնելով՝ մի տեղ էր փնտրում, որ ձագուկներին փոխադրի այնտեղ։ Յանկարծ մի նոր անբախտութիւն։ Կատուն եկաւ. նրա աչքերը փայլում էին կրակի պէս. ուզում էր խեղդել թռչնիկներին։ Կատուի չար միտքն իմանալով՝ մայր ծիծեռնակը յարձակուեց կատուի վրայ, սուր կտուցովը բռնեց ղլխիցը և թեներովն այնպիսի հարուածներ հասցրեց, որ կատուն ուշքը կորցրեց։ Այդ միջոցին վրայ հասաւ և ձագուկների հայրիկը։ Նա իսկոյն հասկացաւ բանի էութիւնը, մի բան շընչեց մայրիկին, իսկ ինքը վերև թռաւ և գոչեց, ծլւ—ծլւ—ծլւ... դռլիկ—դռլիկ... Միւս ծիծեռնակները հասկացան որ այդ նշանակում է, գողերը, գողերը... օգնեցէք։

Երկու րոպէ չանցած, շատ ծիծեռնակներ եկան խմբովին։ Սկսեցին պատերազմ։ ձըչով, ազմուկով բոլորը մէկէն յարձակուեցին կատուի վրայ, կտցահարեցին և թեերով հարուածներ տըւին նրան։ Կատուն չզգիտէր թէ ուր գնայ և ինչպէս փախչի, նա մլաւում էր, պաշտպանւում էր թաթիկներով, բայց անօգուտ. վերջը խորամանկութիւն բանեցրեց, ոտները ձգեց և ձևացաւ մեռած։

Ծիծեռնակները կարծեցին թէ նա սատկեց, թռան գնացին։ Այդ ժամանակ կատուն վեր կացաւ սուս ու փուս և հեռացաւ ամօթով։

Այս տեսարանին ներկայ եղող մարդիկը վերցրին թռչնիկներին, տարան մի ուրիշ դատարկ բոյն։ Ծիծեռնակներն ուրախացան և ճըչալով թռան կերակուր բերելու զաւակների համար։ Ծնողները յետոյ սովրեցրին նրանց թռչել, միջատներ բռնել և գոչել՝ ծլւ—ծլւ։ Ութ օրից յետոյ թռչնիկներն արդէն գիտէին այն բոլորը, ինչ որ նրանց հարկաւոր էր.

---

72. ԾԻԾԵՌՆԱԿԻ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը բոյն է շինում,
Ե՛ւ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջւան բոյնն էր յիշում։

Մէկ անգամ էր նա բոյն շինել,
Եւ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ վերազարձին՝
Բոյնն աւերակ էր գտել։

Այժմ նորից բոյն էր շինում,
Ե՛ւ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջւան բոյնն էր յիշում։

Նա յիշում էր անցած տարին
Իր սրնուցած ձագերին,
Որոնց ճամպին յափշտակեց
Ըրիւնաբբու Թշնամին։

Բայց նա կրկին բոյն էր շինում,
Ե՛ւ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջւան բոյնն էր յիշում։

---

73. ՄԻ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Առաջ, շատ առաջ, երբ աշխարհիս վրայ ջրհեղեղ եղաւ, և Նոյի տապանն սկսեց լողալ ջրերի վրայ, չար ոգին մտաղրեց խորտակել տապանը և ջրասոյզ անել նրա մէջ եղողներին։ Սրա համար նա մուկ դարձաւ և տապանի ամենահեռու անկիւնում փայտը կրծելով՝ բաց արաւ մի ճեղք, որով ջուրն սկսեց ներս թափել։ Բարեբախտաբար օձը ժամանակին նկատեց այդ վտանգը, և

արագ սողալով՝ պոչը կոխեց ճեղքի մէջ։ Այդպէս արգելեց նա ջրի մուտքը մինչև ջրհեղեղի վերջը։

Տապանը իջաւ Մասիս սարի վրայ և նրա մէջ եղողները ազատեցին խեղդուելուց։

Այն ժամանակ Աստուած կանչեց օձին և ասեց նրան.

—«Որովհետև դու ազատեցիր մարդկային սերունդը, դրա փոխարէն ես կրտամ քեզ քո սնունդի համար այն կենդանին, որը կուզենաս դու»։

Օձը պատասխանեց.

—«Տէր, ինձ ժամանակ տուր, որ ես իմանամ թէ ո՛ր կենդանու արիւնն է աւելի համեղ։

Աստուած թոյլ տուաւ։

Այն ժամանակ օձը մոծակին ուղարկեց այդ բանն իմանալու։

Մոծակը թռաւ, բոլոր կենդանիների արիւնի համն առաւ և տեսաւ, որ ամենից քաղցրը մարդու արիւնն է։

Այսպիսի պատասխանով թռաւ նա դէպի օձը։ Բարեբախտաբար, ճանապարհին նրան պատահեց ծիծեռնակը և հարցրեց՝ թէ ո՛ւր է գնում։

Մոծակն ասեց։

—«Ես օձի հրամանով գնացի իմանալու, թէ ո՛ր կենդանու արիւնն է աւելի քաղցր, և գտայ որ մարդու արիւնն է ամենից քաղցր»։

Հէնց որ նա ասեց այս խօսքերը, ծիծեռնակը վրայ թռաւ և պոկեց նրա լեզուն արմատից։ Մոծակը այլ ևս չկարողացաւ արտասանել ոչ մի խօսք և թռաւ օձի մօտ։

Երբ որ Աստուած հարցրեց, թէ ո՛ւմ արիւնն է աւելի քաղցր, մոծակը միայն լըղլըղացրեց և ոչ որ չկարողացաւ հասկանալ, թէ ինչ է ուզում ասել։ Այն ժամանակ մօտեցաւ ծիծեռնակը և ասեց.

—«Տէր, մոծակն ասում է, թէ ամենից քաղցրը գորտի արիւնն է»։


Եւ ասաց Աստուած օձին.

—«Ուրեմն, թող գորտը լինի քո մշտական կերակուրը»։

Այնուհետև օձն սկսեց կերակրուել գլխաւորապէս դորտերով, բայց իմանալով ծիծեռնակի խորամանկութիւնը, յարձակուեց նրա վրայ և ուզեց խայթել, բայց ծիծեռնակը դուրս պրծաւ ու փախաւ, թողնելով օձի բերանում իր պոչի մէջտեղի մասը։

Այնուհետև ծիծեռնակը մնաց երկճղի պոչով։

Բայց մարդիկ այնուհետև պահպանեցին ծիծեռնակին, ինչպէս իրանց բարեկամին։




74. ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Մարտն անցաւ, հասաւ ապրիլ զեղեցիկ,
Հեռու աշխարհից եկաւ ծիծեռնիկ,
Դու բարով եկար, գարնան կարապետ,
Բուն շինողներից ամենից վարպետ։

Կռունկը թռաւ, գնաց վերևից,
Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներից,
Մէկ դու մնացիր ճընճղուկների հետ,
Սիրուն ծիծեռնիկ, գարնան կարապետ։

Պատուհանիս մօտ շինէ քո բունը,
Անուշ ճուռղով երգէ գարունը,
Չու ածա, հանէ զեղեցիկ ձագեր
Եւ մնա մեզ մօտ մինչև սեպտեմբեր։



75. Փ Ի Ղ

Մի հնդկաստանցի փղատէր վատ էր պահում իր փիղը. շատ բանեցնում էր և քիչ կերակրում։ Երկար ժամանակ համբերեց փիղը, իր զժգոհութեան նշանները շատ անգամ ցոյց տրւաւ, բայց երբ տեսաւ որ տէրն ուշադրութիւն չի դարձնում, մէկ օր էլ համբերութիւնը կորցրեց և սաստիկ բարկանալով՝ ոտի տակը ձգեց, սպանեց։ Տիրոջ կնիկը բոլոր երեխէքը հաւաքեց, փղի առջևն ածեց և ասեց լալով.—Դու սպանեցիր սրանց հօրը, կոտորիր և սրանց, էլ ով պիտի լինի սրանց պահողը։

Փիղը նայեց երեխաներին, և ամենից մեծ տղային վեր առաւ կնճիթովը և զգուշութեամբ նստեցրեց իր վրայ։ Սրանով ուզեց ասել. «Ես սրան լաւ կըպահեմ, թող սա էլ տիրութիւն անէ և լաւ պահէ ինձ»։

Եւ փիղը կատարեց իր խոստումը։

76. ԴԺԻԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

1

Մեծ քաղաքներից մէկում կենում էր իր զործին լաւ հմուտ մի կօշկակար, Օհան անունով։ Վարպետ Օհանն ինչքան ցանկանում էր հարստանալ, չէր լինում, չէր յաջողում։ Ինչ զործ որ տալիս էին, շատ զեկեցիկ կատարում էր, և գնողները շատ անգամ ասում էին, թէ նրա պատրաստած կօշիկները հարիւր տարի կըհադնւի։ Շատ պատւէրներ էր ստանում, ամենքը լաւ գին էին վճարում, բայց վարպետ Օհանը դարձեալ չէր կարողանում փող դիզել։

Սրա պատճառն այն էր, որ ամեն տարի վարպետ Օհանին Աստուած մի տղայ կամ մի աղջիկ զաւակ էր պարգևում և բոլոր երեխայքը մեծանում էին առողջ, զըւարթ և խաղում այնպէս, ինչպէս ձկները ջրի մէջ։

Իններորդ զաւակից յետոյ վարպետ Օհանի կինը մեռաւ և նա մնաց իր իննը երեխաների հետ որբ։ Սա հեշտ բան չէր։ Երեխաներից մի քանիսն արդէն դպրոց էին գնում, նա մէկին պէտք է մանգալ սովորեցնէը, միւսին զրկած մանածէը, մէկէլին կերակրէը իր ձեռքով, չորրորդին մի բանով զբաղեցնէը, հինզերորդի երեսը լըւանար, մի խօսքով—բոլորի համար պիտի հոգս քաշէը, իսկ այս քիչ նեղութիւն չէ։ Երբոր անկողինները ձգում էին, ամբողջ սենեակը դառնում էր ննջարան և ամեն տեղ երևում էին մեծ ու փոքր շէկ ու թուխ գլուխներ, և խըլպլտում էին ձկների նման։ Վարպետ Օհանը մինչև կէս գիշեր նստում էր, շինում իր բանը և միևնոյն ժամանակ շոկում էր այս ու այն երեխայի վերմակը, որ բաց չըմնան, չըմրսեն և շատ անգամ ասում էր ինքն իրան։

—Աստուած ինձ իննը երեխայ է տըւել, փառը Իրան, ես պատճառ չունիմ տրտնջալու։ Բոլոր երեխայքս առողջ են, զեղեցիկ են և բարի։

2.

Ձրնայած վարպետի խեղճ ապրուստին ու նրա որդոց բաշած ամեն տեսակ զրկանքին, այնու ամենայնիւ նրանք օրէցօր ամրապնդւում էին, ցուրտը նրանց վնաս չէը տալիս ու ցամաք հացը շատ անուշ պատառ էը թւում։

Բայց ահա Զատկի թաթախման երեկոյին, երբ վարպետ Օհանը սաստիկ յոգնած՝ տուն էը վերադառնում, տեսաւ խանութներում զատկւայ համար շատ զանազան ընծաներ շարւած, մի քիչ կանգնեց ու մտածեց.

—Ես էլ պէտք է մի բան առնեմ երեխաներիս համար։ Բայց ինչ առնեմ, մինթէ բոլոր իննի համար միանդամից։ Ո՛չ, այդ իմ կարողութիւնից վեր է, եթէ միայն մէկի համար առնեմ, այն ժամանակ միւսները պիտի նախանձեն նրան։ Ո՛չ, թէ որ պիտի զըւարճանան, թող ամենքը միասին զըւարճանան։ Ես նրանց մի այնպիսի բան պիտի տամ, որ ոչ ոք նրանցից չկարողանայ խլել, մի լաւ ու թանգագին բան, որ երբէք չըկորցնեն։

Եւ վարպետ Օհանը մտնելով տուն՝ ասաց.

—Երեխէք, ամենդ էլ տաւն էք։ Գիտէք, այսօր Զատիկ է։ Այսօր պէտք է զըւարճանանք, չենք բանելու. այս երեկոն պիտի ուրախ անց կացնենք։

Երեխայքը վեր թռան տեղերից և վազեցին մօտը։

—Սպասեցէք, ես ձեզ մի լաւ երգ կըսովորեցնեմ, թող այդ երգը լինի ձեզ համար զատկւայ ընծայ։

Չէնց որ հայրը վերջացրեց այս խօսքը, երեխայքը նրան շրջապատեցին, փաթաթւեցին վզին, և խնդրեցին, որ երգէ խոստացած երգը։

Վարպետ Օհանը կարգով շարեց մանուկներին, իսկ երկու ամենափոքրիկներին նստեցրեց ծնկների վրայ։

—Դէ, այժմ հանդարտ։ Ես կերգեմ, իսկ դուք կըկրկնէք։

Եւ նա մեղմ ձայնով սկսեց երգել Զատկի երգը։

«Հողմը հնչեց ի հարաւէն,
Ազատւեցան դաշտը ձիւներէն,
Բերկրութիւն է ամեն տղոց,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Մեծերը ձայն էին պահում ու հետո ասում, իսկ փոքրերը դժւարանում էին և սխալւում։ Վերջապէս երգը բերան արին, և ինչքան ուրախացան, երբ տեսան, որ ամենքը խմբովին կարողանում են կանոնաւոր երգել։

Այսպէս ուրախանում էին նրանք իրանց միակ և անշուք սենեակում, մինչդեռ նոյն միջոցին չարացած էր և տխուր նոյն տանը իննը սենեակում մենակ ապրող մի պարոն։

3.

Ուրախ չէր իննը սենեակում մենակ ապրող աղան։ Նա մի սենեակումը նստում էր, երկրորդումը ճաշում, երրորդի մէջ պառկում, չորրորդումը ման էր գալիս, իսկ թէ միւսները ինչո՞ւ համար էին,— Աստւած գիտէ։

Այս երեկոյին հարուստ աղան ութերորդ սենեակումն էր նստել, և մեծ բանի վրայ էր. նա մտածում էր, թէ ինչո՞ւ նոյն օրւայ կերակուրները տասի տեղ իննն էր, մէկն ինչո՞ւ էր պակաս, և ինչո՞ւ էին անհամ բոլորն էլ. ինչո՞ւ սենեակների ջերմութիւնը սովորականից աւելի կամ պակաս էր մի-երկու աստիճանով։ Ահա այս տեսակ մտածմունքների մէջն էր, երբ նրա ականջը հասաւ վարպետ Օհանի երգելու ձայնը։ Աղան երկար ականջ դնելուց յետոյ՝ ասեց ինքն իրան.

—Պատճառն ինչ է արդեօք, որ ես այսքան հարուստ եմ և տխուր ու անմխիթար, իսկ աղքատ Օհանը միշտ ուրախ է և զրւարթ։ Մէկ գնամ տեսնեմ, դրանք ինչո՞վ են զբւարճանում այդքան։

Այսպէս մտածելուց յետոյ՝ աղան գնաց Օհանի մօտ։ Վարպետը նրան պատւով ընդունեց և նրան իր աթոռի վրայ նստեցրեց, որովհետև էլ ուրիշ աթոռ չունէր։

—Դու ես կօշկակար Օհանը, հարցրեց հարուստ աղան։

«Այո՛, ծառադ եմ։ Դուցէ կօշիկ էք ուզում դնել»։

—Ո՛չ, ես դրա համար չեմ եկել։ Դու շատ որդի ունիս։

«Այո՛, ծառադ եմ, շատ կան, Աստւած տըւել է չի խնայել, գոհանամ Աստուծոյ. ահա, ինչպէս տեսնում էք, կան մեծեր էլ, փոքրեր էլ։ Եւ այս բոլոր բերանները հաց են ուզում և Աստւած կերակրում է սրանց, փառք Իրան։

—Եւ այդ բոլոր բերանները միաձայն երգում են ուրախ ու զրւարթ, աւելացրեց աղան ժպտալով։ Գիտես ինչ կայ, վարպե՛տ, ես ուզում եմ քո երեխաներից մէկին վեր առնել և բախտաւորեցնել։ Ես կըրոշեցրեմ նրան և կըկրթեմ իմ հարազատ զաւակի նման, ինձ հետ արտասահման կըտանեմ, հարուստ աղա կըդառնայ և կօգնէ իր միւս եղբայրներին և քոյրերին։

4.

Զարմացաւ վարպետ Օհանը։ Իր զաւակներից մէկը կարող է հարուստ մարդ դառնալ, դրանից լաւ բան էլ ինչ կարող է լինել։

—Ընտրիր որին կամենում ես, ասաց աղան։

Վարպետ Օհանն սկսեց ընտրել, ասելով՝

«Սրա անունն Ըրամ է։ Սրան չեմ տալ. սա գեղեցիկ կարդում է, ժամումը փոխ է ասում, ժամանակին լաւ բահանայ կըդառնայ։ Սրանից փոքրը աղջիկ է. աղջիկը ձեզ հարկաւոր չէ։ Յետոյ գալիս է Տիգրանը. սա ինձ օգնում է. առանց սրան իմ բանը դժւար կըլինի։ Սա էլ իմ Օհանիկս է. իմ անուանակիցս է, չեմ կարող տալ։ Հիմա գանք սրան. սա էլ իմ Յովսէփն է. սա իր հանգուցեալ մօր սիրելին էր. եթէ ձեզ տամ, սրա մօր հոգին կըվշտանայ. իսկ այս երկուսը այնքան փոքր են, որ բարի աղային պէտք չեն գալ։

Այսպէս ջոկըջոկեց Օհանը իր բոլոր որդիքը, բայց

ոչ մէկին չըկարողացաւ ընտրել։ Յետոյ դարձաւ երեխաներին և ասեց.

«Երեխէք, ձեզանից մէկն ու մէկը Թող ընտրի. ով է ցանկանում աղա դառնալ, կառքերով պտրտել. ղէ, ասեցէք, ինչո՞ւ էք լռում, ով ուզում է, Թող ասէ»։

Որդիքը պատասխանի տեղ փաթաթւեցին իրանց հօրը և պինդ կպան. որը ձեռքը բռնեց, որը գոգնոցը, որը ոտը, որը Թաք կացաւ փեշերի ետևին, որ ոչ ոք չըփախցնէ։ Օհանը գրկեց ամենքին և ջերմ արտասուքները անձրևի պէս Թափեց ամենի գլխին, լաց եղան և բոլոր երեխաները և ուրուր տեսած հաւի ձագերի նման մտան իրանց ծնողի գիրկը։

—Ո՛չ, ազնիւ պարոն, շնորհակալ եմ քո բարեսըրտութեան համար։ Տեսնում ես ահա, որ ոչ ես և ոչ իմ զաւակներս յօժար չենք այդ բանին»։

—Տեսնում եմ, տեսնում, պատասխանեց հարուստը։ Դէ որ այդպէս է, գոնէ մի երգ երգեցէք խմբովին, և ահա դրա համար ձեզ մի հազար ոսկի։

5.

Վարպետ Օհանը իր կեանքում «հազար ոսկու» միայն անունն էր լսել, բայց աչքով տեսած չէր, իսկ այժմ իր ձեռքի տակին ունէր «Հազար Ոսկի»։ Երբ որ հարուստ աղան տուն գնաց, վարպետը տնտղեց ոսկիքը և ահ ու դողով Թաքցրեց պահարանում։ Այնուհետև նա լռեց, լռեցին և որդիքը. էլ չըկարողացան երգել։ Մեծ երեխաները լուռ ու մունջ նստեցին և փորբերին էլ շուտ-շուտ ասում էին, որ էլ կարելի չէ երգել, հարուստ աղան կլսէ և կընեղանայ։ Ինքը վարպետն էլ սկսեց տխրել և երբ հանդուցեալ կնոջ սիրելին խնդրեց, որ կրկնէ երգը, նա հրելով ասեց. «չըպիտի երգենք»։

—Ինչո՞ւ, հայրիկ, ինչո՞ւ չպիտի երգենք, հարցրեց երեխան...

Անմեղ երեխայի այս հարցմունքը վարպետ Օհանի աչքը կարծես քնած տեղից բաց արաւ։ «Իրա՛ւ, ինչո՞ւ

չըպիտի երգենք, ինչ եմ անում այս ոսկիքը, եթէ սա պիտի մեր ուրախութեանը վերջ տայ, և ո՛վ գիտէ ինչ փորձանքի մէջ պիտի ձգէ ինձ»։ Այպէս մտածելուց յետոյ, շուտով վերկացաւ տեղիցը, վեր առաւ ոսկիքը և վազեց աղայի մօտ։

«Ազնիւ պարոն, ասեց Օհանը, խնդրեմ ձեր փողերը յետ վերցնէք, որ ես կարողանամ երգել իմ ուզած ժամանակը։ Իմ երեխաների ուրախութիւնն ինձ համար աւելի թանգ արժէ»։

Այս ասելով՝ ոսկու քսակը դրաւ աղայի սեղանի վրայ և շուտով վերադարձաւ տուն այնպէս ուրախ, ինչպէս մի մեծ պարտքից կամ գերութիւնից ազատւած։ Եւ այնուհետև երգի ձայնը կրկին բարձրացրին խմբովին։

---

77. ԵՐԿՈՒ ԲՈՅՐ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգով դեռ արի, գլխով ալևոր.
Մեծ ծով էր պատել նրա աշխարհը.
«Ոսկի» ասացին գիտունք այն դարը։

Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ ագեղ, միւսը գեղեցիկ։
Մի օր ագեղը ասաց գեղեցկին.
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»։

Սիրուհը գնաց առաջից արտում,
Տգեղը հետքից ոխ պահած սրտում.
Հազիւ Թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած։

Կանչեց կիսամեռ սիրուհը ջրից.
«Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից,
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք...

—Էն առանց քեզ էլ կարող եմ ատանալ,
Ինձնից փրկուԹիւն դու բնաւ մի՛ յուսալ։

«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
«Կըտամ քեզ ոսկի պսակ պատուական»։
—Էն առանց քեզ էլ կարող եմ ատանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։
«Քոյրիկ, մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտունջ»։
Տգեղի սիրտը դառել էր լեռ քար,
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար։

Զկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան։
Ջրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ։
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան։
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զորացրեց նորա մարմնու դիփ հիւթը.
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ ագեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.
«Հնչէ՛, իմ տաւիղ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրըս խլեց իմ պսակ.
«Լսէ՛, իմ ծնող, լսէ սիրական,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան։
«Լսէ, ժողովուրդ, լսէ անխռով,
«Հարազատ քոյրըս գլորեց ինձ ծով»։
Միւս օրը դահլիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին.
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղքի համար Աստուած ինձ պատժեց»։



ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՀԷՔԻԱԹՆԵՐ, ԶՐՈՅՑՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

78. ԳԱՌՆԻԿ ԱՒՊԻՐ

1.

Մայրիկը մեռաւ, հայրիկը մեռաւ,
Մանուկն ու Մանուշ անտէր ճնացին.
Մարդիկ անկշտում, մարդիկ անիրաւ,
Փոքրիկ որբերին չըպահպանեցին։
Ելան, բռնեցին իրարու ձեռքից,
Անծանօթ ճամպով, տկլոր ու սոված,
Հեռացան, կորան էն չար աշխարհքից։

Երկու որբեր, քուր ու ախպէր, կորած գնում են հեռու. արևը վառ, ճամպէն երկար, ոչ աղբիւր կայ, ոչ առու։

Քոյրը մեծ էր. ոնց որ լինէր՝ կըհամբերէր արևին, բայց ախպէրը փոքրիկ էր դեռ, չէր դիմանում ծարաւին։

Գնում են, գնում, տեսնում են ճամպին կովի ոտնաւեղ, մէջը լիքը ջուր։

«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ, ինչ վըլի թողնես, խմեմ մի պուճուր»։

—Չէ, ախպէր ջան, չէ, դու կով կըդառնաս. կովի

կճղակի տեղից մի՛ խըմի, մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս, առաջներիս պաղ աղբիւր կայ հիմի։

Երկու որբեր՝ քուր ու ախպեր՝ գնում են, գնում են հեռու. արևը վառ, ճամպէն երկար, ոչ աղբիւր կայ, ոչ առու։

Գնում են գնում, տեսնում են ճամպին ձիու ոտնատեղ, մէջը լիքը ջուր։

«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ, ինչ կըլի թողնես՝ խմեմ մի պուճուր»։

—Չէ, ախպեր ջան, չէ, դու ձի կըդառնաս, ձիու սմբակի տեղից մի՛ խըմի, մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս, մօտիկ մի զուլալ աղբիւր կայ հիմի։

Երկու որբեր, քուր ու ախպեր, գնո՛ւմ են, գնում հեռու. արևը վառ, ճամպէն երկար, ոչ աղբիւր կայ, ոչ առու։

Գնում են, գնում, տեսնում են ճամպին գառան ոտնատեղ, մէջը լիքը ջուր. փոքրիկ ախպերը էլ չի համբերում, քրոջից թաքուն խմում է պուճուր։

Քոյրը մին էլ ետ է նայում, որ մի գառը մըղկըտալի իր ետևից տխուր մայում ու մայելով վազ է տալի։

—Ա՛խ, իմ Մանուկ, որբ ու անտէր, իմ անլեզու գառնիկ ախպեր, էլ ինց անեմ, ինչ անեմ ես...

Կանչում է խեղճ Մանուշն էսպէս, վայ է տալիս. լալիս, լալիս, բայց էլ ինչ անէր, բայց էլ ինց անէր...

Երկու որբեր, քուր ու ախպեր, գառն ու աղջիկ մոլորւած, հեռու հանդում, տխուր-տրտում գնո՛ւմ, գնում են կորած։

2.

Սոված ու ծարաւ գնում են, գնում,
Գնում են գնո՛ւմ, չըգիտեն թէ ուր.
Վերջապէս մի հով անտառ են մտնում,
Անտառի մէջին մի զանգակ աղբիւր։

Կուշտ-կուշտ խմում են էն սառը ջրից,
Ցետոյ Մանուշը ծառն է բարձրանում,

Գառնիկ ախպէրն էլ ծառերի տակին,
Մուշ-մուշ արածում, արոտ է անում։

Իրիկւան պահին խըխինջ ու քրքիջ...
Լցւում է յանկարծ անտառն աղմուկով.
Մօտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
Լըսում են նըրանք վրդովւած հոգով...

Եւ ահա ոսկի սանձերից բռնած,
Բերում են ջրեն ձիանքն արքայի։
Ամեհի ձիանքն աղբիւրից խրտնած,
Ծառս-ծառս են կանգնում ու մօտ չեն գալի։

Մտիկ են տալի ծառայքը մէկ էլ,
Որ սիրուն մի ցոլք ջրի մէջն ընկել,
Որ ջուրը քանի ալիք է տալի,
Նա էլ ջրի հետ գնում է գալի։

Նայում են վերև։ Ինչ տեսնեն, Աստուած.
Մի հուր-հրեղէն, մի շարմաղ աղջիկ,
Ծառի ճիւղերին նազելի նստած,
Նայում է ներքև լըռիկ ու ճնշիկ։

Մի սիրուն աղջիկ արմանք ու զարմանք։
Զարմանք է պատում խեղճ ծառաներին։
Տէր Աստուած, արդեօք ինչ հրաշք է սա,
Վայրի անտառում իջած էս ծառին։

—Ո՛վ ես, չքնաղ, տեսիլք ես դու, թէ հողեղէն աբարած. թէ տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ, թէ աղջիկ ես՝ արի ցած։ Ցած եկ, տեսնենք, էդ ինց էլաս, որ ծագեցիր դու մեզ մօտ. որ երջանիկ հողմը բերաս քեզ մեր անտառն անծանօթ։

«Մեզ որբութեան ցաւն է բերել ձեր աշխարհը հեռաւոր,—պատասխանեց մեր Մանուշը, հառաչելով գլխիկոր։—Մենք տուն չունինք, ոչ ապաւէն էս լայն արձակ աշխարհքում, մութն էլ հիմի շուտով կընկնի, վախենում ենք անտառում։ Ես ձեզ համար աղօթք կանեմ, եթէ առնէք օգնութիւն, էս վայրենի խոր անտառից եթէ տանէք մեզ մի տուն»։

Ու ծառանները գառն ու աղջկան
Առնում են բերում պալատն արքայի։
«Ո՛վ ես դու, սիրուն,—հարցնում է արքան,
Անբան գառան հետ ի՞նչ ես մանգալի»։

Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր
Պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.
Թէ՝ ապրած կենաս, ահեղ թագաւոր,
Մեր բանը՝ հապա, էսպէս ու էսպէս...

Թագաւորն երբ որ լսում է մինչին՝
Եւ շատ ցաւում է, և շատ հաւանում,
Կարգում է նրան իրեն թագուհին,
Եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անում։

Ու վառքի միջում, շրջեղ դահլիճում,
Լիքն ու երջանիկ ապրում է Մանուշ,
Գառնիկ ախպէրն էլ ճոխ պարտէզներում
Արօտ է անում ու խաղում անուշ։

3.

Պալատումը կար նախանձոտ ու չար
Մի պառաւ կնիկ, հնուց աղախին։
Նախանձում է սա, թէ ո՞նց պիտի գայ
Մի որբ՝ թագուհի դառնայ մեր գլխին։

Մի օր էլ գալի, գլուխ է տալի,
Առաջը կանգնում, կեղծաւոր գովում.
—Արի, քեզ տանեմ, սիրուն թագուհի,
Զըվա-չը՛վ լողացնեմ շարմաղ էս ծովում,

Խաբում է, տանում, գցում ծովի մէջ,
Շորերը առնում, ետ բերում քաղաք,
Հագցընում իր սև խափշիկ աղջկան,
Պալատ ուղարկում թագուհու տեղակ։

Երեսը ծածկած թանձր շղարշով,
Պալատ է մտնում էն տուտ թագուհին,
Ու թագաւորն էլ կասկած չի տանում,
Թէ ով է եկել բազմել իր գահին։

Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,
Չեն կարում էլ տուն բերեն գառնիկին,
Բղղում, էս ափից էն ափն է վազում,
Բղղում, էն ափից ետ գալի կրկին։

Ի՞նչ անենք սրան, ո՞նց անենք սրան,
Աղջիկն ու մայրը շատ են միտք անում,
Վերջը գալիս է դարձեր թագուհին,
Անկողին մտնում, հիւանդ ձևանում։

—Վայ, ամաո, մեռայ... հայ, հարայ, մեռայ...
«Ո՞րտեղդ է ցաւում, սիրուն թագուհիս,
Ի՞նչ կուզես, ասա»,—խնդրում է արքան,
Խնդրում, գլխովը պտոյտ է գալիս։

—Ախորժակ չունիմ... ես բան չեմ ուզում...
Գառնիկի մսից որ լինի, կուտեմ...
Եւ թագաւորը մտում է սառած,
Սառած, շըւարած, կանգնած կնոջ դէմ։

«Բայց չէ՞ որ, Մանուշ, քո եղբայրն է նա,
Ո՞նց ես նրա միսն ուզում դու հիմա»...
—Ի՞նչ անեմ. ինձնից նա ազիզ հո չէ՞.
Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...
Վայ, հարայ, մեռայ... հայ, հարայ, ամաո...
Ու թագաւորը տալիս է հրաման.—

«Կրակ վառեցէք, դանակ սրեցէք, բերէք մորթեցէք
Ախպէր գառնուկին, թող նա զոհ լինի իրա քոյրիկին։

Թագաւորն էսպէս պատւէր է տալի,
Պատւէր է տալի ու դուրս է գալի,
Գնում է ծովափ սաստիկ սրտնեղած,
Թէ որքան Մանուշ անգութ է եղած։

4.

Մայում է, լալիս խեղճ Գառնիկ-Ախպէրը,
Եւ լացացընում ծովի ժէռ ափերը,

Մի ափից բռնած միւս ափն է թռչում,
Մարդկային լեզուով քրոջը կանչում. —

—Քուրիկ Ջան, քուրիկ, կրակ են վառում, կրակ են վառում, դանակ են սրում։ Քուրիկ Ջան, քուրիկ, լսիր անդունդից, սպանում են ինձ։

Լսում է արքան՝ տեղը քար կտրած, և ալիքների միջից յանկարծ շատ ծանօթ մի ձայն հեռու, խուլ ու խոր կանչում է քնքուշ, կանչում է անզօր.

«Ախպէր Ջան, ախպէր, անհէր ու անմէր, անքուր ու անտէր, իմ Գառնիկ Ախպէր։ Կատաղի ծովի պաղ գերին եմ ես, փրփրած ալիքը պահապան վրէս։ Դժար է տեղս, ձէնս չեն լսում, ձէնս չեն լսում, ձեռքս չի հասնում։ Ա՜խ չար պառաւը սև արաւ օրըս, այժմ էլ կըսպանի Գառնիկ-Ախպօրս։

Լսում է արքան, պալատն է վազում,
Պատռում է քօղը թագուհու դէմքի,
Պատռում է, տեսնում... բայց ինչ է տեսնում,
Ով է իր գահին եղել թագուհի...

—Եկէք, ձկնորսներ, ուռկան ձգեցէք,
Հանեցէք ծովից մեր լաւ Մանուշին,
Եկէք, դահիճներ, ծովը ձգեցէք,
Կախարդ պառաւին ու էս հրէշին։

Այսպէս բարկացած գոռում է արքան,
Ժողովուրդն ամեն թնդում է ցաւից,
Գալիս է կանգնում, ձգում է ուռկան,
Անմեղ Մանուշին հանում է ծովից։

Հանում է ծովից, գահին բազմեցնում,
Ցաղթում է այսպէս անմեղը կրկին,
Գառնիկ-Ախպէրն էլ անչափ խնդումից,
Պատռում է իրեն ոչխարի մորթին,
Դուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,
Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Ոչխարի տակառ մայիւնի տեղակ,
Ծօսում է լեզուով ազատ ու ճարտար։

Իսկ չար պառաւին ու իր աղջկան,
Որ խաբել էին աշխարհ բովանդակ,
Վրդովներից կապում ջաղացի քարեր,
Ձգում են ծովի անդունդն անյատակ։

Երկու որբեր՝ քոյր ու ախպէր՝
Առած պատիւ, գահ ու թագ,
Աշխարհքն էլի խաղաղ ու լիր,
Ջարը թաղած ծովի տակ...

---

79. ՁԱԽԱՒՆԻԼ

Շատ հին ժամանակ մի թագաւոր կար,
Զօրեղ, իմաստուն ու շատ էլ արդար։
Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահուան,
Զըգիտէը, թէ ո՞վ կըյաջորդէը իրան։
Թէպէտ նա ունէը տասներկու որդի,
Բայց չէը իմանում, թէ ո՞րին ընտրի։
Մեծը ուժով էը, բայց անզութ ու չար,
Ներքանից փոքրը՝ թոյլ ու ցաւագար,
Երրորդը՝ անհոգ ու խելքից պակաս,
Զորրորդը՝ անմիտ, թէև անվնաս։
Այսպէս՝ ոչ մէկը հօր սրտովը չէը,
Ոչ մէկը իրա բնոյթը չունէը։
Միայն մի քիչ յոյս կրտսերն էը տալիս.
Բայց նա էլ հօր մօտ չէը գնում, գալիս,
Այդ պատճառով էլ հայրը չըգիտէը,
Թէ արդեօք նա ինչ շնորհքի տէը էը։
Թագաւորն այսպէս շատ որ մտածեց,
Հանելուկի պէս մի բան հնարեց.
Մի թարմ ցախաւել իր առջև դրած՝
Որդոցը կանչեց և նրանց ասաց.
«Սիրելիք, այսօր ես ձեզ կանչել եմ,
Որ վերջին կամքս ամենքիդ յայտնեմ.
Ինչպէս տեսնում էք, ես ծերացել եմ,

Եւ բաւական է որքան ապրել եմ.
Ձուտով իմ նախնեաց ճամպովը կերթամ,
Ներանց պէս ես էլ սև հող կդառնամ.
Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումըս,
Կուզեմ ձեզ յայտնել՝ ինչ կայ մտքումըս։
Ահա ձեր առջև մի նոր ցախաւել,
Որ ես հէնց այսօր կապել եմ տըւել.
Ձեզանից ով որ կրկոտրէ սըրան,
Իմ թագն ու գահը ես նըրան կըտամ.
Դէհ, առաջ եկէք, ուժերդ փորձեցէք,
Տեսնեմ ձեզանից ո՛րըդ կրկոտրէք»...

—

—Հայր, ես կրկոտրեմ, ասաց մեծ որդին,
Եւ վստահութեամբ մօտեցաւ աւլին.
Վերցրեց աւելն ու ծունկը կալաւ,
Քաշեց, քաշքշեց, ոչինչ չի եղաւ.
Շատ քրտինք թափեց, շատ չարչարւեցաւ,
Դեղնեց, սփրթնեց և յետ քաշւեցաւ։
Յետոյ երկրորդը եկաւ, վեր առաւ,
Նա էլ իր եղբօր գառն օրին հասաւ.
Երրորդն էլ եկաւ, իր ուժը փորձեց,
Բաւական տանջանք չորրորդն էլ կրեց.
Միւսներն էլ իրանց բախտը փորձեցին,
Բայց ցախաւելը չի էլ ծռեցին։
Ամենից վերջը փոքրը մօտեցաւ
Եւ իր հօր առջև այսպէս խօսեցաւ.

—

—Հայր, ես չեմ ուզում իմ ուժը փորձել,
Իմ եղբարց նման իզուր չարչարւել,
Ես երեխայ չեմ, որ ձեռքս մեկնեմ
Դէպի լուսինը, որ նրան բռնեմ.
Ջուրը կրհեղդէ, կրակը կայրէ,
Ով այս չգիտէ՝ թող ինքը փորձէ։

Ես այժ տեսնում եմ ամենայն բանում՝
Թէ երկրիս վրայ և թէ երկնքում։
Առ մի բարակ ծեղ, մի մազ կամ մի թել,
Մեծ ուժ կրգտնես ամենի մէջ էլ.
Թէ փոքրիկ միջատ, թէ ուղտ ահագին,
Ամենքն էլ ուժից մէկ բաժին ունին։
Կայ և խելքի ուժ, ինչպէս և սրտի,
Աչքի, ականջի, ձեռքի ու ոտքի,
Ուսերն ու մէջքն էլ պակաս ուժով չեն,
Բայց դրանք թոյլ են, թէ միացած չեն.
Ուժով չի լինիլ ոչ մի առարկայ,
Եթէ մասներում միութիւն չըկայ.
Մասերն իրար հետ երբ սերտ կապ ունին,
Այդպիսով միայն ուժով կըլինին.
Այսպէս շատ անհատ երբ որ միանան,
Մեծ և չափազանց մեծ այժ կըստանան։
Մեզ լաւ օրինակ մրջիւն ու մեղուն,
Թէ նրանք խմբով ինչեր են անում,
Ներանց պէս եթէ մարդիկ միանան,
Լեռներ կըշրջեն՝ եթէ կամենան.
Եւ ինչքան լճեր, ինչքան ջրանցքներ
Միացած ուժով կարող են շինել։
Ես քո տէրութեան ցրւած ուժերը,
Ինչպէս ցախաւիղ ճկուն ճղները,
Ամուր կապերով կապած կըպահեմ.
Այս է քո միտքը, ես ինչքան գիտեմ.
Բայց որ ասածըս լաւ հասկացնեմ,
Տեսէք՝ աւելը ինչպէս կրկոտրեմ»։
Եւ այս ասելով՝ նա վեր է առնում,
Ուլի կապերը քանդում, արձակում.
Ճկուն ճղները վերցնում է հատ-հատ,
Ամենի առջև կոտրատում, ջարդում։

—

—Ապրիս, իմ որդի, ասում է հայրը.
Քեզ է արժանի իմ թագն ու գահը»։

Գրկում է որդուն, ճակատից պաչում,
Եւ թագն իր ձեռքով գլխին է դնում։
«Տեսէք, ասում է միւս եղբայրներին,
Դուք չընախանձէք ձեր եղբօր փառքին.
Եթէ սրա հետ սերտ սիրով մնաք,
Աւելի մեծ ուժ և փառք կըստանաք.
Իսկ եթէ զատւիք և ջոկ-ջոկ լինիք,
Ջանդւած աւլի պէս շուտ կըկոտրատւիք։
—Մենք հնազանդ ենք, ասում են նրանք՝
Տալով եղբօրը պատիւ և յարգանք։
Իմաստուն որդին հասաւ մուրազին,
Դուք նոյնպէս հասնիք ձեր մուրազներին։

---

80. ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Կար մի ժամանակ մի քարհատ, որ ամեն օր մեծ ժայռերից քարեր էր կոտրում ու հանում շինութեան համար։ Նա օրը մինչև երեկոյ կիզիչ ճառագայթների տակ աշխատելուց յետոյ, երեկոյեանները պառկում էր իր կոշտ ու խղճուկ անկողնի վրայ, ամեն օր նա հառաչում էր և գանգատում իր դրութիւնից։ Մի օր էլ, երբ նա աղաղակեց.

—Օ՜հ, ինչպէս կըցանկայի ունենալ մի փափուկ անկողին,—հրեշտակն իջաւ երկնքից և ասեց նրան.

—Թող քո ցանկութիւնը կատարւի։ Նա հարստացաւ և պառկում էր փափուկ ու մետաքսապատ վերմակով անկողնի մէջ։

Մի օր թագաւորը իր թիկնապահներով, ամենափառաւոր կերպով զարդարւած անցնում էր, ամեն ոք գլուխ էր խոնարհեցնում նրան և նա վեհափառօրէն անցնում էր ժողովրդի միջից. քարհատը ցանկացաւ լինել թագաւոր, և աղաղակեց.

—Ա՜հ, եթէ ես կարողանայի թագաւոր լինել…

Հրեշտակը, երկնքից իջնելով՝ ասաց.

—Թող քո ցանկութիւնը կատարւի։

Նա թագաւոր եղաւ, և պատում էր՝ ունենալով մի խումբ սպասաւորներ առջևից, մի խումբ ետևից և մի ոսկեպատ ամպհովանի էլ գլխին։

Այդ միջոցին արեգակը բարձրացաւ և փայլեց, այնպէս ջերմացրեց երկիրը, որ խոտերը չորացան։

Թագաւորը հառաչեց տաքութեան համար և ցանկութիւն յայտնեց լինել արեգակ։

Հրեշտակը կատարեց նրա ցանկութիւնը։

Նա փոխուեց արեգակի և վեհափառօրէն ու պարծենկոտութեամբ նայում էր երկրի վրայ և տարածում էր իր ճառագայթները երկրի ամեն կողմը, բայց ահա եկաւ մի ամպ օդի մէջ և ծածկեց նրա ղէմքը. նա կատաղեց՝ տեսնելով իր կարողութեան այսպէս խորտակումը, ցանկացաւ ամպի փոխուիլ, և հրեշտակը կատարեց նրա կամքը. նա ծածկեց արեգակի լոյսը և սկսեց առատօրէն անձրև տեղալ երկրի վրայ, կարծելով, որ ոչ մի բան չի դիմանալ իր անձրևի ոյժին։ Եւ իրաւ, քանդուեցին տները, արմատախիլ եղան ծառեր, խեղդւում էին մարդիկ, ընկղմում էին նաւեր, բայց մի ժայռ միմիայն անդրդուելի էր. ամպը որոտաց, աւելի ուժգնացրեց իր հեղեղը, կենտրոնացրեց ոյժը և ընկաւ ժայռի վրայ, բայց տեսաւ, որ ոչ մի բան չազդեց նրա վրայ, հառաչեց և դադրեց.

—Այս ժայռը ինձնից ուժեղ է, կըցանկայի այս ժայռը լինել։

Նրա ցանկացածը դարձեալ կատարւեց։ Նա փոխուեց ժայռի, և ոչ արևի տաքութիւնը, ոչ անձրևի սաստկութիւնը, ոչ մանչիւնները, ոչ արտասուք ու պատանք նրան չէր ներգործում. նա կանգնած էր այնտեղ ինչպէս մի բռնաւոր և արհամարհանքով էր նայում իր ազգակից փոքր քարերին, բայց ահա եկաւ մի քարհատ, բարձրացրեց իր կռանը և սկսեց կտոր կտոր անել նրան։ Ժայռը մռնչեց, փոշի հանեց, քարի կտորներ ցայտեցրեց քարհատի երեսին, բայց սա ծածկեց իր

դէմքը մի կուշիով և շարունակեց նրան ջարդելը, իսկ ժայռը տեսնելով իր յաղթութիւնը, դոչեց.

—Այս քարհատը աւելի կարող է քան ես, կըցանկայի այս քարհատը լինել։

Վերջին անգամ իջաւ երկնրից հրեշտակը՝

—Թող կամքդ լինի, ասեց և անհետացաւ...

Եւ խեղճ մարդը, այնքան անգամ ձեակերպւած, կրկին դարձաւ առաջւան անբախտ քարհատը։

---

81. ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

1

Մի ծերուկ ձկնորս և իր պառաւ կինն
Բընակւում էին Մեծ ծովի ափին,
Ծերը գնում էր ձուկ բռնում ծովից,
Պառաւն էլ տանը թել մանում բրթից.
Այսպէս միասին՝ մի հին գեհենատան,
Երեսուն երեք տարի ապրեցան։

Ահա մէկ օր էլ ծերը գնաց ծով,
Որ ձուկը որսայ իր մաշւած ցանցով.
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,
Առաջին անգամ միայն սիրտ հանեց։
Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով։
Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց,
Ո՞վ կարէ ասել, թէ ինչ դուրս հանեց.
Նա բերաւ իր հետ մի ոսկի ձկնիկ՝
Ձկանց արքայի դուստրը գեղեցիկ
Ծերի ցանցն ընկաւ, իբրև խեղճ գերի,
Ոսկի աղջիկը ձուկ-թագաւորի։

Խեղճ ոսկի ձկնիկ, ինչպէս է խնդրում,
Մարդկային լեզւով ծերին աղաչում.
«Թող ինձ, թող, ծերուկ, թող ինձ անվտանգ,
Քեզ կըվճարեմ թանգագին վրկանք,

Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,
Ուզիդն եմ ասում, ինձնից կատանաս»։

Վախեցաւ ծերը, ճաց զարմացած։
Նա այնքան տարի ձկնորս էր եղած,
Բայց ձկան մասին երբէք չէր լսել,
Թէ նա մարդու պէս կարող է խօսել։
«Գնա, Տէր ընդ քեզ, ասեց ծերունին,
Ինձ չէ՛ հարկաւոր վրկանք թանգագին.
Գնա քեզ համար դու ծիրանի ծով,
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»։

2

Այս դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,
Պատմեց պառաւին՝ թէ ինչ բան տեսաւ.
«Այսօր ես ծովից, դիտե՞ս ինչ, ա կնիկ,
Բռնեցի յանկարծ մի ոսկի ձկնիկ,
Ոսկի եմ ասում և ոչ քու գիտցած,
Այսպիսի հրաշք ոչով չի տեսած։
Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզւով,
Աղաչանք արաւ, որ յետ ձգեմ ծով.
«Թող, ասաց խնդրեմ, թող ինձ անվտանգ,
Քեզ կըվճարեմ թանգագին վրկանք».
Բայց ես ոչ մի բան չըպահանջեցի,
Ոչինչ չեմ ուզում, գնա, ասացի.
Գնա քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...

Պառաւը երբ որ այս բանը լսեց,
Խեղճ ալևորին շատ յանդիմանեց,
Թէ ինչո՞ւ ձկնից վրկանք չի ուզել,
Ու այնպէս ձրի յետ ծովն է ձգել։
«Ա՛յ, յիմար անմիտ, հայհոյեց ծերին,
Գոնէ կասէիր դու ոսկի ձըկին՝
Մի նոր տաշտակ տուր՝ տանեմ իմ կնկան,
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական» ..

Դարձաւ ծերունին ծովի ափ գնաց.
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանւած).
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին
Ձուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տւաւ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
Ինձ նախատում է իմ պառաւ կնիկ,
Հանգիստ չի թողում խեղճ ալևորիս,
Վըրաս մրթմրթում, ուշունց է տալիս.
Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան,
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց,
«Գնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.
Թող քու պառաւը շատ չընեղանայ,
Այսօր նա մի նոր տաշտակ կունենայ»...

2.

Յետ դարձաւ ծերը դէպի իր տնակ,
Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ.
Բայց կինը գոհ չէր. նա այս անգամ էլ
Ըսկսեց ծերին սաստիկ նախատել.
«Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
Ինչո՞ւ մի ուրիշ բան չըխնդրեցիր,
Յետ գնա շուտով, անմիտ անասուն,
Գլուխ տուր նըրան և ուզիր մէկ տուն»...
Ծերունին դարձաւ ծովի ափ գնաց,
(Այս անգամ տեսաւ ծովը պղտորւած).
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց,
Ծերը գլուխ տւաւ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
Ինձ շատ նախատեց իմ պառաւ կնիկ.

Ուզում է նորից տուն ունենալ,
Ես ալևորիս հանդիստ չի թողում,
Հիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»...
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց,
«Գնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.
Թող լինի այնպէս՝ ինչպէս կամենաք,
Դուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»...
Ծերը ետ դարձաւ կրկին դէպի տուն՝
Էլ նա չըգտաւ իր հին գեռնատունն.
Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով.
Կրաուրից հանած ծըխահաններով,
Պատ ու վառարան մաքուր սըւաղած,
Կրով ու կաւճով սիլատակացրած.
Վարպետի տաշած, կաղնի տախտակից,
Մեծ դուռն էր կախած լայն բակի կողմից։
Պատուհանի տակ կինն ուռած նստել՝
Իր չարութիւնից ուզում է տրաքել.
Ինչ անէծք ասես աշխարհքիս տակին՝
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.
Վերջը, երբ վոքը ինչ բարկութիւնն իջաւ,
Մուրթը կախած՝ ծերունուն դարձաւ.
«Անշնորհք ծերուկ, անտակ ուզեցիր,
Երևի քո մէջ մեծ բան կարծեցիր.
Յետ դարձիր, անխելք, յետ դարձիր գնա,
Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա,
Որ էլ չեմ ուզում մեծ գեղջուկ կին,
Ուզում եմ լինել գերազնիւ տիկին»...

4.

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց,
(Այս անգամ տեսաւ ծովը վրդովւած),
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին,
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին,
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տւաւ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,

Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ,
Էլ չի կամենում միասլ գեղջուկ կին,
Ուզում է լինել գերազնիւ տիկին.
Ջը գիտեմ՝ գլուխն ինչ քամի մտաւ,
Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ»...
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց,
«Գնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց,
Թող քո պառաւը հէնց այսօրւանից
Ազատ համարւի իր գեղջկութիւնից»...
Յետ դարձաւ ծերը, և ինչ է տեսնում,
(կարծեց ցնորք է աչքին երևում).
Մի տուն հոյակապ, վերնատարահում
Պառաւն է կանգնած ինչպէս նոր խանում,
Հագին սամուրէ բաճկոնակ սիրուն,
Գլխին գիպակէ չարդամ գոյնզգոյն,
Վիզը զարդարած մարգարիտներով,
Մատերին մատնիք անգին քարերով,
Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան,
Միւս հագուստներն էլ մետաքս պատւական։
Ծառաներ ունի մի քանի տասնեակ,
Բոլորն էլ իրան հրլու հպատակ։
Մարդուն որ տեսաւ՝ պառաւը կատղեց.
Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց.
(Երևի ուզեց ցոյց տալ ծերուկին,
Որ հիմա ինքն է գերազնիւ տիկին).
Հայհոյանք թափեց ամենքի վրայ,
Տեղի անտեղի քօթկեց անխնայ.
Մէկի մազերից բռնեց քաշքշեց,
Միւսին էլ մի լաւ ապտակներ զարկեց։
Ծերը մօտեցաւ դող դող քայլերով՝
Ասաց պառաւին՝ խոր գլուխ տալով՝
«Բարով գերազնիւ խանում-խաթունիս,
Հիմա խօմ գոհ ես, հանգիստ կըլինիս»...
Պառաւ տիկինը այնպէս բղաւեց,
Որ խեղճ ծերունու լեղին պատառեց։

Ներան հրամայեց, որ իսկոյն գնայ
Գոմն ասլէ, քերէ, ու այնտեղ մնայ։

5.

Մէկ-երկու շաբաթ հազիւ անց կացաւ,
Պառաւ խանումը նորից կատղեցաւ,
«Շուտ կանես կերթաս, ասում է մարդին,
Ու իմ կողմանէ կասես ձկնիկին,
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...
Այս խօսքի վրայ ծերունին սոսկաց,
Եւ աղաչելով պառաւին ասաց.
«Գժւել ես, ա կնիկ, ես չեմ հասկանում,
Երդեօք դու գիտե՞ս՝ ինչ ես ցանկանում,
Մէկ նայիր վերադ, շէնք ու շնորհքիդ,
Լըբլըբան լեզուիդ, ծուռումուռ քայլքիդ,
Ախըր ինչ ունես թագուհու վայել,
Որ խելքիդ այդպէս քամի է փչել.
Արի լսիր ինձ, մի անիլ այդպէս,
Ամբողջ աշխարհքին կը ծիծաղեցնես»...
Էլ չըհամբերեց մեր պառաւ տատը,
Որ վերջացնէր մարդն իր խրատը,
Նա այնպէս գոռաց, այնպէս որոտաց,
Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց.
«Ի՛նչպէս թէ այդպէս, յանդուգն, ըսատահակ»,
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ,
«Համարձակւում ես, գռեհիկ անգէտ,
Վիճել ինձ նման ազնիւ տիկնոջ հետ.
Քեզ հրամայում են պատուաւոր խօսքով,
Որ իսկոյն գնաս քո յօժար կամքով,
Եթէ ոչ՝ ահա ժողովւած կշտիդ,
Սրանք կը տանեն՝ խփելով վզիդ»։
Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսաւ ծովը սևացած),

Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.
Ջուկը լողալով մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
Էլի է կուռւում իմ պառաւ կնիկ.
Ներիր ինձ, խնդրեմ, ես ամաչում եմ,
Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.
Բայց ո՛ր չուրն ընկնիմ, հանգիստ չի թողում.
Կրակն է գցել, այրում խորովում.
Գնա, ասում է,—ախ, նզովեմ կին—
Շուտ գնա ասա ոսկի ձկնիկին,
Որ էլ՝ չեմ ուզում տիկնութիւն անել,
Ուզում եմ ազատ Թագուհի լինել»...
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, Տէր ընդ քեզ, մի՛ տխրիլ, ասաց՝
Թող քո պառաւի ուզածը լինի,
Թող գնայ դառնայ ազատ Թագուհի»։

6.

Ո՛վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,
երբ ձկան մօտից տուն վերադարձաւ
էլ ինչ տուն, ինչ բան... դու արքայական
Ապարանք ասա, կամ հսկայական
Մեծ մեծ պալատներ շարիշար կանգնած՝
Բարձր բուրգերով չորս կողմը պատած.
Շքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,
Մարդ կըշըշկլէր, եթէ մէջն ընկնէր։
Ծերը բաձրացաւ մարմար սանդուղքով.
Մի դահլիճ մտաւ խիստ պատկառանքով.
Առջևը բացւեց մի նոր տեսարան,
երբ այնտեղ գտաւ իր պառաւ կնկան.
Նա հիմա ազատ Թագուհի դառած՝
Առօք ու փառօք ճաշի է նստած.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,

Ոսկ են կանգնած որպէս ծառաներ,
Թագուհու համար պինդ են ածում
եւ ահռելողով աչք-ունքին նայում.
Շէմքում կանգնել են ահեղ պինւորներ,
Ուսերին բռնած կացնաձև սրեր,
Մենակ պառաւն էր սեղանին բազմել,
Ո՛վ կը յանդգնէր նրա հետ նստել.
Բայց կերակուրներն այնքան շատ էին,
Որ հարիւր հոգի կըկշտացնէին.
եւ քանի՜ տեսակ անծանօթ բաներ,
Ի՜նչ անուշեղէն, ինչ տապականեր ..
Պառաւն ուտում էր մեծ ախորժակով,
Գինին դատարկում լիքը բաժակով.
Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,
Որ քաղցրացնէ շրթունք ու բերան։
Ծերն այս տեսնելով մնաց շփոթած,
Ընկաւ պառաւի ոտքերն ու ասաց.
«Բարով քեզ, բարով, ահեղ Թագուհի,
Քո մեծութիւնը յաւիտեան լինի»։
Այս խօսքից յետոյ կամաց շրջնջեց,
Ու վախալով պառաւին հարցրեց.
«Հիմա որ բախտի վերին ծայրումն ես,
Ասա բաւակա՞ն ես, ա՛ կնիկ, ինչ կասես...
Թագուհի դառած պառաւն այս անգամ
Մարդի երեսին չընայեց անգամ.
Հրամայեց մոմոաց նա քթի տակին,
Որ դուրս վռնդեն մեր անկոչ հիւրին։
Հէնց որ լսեցաւ Թագուհու հրաման,
Հնազանդ երեալ ամենքն ուզեցան.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,
Ինչպէս որսորդի արնախում շներ,
Թափելով ծերի շինքակոթին՝
Շքեղ դահլիճից դուրս վռնդեցին.
Շէմքումը կանգնած պահապաններն էլ
Գիշատիչ ճանկերն էին պատրաստել,
Վրայ վազեցին ամենքը մէկէն,

Ու քիչ հետց որ՝ խեղճին պլոկեն։
Ինչպէս որ եղաւ, մի՛ կերպ դուրս պրծաւ,
Դուրան էլ ամբոխի ծաղրի տակին ընկաւ,
Որ կարծես նրան լինէը սպասում
Անձրևի տակին ցեխոտ փողոցում.
—«Ա՛յ թէ լաւ արին, ծերո՛ւկ դու անգէտ,
Ո՞ւմ հետ ես մեկնում անճոռնի ոտներդ,
Թող այդ քեզ համար լինի լաւ խրատ,
Որ էլ չըցանես մանդր կատահատ»...

7.

Այս դէպքից յետոյ շատ օրեր չանցան,
Պառաւի այծերն էլի մօտ եկան.
Ուզարկում է նա իր իշխաններին,
Որ գանեն բերեն արտաքսած ծերին։
Նկաւ ծերունին։ Պառաւն սկսեց.
«Դու պէտք է գնաս ձկան մօտ, ասեց.
Կերթաս, խոր գլուխ կըտաս դու նրան
Ու իմ փափագը կը յայտնես իրան.
Կասես՝ չեմ ուզում հետ թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի.
Ուզում եմ Ովկեան ծովումը կենալ,
Ոսկի ձկնիկին ծառայ ունենալ,
Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,
Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարի»...
Պառաւին լսեց ծերը լուռ ու մունջ,
Առանց յայտնելու որ և է արտունջ։
Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց,
(Այս անգամ ծովը խիստ էր փոթորկած,
Փրփրած ալիքներ սարեր գառնալով՝
Իրար են զարկւում ահեղ գոռալով).
Ողբաձայն կանչեց ոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ, հարցրեց,
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց,
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,

Իսպառ գժւել է իմ պառաւ կնիկ,
Ի՞նչ անեմ արդեօք այդ նզովեալին,
Մինչև ե՞րբ տանջւիմ քաւթառի ձեռին.
Էլ չի կամենում թագուհի լինել,
Այլ տես՝ անիծածն ինչ է միտք արել՝
Իշխել է ուզում բոլոր ջրերին
Ու իշխանուհի դառնալ ծովերին,
Ուզում է Ովկեան ծովումը կենալ,
Ոսկի ձկանըդ ծառայ ունենալ,
Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս.
Ու ինչ ուզենայ, շուտ կատարում տաս»...
Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,
Բայց էլ ծերունուն չըպատասխանեց.
Ջրի երեսին շրըմփեց պոչով,
Ու անցաւ գնաց դէպի խորին ծով...
Շատ հետց ծերը և շատ նայեցաւ,
Բայց Ոսկի ձկնիկն էլ չերևեցաւ.
Դարձաւ գլխակոր որ յայտնէ կնկան,
Թէ ինչ փորձանքի մէջ գցեց իրան.
Եւ գնաց տեսաւ. (բայց ի՞նչ տեսնի լաւ,
Որ արդար լինի և ոչ անիրաւ),
Հին խուղի շէնքում պառաւը նստած,
Կոտրած տաշտակը առաջն ընկած...

---

82. ԽՆՁՔՆ ՈՒ ԲԱԽՏԸ

Խելքն ու բախտը վէճի բռնւեցին. բախտն ասում էր.—Մարդիկն ինձանով են մարդ. Խելքն ասում էր.—ինձանով։ Թէպէտ դատաւորի չըդիմեցին, բայց իրանց մէջ պայման դրին, որ մէկը միւսի արածին չըխառնւի։ Եւ իրանց փորձը կատարեցին մի գիւղացու վրայ։

Գիւղացին արօրը լծեց և գնաց տափը վարելու։ Խոփը դէմ առաւ մի պինդ բանի և կանգ առաւ ակոսի մէջ։ Մարդը տեսաւ որ ահա մի գուդում կայ հողում, վերցրեց տեսաւ, որ մէջը ոսկով լիքն է։

—«Այս ինչ լաւ եղաւ, մտածեց մարդը,—այսուհետև էլ ոչ մի նեղութիւն չեմ քաշիլ, ես էլ կընկնիմ հարուստ մարդոց կարգը, ինչ՛ը, ինչ՛ը չեմ անիլ, գիւղի համար աղբիւր հանել կըտամ, եկեղեցի կըշինեմ, աղքատներին առատ ողորմութիւն կըտամ... մէկ էլ յանկարծ փոխեց մտածելու եղանակը և ասեց.

—Վայ թէ գողերն իմանան ու կէս գիշերին գան յափշտակելու և առաջ ինձ սպանեն, յետոյ իրանց կողոպուտն սկսեն։ Չէ, սրա շառը շատ է, քանց խէրը։

Այս մտածութեան մէջ՝ տեսաւ որ իրանց դատաւորն անցնում էր մօտովը։—Այս լաւ եղաւ, ասեց.—եկ ոսկիը տամ սրան, իսկ ես հանգիստ իմ գործիս նայեմ։ Վազում է, կանչում դատաւորին։

Բայց դատաւորը որ գալիս է, մարդի խելքն էլ գլուխն է հաւաքում. ոսկին ծածկում է և ասում.—Ազա, դու դատաւոր մարդ ես, գիտուն ես, ասա ինձ, խընդրեմ, իմ այս ջուխտ եղներից որին ես լաւ համարում։

Սրա վրայ դատաւորը նեղանում է, բարկանում, և թողում հեռանում է։ Խելքն էլ մարդի գլխից է հեռանում և նա մտածում է, թէ ինչո՞ւ ոսկիը չտրաւ, ինչ պիտի անի, ո՞ւր պիտի պահի։ Մինչև երեկոյ անգործ է մնում և շարունակ սրա վրայ է մտածում։ Մինչև այդ՝ դատաւորը գնում է գիւղը և յետ դառնում, մարդն էլի գընում է առաջը կտրում, աղաչում, որ էլի մէկ անգամ դայ վարածին նայի ու երթայ։ Դատաւորն զղում է, որ մի բան պէտք է լինի, գնում է։ Հէնց այդ րոպէին մարդի խելքը գլուխն է գալիս՝ և ասում է.

—Աղաչում եմ, չընեղանաք, բարի դատաւոր, եթէ ձեզ մի բան հարցնեմ.—Ինչպէս էք նկատում, երեկւայ վարածս է շա՞տ, թէ այսօրւան։ դուք գիտուն մարդ էք, լաւ կըգիտենաք այդ բանը։

Դատաւորը խենթի տեղ է դնում մարդին և ծիծաղելով հեռանում է։ Մարդի խելքն էլ է հեռանում և յետի մի կողմը նստում։ Մարդը ծեծում է գլուխն ու ասում.—Հիմա ինչ անեմ, ինչպէս անեմ, այս անիծած ոսկիքն ո՞ւր տանեմ, որտեղ պահեմ։ Վերջը, դուզումը փաթաթում է

հացի մէզարումը և շալակում, գնում տուն և ասում կնկանը.

—«Ա՛յ կնիկ, եզինքը կապոտիր, խոտ տուր, արօրը տար ներս, ես պիտի երթամ դատաւորի մօտ, բան ունիմ։

Կնիկը տեսնում է, որ մեզարը մարդի շալակին է և մէջումն էլ բան կայ, բայց վայր չի դնում, մտածում է որ մի նոր բան պիտի լինի, ասում է մարդին.

—Եզնիր կապելն իմ ինչ գործն է, ինչ կայ այդպէս շտապելու, դատաւորը հօ չի փախչում. բեռըդ ցած դիր, եզներըդ տեղաւորիր, յետոյ ուր ուզումես՝ գնա։

Մարդը ցած է դնում բեռը, եզները ներս է անում և մինչև կապոտելն ու դուրս գալը՝ կնիկը մէզարը բաց է անում, դուզումով ոսկին վերցնում և նրա չափին մի քար է դնում մէզարումը։ Մարդը վերցնում է մէզարը և տանում դնում դատաւորի առջևը և ասում.—Առ այս, քեզ ընծայ եմ բերել։ Բայ են անում տեսնում—քա՜ր... Մարդն էլ է զարմանում։ Դատաւորը բարկանում է և մարդին բանտարկելով՝ վրան հսկելու համար երկու պահապան է դնում, որ տեսնեն ինչ է անում և ինչ խօսում, և դան իմաց տան։

Մարդն ինչ որ մտքումն ասում է, նոյն մտքով ձեռքերն էլ է շարժում,—դուզումն այսքան էր, բերանն այսքան, փորն այսքան, տակն այսքան, ու մէջի ոսկիքը այսքան։

Նայողները պատմում են դատաւորին, թէ երկու ձեռքով բան է չափում, բայց ոչինչ չի խօսում։—Կանչեցէք, ասում է դատաւորը։

Մարդին կանչում են և դատաւորը հարցնում է նրբան, թէ ինչ բան էիր չափում ձեռներովդ։ Մարդի խելքը գլուխն է գալիս, և պատասխան է տալիս, թէ՝ «Ես քեզ էի չափում և ասում՝ քո գլուխն այսքան է, քո վիզն այսքան, քո փորն այսքան, քո մօրուքն այսքան, ու ասում էի, թէ արդիօք դու ես մեծ, թէ մեր այծը։

Սաստիկ բարկանում է դատաւորը և հրամայում է, որ տանեն կախեն։ Տանում են որ պարանը ճիտը ձգին, ասում է. «Ինձ մի կախէք, ես կերթամ ուղիղը կասեմ»։

Դատաւորը հրամայում է, որ ճշմարիտն ասէ, թէ ինչ էր չափում բանտումը։

Մարդն ասում է.—Ես ոչ այս դիտեմ և ոչ այն, հաւատացէք, որ եթէ ճօպանը իմ ճըտից չը հանէիր, ես հիմա խեղդւած կըլինէի, ահա ձեզ ճշմարիտը.

Սրա վրայ ծիծաղում է դատաւորը և ազատում մարդուն։ Մարդը գնում է տուն ուր նրա բախտն ու խելքը ասում են միմեանց.—Ոչ մէկս չը յաղթւեցինք. երևում է, որ բախտն ու խելքը յաջողութեան և ընդունակութեան պէս միմեանցից անբաժան պէտք է լինին, և Բախտը խելքով ու խելքն էլ բախտով կարող են մարդին մարդ շինել։

---

83. ԲԱԽՏԻ ՍՊԱՍՈՂԸ

I

Մակարը տնանկ, աղքատ էր ու ծոյլ.
Նա գործատեաց էր, դանդաղկոտ ու թոյլ։
Երբ առաւօտեան արևը պայծառ
Ոսկեզօծում էր դաշտերը դալար,
Ջանասէր մեղւին ծաղկոց հրաւիրում,
Զինականներին հանդը դուրս բերում—
Մակարը քաղցած՝ պառկած էր թախտին,
Պարապ ու սարապ ըսպասում բախտին.
«Ո՞րտեղ ես, ա՛յ Բախտ, արի, դուրս բա՛ց,
Մեռնում եմ, ծ, եկ, տուր մի պատառ հաց»...

II

Տանջւում էր Մակար՝ քաղցած ու կարօտ,
Երբ մի մեծատուն մտաւ նրբա մօտ.
«Տեսնում եմ, Մակա՛ր, աղքատ ես, սուված,
Ոչ ոք չի տալիս քեզ մի կտոր հաց.
Վե՛ր կաց, միասին մեր արտը գնա՛նք.
Աշխատենք այնտեղ, անենք վար ու ցանք.

Եւ օգնութեանդ փոխարէն ես քեզ՝
Իբրև ջանքիդ վարձ՝ կըտամ մի զոյգ եզ.
Այնուհետ ինքդ կըվարես հողը
Ու միշտ կաշխատես ապրուստիդ փողը»։

III

Յօրանջեց Մակար, ասաց հեղգաբար.
«Քո զոյգ եղները պահիր քեզ համար,
Տըւած խորհուրդըդ կպչի քո դլխին—
Կարօտ չեմ ես քո ոչ մի բարիքին...
Երբ բախտս բացւի—կըհարստանամ,
Քեզ պէս անւանի մեծ մարդ կըդառնամ։
Թէ որ բախտ ունիս—տեղըդ հանգիստ կա՛ց,
Բախտըդ անպատճառ կըբերի քեզ հաց.
Թէ որ բախտ չունիս—աշխատիր հազար՝
Կըմնաս, ինչպէս մի աղքատ դազար»...

IV

Եւ մեր Մակարը ըսպասեց երկար,
Բայց նըրա բախտը չըկար ու չըկա՛ր...
Առաջւայ նման՝ նա դարձեալ քաղցած,
Պարապ ու անդործ խրճիթում պառկած,
Անէծք էր թափում կոյր բախտի գլխին,
Իր թշւառ կեանքը ողբում դառնագին։
Էլ անկարող է մնալ նա տանը.
Բախտը չի գալիս—բո՛ւրդ է իր բանը...
Եթէ նա գլխին շուտ մի ճար չանի,
Քաղցածութիւնը հոգին կըհանի...

V

Եւ նա յուսահատ, ուժասպառ, յոգնած՝
Դուրս եկաւ տանից, արօտը գնաց։
Դալար ու շքեղ լեռների լանջում,
Որտեղ առուն էր անուշ մրմնջում,
Որտեղ փչում էր բամին զովարար—
Արածում էին հօտեր անհամար։

Մի փոքր հեռու, ծաղկաբոյր հովտում,
Ձիերի ջոկն էր հանգիստ արածում.
Այնտեղ էլ կուրծքը կաթնով լի կովեր,
Պարարտ գոմէշներ, երինջ ու հորթեր։

VI

Եւ մեր Մակարը՝ չորս դին նայելով՝
Դէպ՝ առաջ գնաց կամացուկ քայլով.
Իր շուրջը նայեց, աչք ածեց երկար,
Բայց ոչ պահապան, ոչ էլ հովիւ կար։
Միայն մի ամպ էր լողում վերևում,
Հսկայ լեռների կատարին փաթում։
Մակարը կանգնեց, գլուխը քաշ գցեց—
Մի սև մտածմունք նըրան պաշարեց.
Մտատանջ նայեց հօտին ու ջոկին,
Եւ յանկարծ խնդաց նրա ծոյլ հոգին...

VII

«Ա՛յ յարմար բոպէ, ա՛յ յաջողակ բան,—
Հրճւելով ասաց Մակարն ինքն իրան.—
Հարուստ մեծատան բարիքներն անթիւ
Այստեղ են ահա... Շրկայ ո՛չ հովիւ,
Ո՛չ էլ պահապան. փոքս էլ ղրդռում,
Կպչելով մէջքիս՝ վեց-վեց է անում...
Եթէ խաշներին այստեղից տանեմ,
Ծախեմ քաղաքում, ապրուստս հանեմ—
Իմ գողութիւնը ո՛վ կըհասատաւի,
Ո՞վ կապացուցի, կենթարկի դատի»...

VIII

Հէնց որ Մակարը մտեցաւ հօտին,
Կարծես՝ խփեցին շընքակոթին—
Երկիրը թնդաց, որոտ, աղաղակ,
Շարժեցին յանկարծ անտառ ու պուրակ...
Լեռների լանջում հօտը սողոսկաց,
Առապարներով իջաւ դէպի ցած.

Կայտառ ձիերը պինդ խըխնջացին
Եւ կովերի հետ մի տեղ ժողւեցին...
Մակարը դողաց ու լեզապատառ՝
Մնաց տեղնուտեղը, որպէս շանթահար։

IX

Սթափւեց Մակար և ինչ է տեսնում—
(Մեղայ Քեզ, Աստուած, ինչեր ես ստեղծում).
Տեսնում է յանկարծ իր առաջ կանգնած
Մի տարօրինակ թզուկ արարած.
Երեսը փայլուն, պայծառ, լուսաւոր,
Աչքերը հրեղէն, դաժան, ահաւոր...
Հսկում էր բոլոր ոչխարի հօտին,
Երինջ ու կովին, ձիերի ջոկին.
Կանգնած էր խրոխտ, իբրև արքունի դէտ,
Խոժոռած նայում Մակարին խէթ-խէթ։

X

Հորթերը կայտառ նըրա չորս կողմով
Տրտինդ են տալիս ուրախ խնդումով.
Մերթ մկրկում են այծերը զըւարթ,
Մերթ կանգնում, նայում հայեացքով անթարթ.
Նախշուն գառները սրտով խնդագին,
Շրջապատելով թզուկ էակին,
Շեռքը լիզում են, ընչով փայփայում
Եւ բուռն սիրով փաղաքշում, մայում...
Բոլորը տեսնում, տեսնում է Մակար,
Բայց չի հասկանում իր խելքը տակար։

XI

«Ասա՛ ինձ, ո՛վ ես, մարդկային էա՞կ,
Լեռնային ոգի՞, թէ երկնի հրեշտակ»։
—Ես նա՛ եմ, որից զրկւած է շատ մարդ—
Թէ ծոյլ աւազակ, թէ աղքատ հպարտ.
Ես նա՛ եմ, որ միշտ այս բոլոր բարիք
Պահում է, խնամում, որ չըզայ չարիք։

Այս բարիքների տիրոջ բախտն եմ ես...
«Իսկ ուր է իմը, ասա, թէ դիտես»։
—Կերթաս այս ձորով, կըմտնես անտառ,
Այնտեղ կըգտնես բախտըդ անպատճառ...

XII

Ասաց թզուկը և անհետացաւ։
Մակար սրտատրոփ ուղևորեցաւ.
Յանկարծ ոտները քաշ տալով գօռով,
Հասաւ անտառը ցոյց տւած ձորով։
Որոնեց, կանչեց, ձայնեց նա երկար,
Բայց կորած բախտը չըկաւ ու չըկ՛ը...
Կասկածը, վախը և վիշտը սրտում՝
Թափառեց երկար՝ տխուր ու տրտում,
Մինչև որ արդէն պայծառ արևը
Աշխարհին տւաւ վերջին բարևը։

XIII

Արդէն դիշեր էր։ Մակարը յոգնած՝
Թաւշեայ խոտերում պառկած է, քնած։
Լիւս է անտառը, լիւս են սար ու ձոր,
Առուն է միայն երգում իր օրօր։
Իսկ գեղածիծաղ լուսինը պայծառ
Ջողքերը վերից թափել էր աշխարհն,
Ծառեր ու թփեր արծաթաջրել,
Նըրանց տուերով գետինը նախշել.
Նայում են, նայում աստղերը վերից,
Բայց չեն կշտանում շքեղ անտառից։

XIV

Երբ առաւօտը, որպէս կարմիր ծով,
Երկնի կամարը բռնկւեց բոցով—
Մակարը զարթնեց, նայեց իր չորս դին,
Եւ լսեց մի ձայն գոռը, ողբագին։
Եւ դէպի ձայնը բայլերով գնաց,
Եւ յանկարծ կանգնեց, ինչպէս քարացած։

Եւ ինչ է տեսնում—վոխտ, այլանդակ
Մի կմաղքացած զաղրելի էակ
Խոտերի միջին՝ յոգնած, ուժասպառ՝
Լալիս է պառկած, ողբում վշտահար...

XV

«Գարշելի՛, գծո՛ւծ, զազի՛ր արարած,—
Թքեց ու դոչեց Մակարը զլւած.—
Ես էլ կարծեցի՝ թէ մարդ է լալիս,
Ինձ նման՝ թշւառ դլխին վայ տալիս...
Ասա՛ ինձ, ո՛վ ես, նողկալի էակ,
Ինչո՞ւ ես շնթռել դու այդ թփի տակ,
Ագռաւի նման՝ կռռում անդադար,
Անճոռնի ձայնով թմղացնում անտառ...
—«Ջո բախտն եմ, Մակար, քո բախտը կորած»...
Մակարը ցնցւեց, մնաց քարացած։

XVI

«Օ՜, կո՛յր, դաւաճան, դու Բախտ անպիտան.
Թողել ես անտէր ինձ, անտիրական,
Քաղցած ու սոված այսքան ժամանակ
Ու եկել այստեղ, պառկել թփի տակ...
Աչքս ջուր կարեց քեզ սպասելով,
Լեզուս չորացաւ անունըդ տալով,
Ինչո՞ւ ես քնել, ինչո՞ւ չես գալիս՝
Ջո թշւառ տիրոջ բարիքներ տալիս։
Դէ՛, կանգնի՛ր, յիմա՛ր, վե՛ր կաց, բանի՛դ կա՛ց.
Սոված մեռնում եմ, վե՛ր կաց, տո՛ւր ինձ հաց»...

XVII

—«Դու ինքդ կանգնի՛ր, ես էլ կըկանգնեմ,
Դու ինքդ զարթի՛ր, ես էլ կըզարթնեմ.
Երբ աշխատում ես, ես կեանք եմ առնում,
Երբ ծուլանում ես, ինձ մահ է սպառնում։
Պարապ ու սարապ պառկում ես թախտին
Եւ իզուր տեղը կանչում քո Բախտին։

Բախտը դէ կոյր է, դէ էլ դաւաճան,
Նա աշխատանքիդ մէջ է, Մակար ջան,
Աշխատիր,—կըզամ ու բարիք կըտամ.
Քրտինքիդ մէջ եմ ես ամենայն ժամ...

---

84. ՎԱՅՐԵՆՆ ԵՒ ՑԱՆՕՒ ԹՌՉՈՒՆԸ

Բազէն ընտելացել էր տիրոջ հետ և միշտ թռչում էր մօտը, երբ որ կանչում էր. աքաղաղը փախուստ էր տալիս տիրոջից և ճըղաւում էր, երբ մօտենում էին իրան։ Մէկ անգամ Բազէն հարցնում է աքաղաղին.

—Դուք, աքաղաղ, երախտագէտ չէք. իսկոյն երևում է, որ գռեհիկ և ստրուկ ցեղից էք։ Մենք բազէներս թէ ուժեղ ենք և թէ արագաթռիչ և այսու ամենայնիւ մենք չենք փախչում մարդկանցից, այլ ինքներս ենք դիմում նրանց ձեռներին, երբ կանչում են մեզ։ Մենք չենք մոռանում, որ նրանք են կերակրում մեզ։

Աքաղաղը պատասխանում է նրան։

—Դուք չէք փախչում մարդկանցից նրա համար, որ երբէք չէք տեսած և ոչ լսած, որ մարդիկ երբևիցէ խորոված լինին Բազէներին, իսկ մենք ամեն բայլափոխում տեսնում ենք խորոված աքաղաղներ։

---

85. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՁԻՆ

Կուի տարի էր. մարդիկ փախչում էին թշնամիներից։ Գիւղացու ձին արածում էր դաշտումը. տէրը գնաց մօտը և ասաց.

—Ձուտ արա՝ հետս եկ, եթէ ոչ՝ թշնամիքը կըգան և քեզ կըտանեն։

—Ինձ ինչ կանեն որ տանեն, հարցրեց ձին։

—Քեզ կըբանեցնեն, պատասխանեց տէրը,—եթէ չըլսես, կըծեծեն։

—Միթէ դու էլ միևնոյնը չես անում, թէև քեզ հաւատարիմ եմ ծառայում։ Միևնոյն չէ ինձ համար, թէ ով պիտի լինի իմ տէրը, դու թէ մի ուրիշը։ Ուրեմն էլ ինչու պիտի վախենամ ես թշնամուց։

---

86. ԱՐԾԻՒԸ ԵՒ ՄԵՂՈՒՆ

—Նախանձելի չէ քո վիճակը,—ասաց Արծիւը Մեղուին,—բոլոր կեանքումդ աշխատում ես, բայց ոչ ոք քեզ չի ճանաչում, որովհետև դուք մեղուները՝ հազար հոգով էք աշխատում մէկ խորիսխ շինելու համար։ Ո՞վ կարող է որոշել, թէ որտեղ է քո շինածը։

—Ի՞նչ կարիք կայ որոշելու, պատասխանեց Մեղուն։ —Ի՞նչ վնաս նրանից, որ ինձ չեն ճանաչիլ։ Բաւական է և այն, որ կըճանաչեն և կըսիրեն մեր շինած մեղրը, և ես ինձ բախտաւոր եմ զգում նրանով, որ խորիսխների մէջ կայ և իմ շինած մեղրի կաթիլը։

—Ուրեմն քեզ թըւալի չէ իմ և քո վիճակի տարբերութիւնը,—ասաց արծիւը։—Չէնց որ վեր եմ բարձրանում և պըտըտւում կապոյտ երկնակամարի տակ, գետնի երեսից՝ ինձ է նայում և ճանաչում ամեն արարած. թէ գազաններ և թէ թռչուններ՝ իրանք թաքնւած՝ աչքերը ինձանից չեն հեռացնում։ Ահա թէ ինչպէս են ճանաչում ինձ մեծերից սկսած մինչև փոքրիկը։

—Ճանաչում են, այո, ճանաչում, որովհետև վախում են քեզանից, ասաց մեղուն։—Ես երբէք չէի ցանկանալ, որ ինձ այդպէս ճանաչէին։

---

87. ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐՏԵՐԸ

Մէկ անգամ բոլոր նապաստակները հաւաքւեցին մէկ տեղ և սկսեցին ողբալ իրանց վիճակի վրայ։

—Այս ինչ կեանք է մեր կեանքը,—ասում էին։ Ով

ասես՝ մեզ է կոտորում, ոչընչացնում։ Էլ մարդ ասես, թէ շուն, էլ գազան ասես թէ թռչուն, բոլորն էլ մեզ վրայ են յարձակւում։ Մի՛թէ մահն աւելի լաւ չէ, քան թէ մեզ նման միշտ երկիւղի մէջ ապրելը։ Ինչից ասես, որ մենք չենք դոզում, սարսափում։

—Գնանք, գնա՛նք,—գոչում են միաբերան ամենքը,—գնանք ջուրը դառնանք, կոտորւենք մէկ անգամ, պրծնենք։

Եւ սկսեցին վազել դէպի մօտակայ լիճը։ Նապաստակների ոտի ձայնը որ լսեցին ջրափում եղած գորտերը, բոլորն էլ սարսափելով՝ թափւեցին ջուրը։

Այս որ տեսան նապաստակները, նրանց գլխաւորը, որ ամենի առջևն էր գնում, կանչեց։

—Կանգնեցէ՛ք, տղե՛ր, կանգնեցէ՛ք, ջուրը չըթափւենք։ Նայեցէ՛ք ա՛ստ, մեզանից վատ կեանք ունցողները էլ կան։ Մենք հօ մի բան չարինք գորտերին, բայց նրբանք մեզանից վախենալով՝ բոլորն էլ ջուրը թափւեցին։

---

88. ԱՐԱԳԻԼՆԵՐ

Փոքրիկ քաղաքի ծայրում, պատրաստւել էր արագիլի բոյնը։ Նրա մէջ նստել էր մարին՝ իր չորս ճուտի հետ, որոնք բնից դուրս էին հանել իրանց փոքրիկ, սև կոուցները.—դեռ նրանց կոուցները չէին կարմրել։ Բնի մօտ, կոուրի ամենաբարձր տեղը, լարի նման ձգւած և մի ոտը վեր ծալած՝ կանգնած էր որձակը. անգործ չըկանգնելու համար էր նա իր ոտը ծալել։ Նա այնքան անշարժ էր կանգնած, որ կարելի էր կարծել թէ փայտից է շինած։

Մի խումբ մանուկներ խաղում էին փողոցում. տեսնելով արագիլին՝ նրանցից ամենաքաջն ըսկսեց երգել արագիլների մասին հին երգը, որպէս գիտէր և որքան յիշում էր. նրան ձայնակցեցին մնացած մանուկները.

«Ա՛յ արագիլ, ճերմակ փետուր,
Ինչքա՛ն ողջ օր կանգնել ես
Մի հատ ոտով այդպէս լուռ.
Պահապա՞ն ես դու, ի՞նչ ես։

Թէ ուզում ես պահպանել
Ձագուկներդ անվտանգ.
Մի հոգա դուբ տեղը,
Մենք նրանց կըզողանանք։
Մէկին ծառից քաշ կըտանք,
Մէկին լիճը կընետենք.
Միւսին կըծակծըկենք,
Փոքրիկին էլ ողջ-կենդանի
Թէժ բոցի մէջ կընետենք.
Բեզ էլ իսկի մենք չենք նայի,
Ասես քեզ էլ հարցնենք»։

—Լսի՛ր, տե՛ս ինչ են երգում մանուկները,—ասացին ձագերը,—նրանք ասում են թէ մեզ կըկախեն կամ ջուրը կըգցեն։

—Պէտք չէ ուշադրութիւն դարձնել նրանց վրայ,—ասաց մայրը։—Մի լսէք և ոչինչ չի լինիլ։

Բայց չարաճճի մանուկները չէին հանգարտւում, երգում և ծաղրում էին արագիլներին. նրանցից միայն մէկը, Պետի անունով, չէր ուզում միանալ ընկերներին և ասում էր, թէ անասուններին ծաղրելը, անհանգստացնելը մեղք է։

Իսկ մայրը մխիթարում էր ձագուկներին։

—Ուշադրութիւն մի՛ դարձնէք,—ասում էր նա։—Տեսէ՛ք, ինչպէս հանգիստ կանգնել է ձեր հայրը, այն էլ մի ոտի վրա՛յ։

—Բայց մենք սարսափում ենք,—ասացին ճուտերը և գլխիկները թաքցրին բնի մէջ։

Միւս օրը մանուկները կրկին փողոց վազեցին, արագիլներին տեսան և կրկին սկսեցին երգել՝

«Մէկին ծառից քաշ կըտանք,
Մէկին լիճը կընետենք»...

—Ուրեմն մեզ կըկախեն կամ ջո՛ւրը կըգցեն,—կրկին հարցրին ճուտերը։

—Ձեզ ասում են, թէ ո՛չ, ո՛չ.—պատասխանեց մայրը։

Ա՛յ, մենք շուտով վարժութիւնները կըսկսենք։ Դուք պէտք է թռչել սովորէք։ Իսկ երբ կըսովորէք, մենք մարգագետինը հիւր կըգնանք գորտերին։ Նրանք մեր դէմը, ջրի մէջ, նստած կերգեն։ «Եռափ—եռափ—եռափ»... Իսկ մենք կուտենք նրանց,—այ, ուրախութիւն կըլինի։

—Իսկ յետո՞յ,—հարցրին ճուտերը։

—Յետոյ մենք, բոլոր արագիլներս, կըհաւաքուենք աշնան զօրահանդէսին։ Ահա այդ ժամանակը պէտք է արդէն լաւ թռչել իմանալ։ Դա շատ կարևոր է։ Ո՛վ վատ թռչէ, նրան զօրապետը կըծակէ իր սուր կտուցով։ Այդպէս ուրեմն, երբ վարժութիւնները սկսուեն, աշխատեցէք, որքան ձեր ուժերը ներում են։

—Բայց և այնպէս մեզ կըծակծկեն մանուկները, ինչպէս ասացին նրանք։ Լսիր, էլի երգում են։

—Ինձ լսիր և ոչ թէ նրանց,—ասաց մայրը։—Զօրահանդիսից յետոյ մենք այստեղից կըթռչենք հեռու, հեռու, դէպի բարձր սարերի, մթին անտառների այն կողմի տաք երկիրները, դէպի Եգիպտոս։ Այնտեղ քարէ եռանկիւնի տներ կան, որոնց գագաթները յենուած են ամպերին. դրանց բուրգեր են անուանում։ Նրանք շատ հին ժամանակներում են շինուած, այնքան հին, որ ոչ մի արագիլ չի կարող իրան երևակայել։ Այնտեղ նոյնպէս գետակ *) կայ, որը վարարում և ափերից դուրս է գալիս, այն ժամանակ շրջակայքը ծածկուում են ալիմով։ Տիղմի մէջ քեզ համար մանր ես գալիս և գորտեր ես անուշ անում։

—Օճ—բացականչեցին ճագերը։

—Այո՛, շատ հրապուրիչ է։ Այնտեղ ամեն Աստծու օր բանըդ, գործդ ուտելն է։ Հէնց այն ժամանակ, երբ այնտեղ մենք երջանիկ պիտի զգանք մեզ, այստեղ ծառերի վրայ մի հատիկ տերև անգամ չի մնալու, այնպէս ցուրտ է լինելու, որ ամպերը սառելու են և կտոր-կտոր թափւելու են գետնի վրայ սպիտակ կտորտանքներով։

Նա ուզում էր ձիւնի մասին պատմել նրանց, բայց չըկարողացաւ լաւ բացատրել։

*) Նեղոս մեծ գետն է, որ արագիլներին թւում է, թէ գետակ է։

—Իսկ այդ վատ երեխաները նոյնպէս կըսառի՞ն կտոր-կտոր,—հարցրին ճագերը։

—Ո՛չ, ուղղակի կտոր-կտոր չեն սառիլ նրանք, բայց սաստիկ կըմրսեն։ Մութ սենեակում երկար նստելուց կըձանձրանան և չեն համարձակւիլ նոյն իսկ քթները դուրս հանել փողոց։ Իսկ դուք այդ ժամանակ պէտք է արձակհամարձակ թռչէք օտար երկրներում, ուր ծաղկում են ծաղիկները, և պայծառ փայլում է տաք արեգակը։

Բաւական ժամանակ անցաւ. ճուտերը բաւական մեծացան և կարողանում էին արդէն կանգնել բնի մէջ և իրանց շուրջը նայել։

Որձակ-արագիլը նրանց համար ամեն օր վառաւոր գորտեր և ուրիշ ամեն տեսակ անուշ-անուշ բաներ էր բերում. ի հարկէ, ինչ որ կարողանում էր գտնել։ Իսկ ինչպէ՞ս զարմացնում էր նա իր ճագերին զանազան ծիծաղելի բաներով։ Գլուխը տանում, հասցնում էր պոչին, կտուցով այնպէս էր չըրթ—չըրթացնում, որ կարծես նրա բկի մէջ ճոճուան լինէր, և նրանց պատմում էր ճահիճների մասին զանազան պատմութիւններ։

—Դէհ, հիմա արդէն վարժութիւնները սկսելու ժամանակն է,—ասեց մայրը մի գեղեցիկ օր, և ճագերը ամենքը դուրս եկան բնից և մի կերպով կանգնեցին կտուրի վրայ։ Տէր Աստուած, ինչպէ՞ս նրանք տատանուում, ժաժ էին գալիս. թևերով աշխատում էին հաւասարակշռութիւնը պահպանել, բայց և այնպէս քիչ էր մնում, որ վայր ընկնէին։

—Ինձ վրայ նայեցէք,—ասեց մայրը։ Գլուխներդ, այ, այսպէս պահեցէք, ոտներդ՝ այսպէս։ Մէկ-երկու։ Ա՛յ, ինչը կօգնէ մեզ՝ կեանքի մէջ ճանապարհ հարթելու։—Եւ նա իր թևերով մի քանի արագ շարժումներ արաւ։ Ճուտերը անշնորհք կերպով դէպի վեր թռան, բայց—թրամփ, վայր ընկան։ Ամենքն էլ այնպէս մեկնուեցին, որ... Նրանց թևերը դեռ թոյլ էին։

—Ես չեմ ուզում վարժւել.—ասեց ճուտերից մէկը և մազլցելով բարձրացաւ, մտաւ բոյնը։—Ես իսկի չեմ էլ ուզում թռչել, գնալ տաք երկիրները։

—Ուրեմն դու ուզում ես ձմեռը այստեղ սառիլ: Ուզում ես, որ անպիտան ագռաները գան և կախեն, ջնջրը գցեն կամ այրեն քեզ: Սպասիր, այս րոպէիս կրկանչեմ նրանց:

—Վռւյ—վռւյ—վռւյ,—ասեց արագիլի ճուռը և կրկին ընկից դուրս ցատկեց:

Երրորդ օրը նրանք արդէն շատից-քչից թռչկոտում էին և երևակայում էին, թէ արդէն կարող են տարածած թևերով օդի մէջ կանգնել, բայց... իսկոյն շրըմփացին կատրի վրայ: Պէտք էր թևերով դեռ էլի աշխատել:

Այդ միջոցին մանուկները հաւաքւեցին և սկսեցին երգել.

«Ա՜յ արագիլ, ճերմակ-փետուր»...


—Թռչենք—գնանք և նրանց աչքերը կատրով հանեն,—հարցրին արագիլի ձագերը:

—Ո՛չ, հարկաւոր չէ,—ասեց մայրը:—Աւելի լաւ է, ինձ լսեցէք, սա շատ հարկաւոր գործ է: Մէկ—երկու—երեք: Հիմա դէպի աջ թռչենք: Մէկ—երկու—երեք: Հիմա դէպի ձախ, ծխնելոյզի շուրջը: Շատ լաւ: Ձեր թևերի վերջին շարժւածքը այնպէս հրաշալի աջողւեց, որ ես թոյլ եմ տալիս ձեզ՝ վաղը ինձ հետ միասին ճանապարհ ընկնել դէպի ճահիճը: Այնտեղ կը ժողովւեն շատ ուրիշ սիրունիկ ընտանիքներ իրանց երեխաներով, պէտք է ձեզ ցոյց տաք: Ես ուզում եմ, որ դուք ամենից աւելի աչքի ընկնէք: Գլուխներդ բարձր պահեցէք. այդպէս աւելի գեղեցիկ և աւելի ազդու է:

—Բայց մի՞թէ մենք չըպիտի վրէժ առնենք այդ անպիտան երեխաներից, հարցրին ձագերը:

—Թող նրանք կոկորդները պատռեն, որքան ուզում են: Իսկ դուք թռէք դէպի ամպերը. մենք կրդնանք բուրդերի երկիրը, իսկ նրանք այստեղ ձմեռ ժամանակ կը սառչին, ոչ մի կանաչ տերևիկ կամ անուշ խնձորիկ չեն տեսնիլ:

—Բայց և այնպէս մենք նրանց հախից կրգանք, շշնջացին արագիլի ձագերը և շարունակեցին վարժութիւնները:



Ամենքից աւելի կուսաէրը ամենափոքր մանուկն էր, նա, որ առաջինը սկսեց երգել արագիլների մասին։ Նա վեց տարեկանից աւելի չէր լինել, թէև արագիլի ճուտերը կարծում էին, թէ հարիւր տարեկան է.—չէ՞ որ նա իրանց հօրից ու մօրից շատ մեծ էր, և ինչ էին հասկանում թռչունները մանուկների և հասակաւոր մարդկանց տարիքի մասին։ Եւ ահա ճուտերի ամբողջ վրէժը պիտի թափւէր այդ մանուկի վրայ, որ ծաղրածու մանուկներից ամենից խռովարարը, անհանգիստը և անզուսպն էր։ Ձագերը սաստիկ բարկացած էին նրա վրայ և որքան մեծանում էին, այնքան աւելի քիչ էին ուզում նրա վիրաւորանքը տանել։ Վերջիվերջոյ մայրը խոստացաւ մի կերպով վրէժ առնել անպիտան մանուկից, բայց յետոյ, դէպի տաք երկիրները ճանապարհւելուց առաջ։

—Տեսնենք սկզբից, ինչպէս պիտի պահէք ձեզ դըլխաւոր զօրահանդիսի ժամանակ։ Եթէ գործերդ վատ գընան, և զօրապետը իր կտուցով ծակէ ձեր կուրծքը, չէ՞ որ մանուկները իրաւացի կըլինին։ Մ՛յ, տեսնենք։

Կրտեսնես,—ասացին ճուտերը և եռանդով սկսեցին վարժւել։ Օրէցօր գործը աւելի և աւելի լաւ էր գնում և, վերջապէս, նրանք սկսեցին այնպէս թեթև ու գեղեցիկ թռչել, որ նայելուց մարդ չէր կշտանում։

Հասաւ աշնան զօրահանդէսը. արագիլներն սկսեցին պատրաստւել, որ թռչեն դէպի տաք երկիրները։

Նրանք անտառների և լճերի վրայով յետ ու առաջ էին թռչում, փորձում էին իրանց ուժերը. չէ՞ որ ամպին ճանապարհորդութիւն կար առաջները։ Մեր ճուտերը ընտութիւնից լաւ դուրս եկան և ասացան ոչ թէ պոչով գրօ, այլ տանեցիկու՝ գորտի հետ միասին։ Նրանց համար այդ թւանշանից աւելի չէր կարող լինել,—չէ՞ որ գորտին կարելի էր ուտել, ինչպէս և արին նրանք։

—Հիմա պէտք է վրէժ առնենք,—ասացին Գրանք։

—Լաւ,—ասեց մայրը։—Մ՛յ, ինչ եմ մտածել եմ,—դա ամենից լաւը կըլինի։—Ես գիտեմ թէ որտեղ է գըտնըւում այն լճակը, որի մէջ նստում են փոքրիկ մանուկները, մինչև որ արագիլը վերցնում, տանում է նրանց

տուն։ Փոքրիկ, չքնաղ մանկիկները նստում են և հրաշալի երաղներ են տեսնում, որոնց նմանը յետոյ այլ ևս չըպիտի տեսնեն երբէք։ Ամեն ծնող շատ է ուզում այդպիսի մանկիկ ունենալ, իսկ մանուկները ուզում են այդպիսի փոքրիկ եղբայր կամ քոյրիկ ունենալ։ Թռչենք, գնանք լճակի մօտը, վերցնենք այնտեղից մանուկներին և տանենք այն տները, որոնց մանուկները չեն ծաղրել և չարչարել արագիլներին. իսկ վատ ծաղրածուները ոչինչ չեն ստանալ։

—Իսկ այն չար մանկանը, որ առաջինը սկսեց մեզ ծաղրել, նրան ինչ պիտի տանք,—հարցրին մատղաշ արագիլները։

—Լճակի մէջ մի մեռած երեխայ է ընկած, նա այնքան քնել է, որ մեռել է—հէնց նրան տանենք և տանք այն չար մանուկին։ Թող լայ, որ իր համար մեռած եղբայր ենք բերել։ Իսկ այն բարի մանուկի համար—յուսով եմ, որ դուք չէք մոռացել նրան—որ ասեց թէ անասուններին չարչարելը մեղք է, միանգամից բերենք թէ եղբայր և թէ քոյրիկ։ Նրա անունը Պետի է. թող մենք էլ, ի պատիւ նրան, Պետրոսներ կոչենք։

Ինչպէս ասացին, այնպէս էլ արին։



89. ՍԱՐԴՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Չերամը մետաքս էր շինում և գոյնզգոյն կոկոնները կախկախում կաղնու թարմ ոստերից կապած խուրձի վրայ, իսկ սարդը տան մի անկիւնը բաշւած՝ իր ցանցն էր հիւսում և ծիծաղում շերամի վրայ, ասելով.

—Չերամ եղբայր, դու շատ դանդաղ ես տանում քո գործը և շինածդ էլ մի բանի նման չէ. բայց ես, նայիր, տես ինչ զեղեցիկ բան եմ շինել, և տես ինչքան երկար են իմ թելերը։

Չերամը պատասխանեց.—Սարդ եղբայր, դու գիտես ինչ կընշանակէ բարուքիւն։

—Ո՛չ, չգիտեմ։

—Այդ նրանիցն է, որ դու չար ես, քո գործն էլ չարութեան գործ է։ Դու քո երկայն թելերով մի թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանճերին որսաս և ծծես նրանց արիւնը, իսկ իմ գործը բոլորովին ուրիշ բան է, սարդի բնութիւնից և խելքից վեր է։

—

Չերամն ու մեղուն են բարութեան նշան,
Իսկ սարդն ու բզէտը նշան չարութեան.
Քնքոյշ շերամի պէս եղիր անարատ,
Թէկուզ չար սարդերը ծիծաղին վրդաղ։



---

90. ԱՐՋԸ ՆՒ ՄԵՂՈՒՆ

Ընտաւի խորքում մեղուն իր համար մի փուչ ծառի մէջ՝ ինչպէս փեթակում, մի բոյն էր շինել, մէջը ձագ հանել և անուշ մեղրով բջիջը լցրել։

Չըվիտեմ ինչպէս, մի օր արջուկը առաւ այդ մեղրի անուշիկ հոտը. մըրթմըրթաց, փընթփընթաց, ծառնի վեր կանգնեց և թաթերուները ծառի մէջ կոխեց։

Մեղուն տպտպաց, տպտպացին ձագերը, արջը չըքաշեց իր բըդոտ թաթերը, ողջ բունը քանդեց, ձագերը ջարդեց, խորիսխը հանեց, լափեց, լափլըփեց։

Մեղուն որ տեսաւ իր ձագուկները այս անգութ արջի ոտքի տակ ճզմւած, դուռաց, ղրդըռաց, խայթեց արջի աչք, և ինքն էլ, անշունչ ընկաւ ծառի տակ։

---

91. ԱՂԻՒՆ ՈՒ ԱՂԱՒՆԻՆ

Աղւէսը մի աղաւնի տեսաւ ծառի վրայ, գնաց ծառի տակը և դունչը վեր ցըցելով՝ ասեց.

—Բարև քեզ, իմ աղաւնեակ, իմ սրտակից բարեկամ. ինչպէս ես, լաւ ես, առոյգ ես. ինչպէս են ձերոնք, լաւ են, ինչու ես մենակ մնացել։ Ձայնդ. հեռւից լսեցի, իսկոյն իմացայ որ դու ես, ասացի՝ մէկ գնամ տեսնեմ բարեկամիս, շատ ժամանակ է չեմ տեսել»։

Աղաւնին պատասխանեց.—Ընդհակառակ եմ, աղւէս պարոն, որ ինձ չես մոռացել, թէպէտ իմ միտս չէ, թէ մենք երբ ենք բարեկամ եղել. շատ ժամանակ է էլ այս կողմերումը չէիր երևում, ես հէնց իմացայ, թէ դու սատկել ես արդէն»։

Աղւէսն այնպէս ձևացաւ, որ իբր թէ չի լսում աղաւնու ասածը, և ասեց նրան.—Ի՞նչ ես ասում, հոգիս, ձայնդ ականջս չի հասնում, չեմ իմանում։ Ինչու չես ցած գալիս։ Եկ այս սիրուն կանաչկոտ տեղը մենք կզբօս-

նենք, եթէ ոչ՝ դու ծառի վրայ, ես գետնին, ինչպէս իմանանք մէկմէկու։

Աղաւնին պատասխանեց.—Չեմ կարող իջնել, վախենում եմ, թռչուններից համար գետնի վրայ մարդ գալը երկիւղալի է։

—Չըլինի թէ ինձնից ես վախենում. ա՛խ, ինչ եմ ասում ես էլ, այդ ինչպէս կարելի է։

—Ո՛չ, միայն դու խօմ չես, մի՛թէ ուրիշ գազանները քիչ կան։

—Ճշմարիտ է, կան, բայց հիմա հրաման է դուրս եկել, որ այսուհետև ոչ մէկը միւսին մի վնաս չըտայ։ Հիմա գազանները էլ իրաւունք չունին չարութիւն անելու, և չեն անում։

Մի՛—թէ... այդ ինչ լաւ է եղել։ Ես էլ զարմացայ, թէ այս ինչից էր, որ մեր աղէսը էլ չի վախենում շներից, որ ահա գալիս են վազելով։

Շների անունը որ լսեց աղէսը, ջանը դող ընկաւ. պոչը ներս քաշեց, ականջները սրեց և փախչելու պատրաստուեց։ Աղաւնին այս բանը նկատելով՝ ասեց. «Ինչո՞ւ ես շտապում, բարեկամ, սպասիր, դեռ խօսում ենք. փառք Աստուծոյ, հիմա խօմ հրաման կայ, շներից էլ ահ չունիս»։

—Է՛հ, ով գիտէ, կարելի է թէ շները դեռ չեն լսել որ հրաման է դուրս եկել, որ էլ շնութիւն չանեն, ասեց աղէսն ու շուտով փախաւ, որ շների ճանկը չընկնի։

---

92. ԱՐՋԸ ԵՒ ԳԱՑԸ

Գայլը մի գառը յափշտակած տանում էր ուրախ ուրախ, որ մի ապահով տեղ նախաճաշիկ անէ։

Որտեղից որ էր, հանդիպեց նրան արջը և ճանկռըփեց խլեց գառը։

Գայլը մի կողմ քաշուեց և արջից բաւական հեռու կանգնելով՝ սկսեց աղիողորմ օռնալ ու կոնձկոնձալ դունչը դէպի երկինք ցըցած։

—Այդ ինչ ես աղաղակում, մէկ թարգմանիր ինձ, ասաց արջը, որովհետև գայլն արջերէն գիտէր, իսկ արջը չըգիտէր գայլերէն։

Գայլը պատասխանեց.

—Ես դէպի երկինք եմ աղաղակում և ասում, որ ուժեղները թոյլերից ոչ վախում են և ոչ ամաչում, այս ինչ օրէնք է։

—Ինչո՞ւ այդ մասին դժգոհ չէիր գառը յափշտակելիս,—պատասխանեց արջը, և դրանով արդարացրեց իրան։

---

93. ԼՈՒՍՆԱՀԱՋ

—Հայրիկ, ինչո՞ւ մեր Բօղարը
Միշտ հաչում է լուսնի վըրան,
Մի՛թէ պայծառ լուսնեակը
Մէկ վնաս է տալիս նըրան։
—«Ո՛չ, որդեակ իմ, ոչ թէ վնաս,
Այլ լոյս, միայն լոյս է տալիս,
Իսկ շանն—իբրև գայլի ցեղի—
Լոյս գիշերը դուր չի գալիս։
Բայց լուսինը խօմ չըգիտէ,
Որ իր վրայ հաչողներ կան,
Նա լուռ ու մունջ, բակ բոլորած,
Շարունակում է իր ճամպան.
Մենք էլ, որդեակ, լուսնի նման
Պէտք է լոյս տանք մութ աշխարհին,
Եւ համարենք, թէ չենք լսում
Մեզ վրայ դուր հաչողներին»։

---


94. ԳԱՑԻ ԵՒ ՍԿԻՒՌ


Սկիւռը, ծառի վրայ թռչկոտելիս, յանկարծ վայր ընկաւ մի գայլի վրայ, որ քնած էր ծառի տակին։

Գայլը վեր թռաւ, բռնեց սկիւռին և ուզեց ուտել։ Սկիւռն աղաչանք արաւ, որ իրան բաց թողնէ։ «Թող ինձ, ասաց, գայլ եղբայր, ինչ ուզենաս, քեզ կըտամ։

Գայլն ասեց.—Ճաւ լաւ, քեզ կըթողնեմ, եթէ ինձ կասես, թէ պատճառն ինչ է, որ ես միշտ տխուր եմ, միշտ դարդոտ, իսկ դուք, սկիւռներդ, միշտ ուրախ էք, միշտ զըւարթ, և շարունակ թռչկոտում էք ծառերի վրայ և խաղում։

Սկիւռն ասեց.—առաջ թող ինձ ելնեմ ծառը, այնտեղից կըտամ քո պատասխանը։





Գայլը բաց թողեց։ Սկիւռը վեր ելաւ ծառը և այնտեղից ասեց գայլին.—Քո տխրութիւնդ նրանից է, որ դու չաը ես, չարերն ուրախութիւն չունին։ Իսկ մենք ուրախ ենք նրա համար, որ բարի ենք. ոչ ոքի վատութիւն չենք անում։

Գայլը շատ բարկացաւ և չարութիւնից ուզում էր կատաղել. բայց էլ ի՞նչ կարող էր անել. սկիւռը ծառի վրայ էր և գայլից շատ բարձր։

---

95. ԴԱՌՆ ՈՒ ԴԱՑԸԼԸ

Հնուց մնացած մի լաւ առակ կայ, և շատ ուղիղ է, Ասւած է վկայ, որ հզօրի դէմ, թէկև մեղաւոր, անզօր արդարն է լինում յանցաւոր։

Այսպէս մէկ անգամ շողից նեղացած, հօտից մոլո-

րած, մի ծարաւ գառնուկ խայտալով վազեց դէպի առւակը, որ քիչ ջուր խմի, ծարաւը կոտրի, փոքր ինչ զովանայ, վազէ տուն գնայ։

Այս իսկ րոպէին, որտեղից որտեղ, մի գայլ դուրս պրծաւ և կամաց կամաց, սուս փուս, զողի պէս, շան կերպարանքով, գառին մօտեցաւ։ Ի՞նչ ասել կուզի, թէ ինչու համար. բաղցած գազան, փափկիկ գառնուկ, կառնէը կըտանէը և անուշ կանէը։

Բայց մէկէնիմէկ նա այդպէս չարաւ, իսկոյն չըտարաւ։ Չըվիտեմ որտեղ՝ մեր ծաղկաթաւալն ուսում էր առել, օրէնք սովորել. որպէս զի չասէն, թէ գառն արդար էր, գայլը՝ մեղաւոր, ուզեց իր գործը խեղճ գառնուկի հետ օրէնքով տեսնել։ Բայց ինչ էլ լինէը, գարձեալ գազան էր, կոպիտ բաւական, հետը չըկար վրան ուսման, կըթուըթեան, ինչպէս կըտեսնէը նրա խօսքերից, վարուելու ձևից։

—Ա՛յ դու անպիտան, կենդանի անբան,—ասում է գառին գայլն ուսումնական,—ինչ իրաւունքով և ո՛ր օրէնքով համարձակուել ես իմ մաքուր ջուրըս, պարզ խմելիքըս քո պիղծ բերանով այսպէս պղտորել աւազով, ցեխով և հազար տեսակ աղբ ու գիրիլով։ Քո այդ յանդուգն չարութեան համար գիտես ինչպիսի պատիժ կայ գրւած։

—Վսեմափայլ տէր, ասում է գառը, ես գիր չըգիտեմ, բայց թէ թոյլ կըտաս, այսօրանը կասեմ, որ ջուրը ցածից վերև չի գնալ, դու էլ կիմանաս։

—Ի՞նչ ես դուրս տալիս, ես չեմ հասկանում. ջուրը ներքևից վերև չի գնալ, այդ ո՛վ չըգիտէ, էլ ասելդ ի՞նչ է։

—Իմ ասելն այն է, վսեմափայլ տէր, որ դու վերևից եկար ղէպի ինձ։ Այդ էլ որ չասենք, հէնց ջրին նայենք, շատ լաւ կըտեսնենք, թէ ինչքան պղրդ է, ինչքան մաքուր է։ Ջուր է, ճշմարիտ, քո բարկութիւնը։

—Տեսէք, մէկ տեսէք այս ըստահակին, սրա ասածին։ Համարձակում ես, կենդանի անբան, տալ ինձ պատասխան։ Քո խելքով՝ ուրեմն ես սուտ եմ խօսում, շառ եմ հնարում։ Ես լաւ եմ յիշում և չեմ մոռացել, որ մէկէլ

տաբին էլի դու էիր, որ յանդգնեցար, ինձ ընդդիմացար, և հայհոյելով՝ այստեղից փախար, ձեռքիցըս պրծար։

—Ա՛խ, ի՞նչ ես ասում, տէր իմ պատուական, դեռ ես չըկամ ես մի տարեկան։

—Ուրեմն եղբայրդ էր. էլ ո՛վ կըլինէր այնքան քեզ նման, քեզ պէս անպիտան։

—Ողորմած տէր իմ, ես եղբայր չունիմ։

—Ինձ համար մէկ է, ով կուզի լինի. մի՛թէ դու չունէիս բաւոր, խնամի։ Մէկ խօսքով նա ձեր յիմար ցեղից էր։ Դուք, ձեր շները, ձեր հովիւները, ինձ չսիրելով, իմ չարն ուզելով, երբ որ կարենաք, միշտ վնաս կըտաք։ Այդ մեղքի համար, ես հիմա պիտեմ, թէ քեզ ինչ կանեմ։

—Ա՛խ, Աստուած իմ, Աստուած.— գառն աղաղակեց— ինչ է իմ մեղքըս, սա չըհաստատեց...։ Վսեմափայլ տէր, ողորմած եղիր, ես մեղաւոր չեմ...

—Լռի՛ր, անպիտան, ոչխարի լակոտ. իմ բան ու գործըս խօսք չի կարւել, որ քո մեղքերդ ըսկսեմ քննել։ Ե՛կ գնանք անտառ, ես այնտեղ կանեմ քո դատաստանը. —ասեց գազանը, և մեր գառնուկին դրաւ շալակին...

---

96. ԲԱԶԷՆ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ

Գիշատիչ բազէն իր սուր ճանկերում
Բռնած՝ աղաւնուն պատառոտում էր.
«Էր՛, ճանկերս ընկար. դուր ես աշխատում
Պրծնիլ իմ ձեռքից, զուր այդ հնարքները։
Խաբեբա՛յ, ես ձեզ լաւ եմ ճանաչում,
Հայհոյիչները էք, խորամանկ օձեր.
Ձեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում,
Դուք էք մշտական մեր թշնամիները։
Բայց կան աստուածներ վրէժխնդրութեան,
Նրանք ամենքին կանեն դատաստան։
—Ա՛խ, ուր էր, ուր էր, թէ այդպէս լինէր՝

Չարագործներին խստութեամբ պատժէր».
Հազիւ հառաչեց աղաւնին մարած,
Սուր-սուր ճանկերում սաստիկ սեմրւած։
«Ի՞նչպէս, ինչպէս, այդ ինչ ասացիր,
Ա՛խ դու ուրացո՛ղ, մի մէկ էլ կրկնիր.
Դու չես հաւատում հա՛, աստուածներին,
Նախախնամութեան այն հզօր ուժին։
Է՛հ, ուզում էի ազատել ես քեզ,
Բայց, չէ՛, տեսնում եմ, դու արժանի չես,
Ուրեմն մեռիր, զուր է փրկութիւն,
Անաստուածներին չըկայ թողութիւն»։

---

97. ԽՈԶՆ ԵՒ ԿԱՂՆԻՆ

Խոզը՝ հաստարմատ կաղնու տակ կանգնած,
Կերաւ կաղինը՝ պլուխը կախած,
Մինչև կոկորդը կերաւ ու լըցւեց,
Ապա կաղնու տակ ձգւեց, մրափեց։
Յետոյ, զարթնելով՝ բացեց աչքերը,
Եւ բուռթ կնճիթով սկսեց փորել
Այն կաղնի ծառի հաստ արմատները,
Որից այդ ժամին անունդ էր առել։
—Էտ ինչ ես անում, էյ խոզ անիրաւ,—
Կանչում է ծառից մի խելօք ագռաւ,—
«Ծառն արմատով է, որ ծառ է ու կայ,
«Առանց արմատի նա կըչորանայ»։
—Իսկ ինձ ինչ վնաս, թէ կըչորանայ,
Ծածից ասում է նրան խոզն ագահ,
«Ես դրա մասին քնաւ չեմ ցաւում,
«Կաղինն է իմը, նա է դիրացնում։
Իսկ ծառը բարձրից՝ «Ապերախտ, ասաց,
«Ինձնից են թափւում կաղինները ցած,
«Թէ վերև նայել դու կարենայիր,
«Կոյր աչքերովդ լաւ կըտեսնէիր։

98 ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Ծառերն անտառում շատ որ նեղացան կացնի ձեռիցը և էլ չիմացան ինչ անեն, որ իրանց գլուխը պահեն, խորհուրդ արին, որ մի հնար գտնեն։—Կացինն ո՛վ է որ՝ մեզ կարողանայ զօռ անել, յաղթել, ինչ մեծ բան է նա,—այսպէս ձայն տըւաւ ծառերից մէկը։—Մենք որ կոթ չըտանք, կացինն ինչ է որ յանդգնի անել մեզ կտոր-կտոր։

Թող իմացողն իմանայ և իզուր տեղը կացնից չընեղանայ։ Ով որ կոթ կըտայ պողպատէ կացնին, թող երկու ձեռքով խըթէ իր գլխին։

---

99. ՕՏԱՐՆ ՈՒ ՀԱՐԱՋԱՏԸ

Մուրճի զգուշաւոր, դանդաղ զարկերով,
Վարպետը չոքած՝ ոսկի էր կոփում,
Իսկ նրա ընկերը մի ուրիշ մուրճով
Նոյն զգուշութեամբ արծաթ էր ծեծում։

Հարւածների տակ ոսկին նազելի
Հառաչում էր մեղմ, դանդաւտում ցաւից,
Ըրծաթը ձայնով՝ հազիւ լսելի՝
Լալիս էր, խնդրում զթութիւն մուրճից։

Անցորդը թողեց ոսկին ու արծաթ
Եւ շարունակեց իրա ճանապարհ,
Երբ յանկարծ լսեց բարձրաձայն դանդատ,
Լաց ու աղաղակ, հառաչ ու հարայ...

Ջլոտ ձեռքերով մօտիկ զարբնոցում
Մարդիկ երկաթ էին խիստ զարբնում,
Երկաթը կռում ծանր մուրճերով,
Անխնայ ջարդում, տափակացնում...

Անցորդը կանգնեց զարբնոցի դիմաց,
Դարձաւ հեղնանքով երկաթին ասաց.

—«Ինչ ես հաւաքել աշխարհը գլխիդ,
Անճոռնի մետաղ, զռեհիկ, կոպիտ,

Նայիր՝ թէ ինչպէս արծաթն ու ոսկին
Դիմանում են քաջ մուրճի զարկերին.
Իսկ դու այնպիսի գոռոց ես հանում,
Կարծես նրանցից աւել ես տանջւում»...

—«Այո՛, ո՛վ անցորդ, ճիշտ ես նկատել,
Ես ցաւ եմ ըզգում շատ ու շատ աւել.
Նոցա հարւածները օտարն է տալիս,
Իսկ ինձ... հարազատ մուրճը երկաթից...

---

100. ԱՆՄԻՏ ԵԶՆԵՐ

Երեք եղբ միասին դաշտումն արածում էին։ Եզներից մէկն սպիտակ էր, մէկը կարմիր և մէկը սև։

Մէկ օր մի քաղցած գայլ մօտեցաւ սրանց և ուզում էր մէկին կամ միւսին վիրաւորել, բայց եզները քամակ քամակի տըւին, ցոյց տըւին գայլին իրանց սրածայր պօզերը։ Գայլը տեսաւ որ եզներին ոչ մի վնաս չի կարող տալ, քանի որ նրանց մէջ միութիւն կայ, մտածեց երկպառակութիւն ձգել մէջները, միմեանցից բաժանել, որ կարողանայ ամեն մէկին ջոկ յաղթել։

—Բարով ձեզ, բարեկամներ, ասաց գայլը, ես չեմ եկել ձեզ մի վնաս տալու, ձեր պօզերն ինչո՞ւ էք իմ դէմ բռնում։ Ես էլ ձեզ պէս չորս ոտն ունիմ, երկու ականջ, երկու աչք, մի պոչ, մի բերան, մի գլուխ. մի՛թէ կարելի բան է, որ նմանը նմանին մի վնաս տայ։ Բացի սրանից, դուք սուր սուր պօզեր ունիք, ես չունիմ. ձեզանից ամեն մէկը մի դև է ահաղին, իսկ ես ձեր հօրթի չափ էլ չըկամ։ Համարեցէք թէ ես ձեր պահապան շունն եմ, թողէք ձեզ մօտ կենամ, ձեզ հետ արածեմ, երեք չըլինինք՝ չորս լինինք, ինչ վնաս ունի։

Գայլի այս խոսքերի վրայ եզները միամտեցին և մի քիչ էլ փըռեցին իրանց պօզերովը, մանաւանդ երբ

տեսան, որ գայլն էլ է արածում։ Բայց գայլի փորը ցաւում էր, նրա համար էր արածում, և այն էլ ոչ թէ արածում էր, այլ խոտերը պոկում էր, էլ ետ վէր էր ածում, և եղներին խաբելու համար ցոյց էր տալիս, որ իբր թէ նրանց նման արածում է։

Վերջը՝ երբ սպիտակ եզը մի կողմը քաշւեց և սկսե ու կարմիրը միւս կողմը, գայլը մօտեցաւ ջուխտ եղներին և փսփսաց նրանց ականջին.—Բարեկամներ, դուք երկար չէք կարող այս կանաչ խոտումն արածել. սպիտակ եզն իր դոյնովը ձեզ փորձանքի մէջ կձգի։ Դուք ձեր դոյնովը ցերեկն էլ չէք երևում, իսկ սպիտակը գիշերն էլ է լոյս տալիս ճրագի նման։ Ծաղկակոխները (ուզում է ասել գայլերը) շուտ կըտեսնեն նրան և կըզան։ Նրա պատճառով դուք էլ կընկնիք փորձանքի մէջ և կըպատժւիք։

—Բօ—բօ,—բա—բա, զոչեցին եղները, միաբերան, որով ուզում էին ասել մի՛թէ ճշմարիտ ես ասում։

—Ի հարկէ, ասեց գայլը, ես ինչ օգուտ ունիմ սուտ ասելու, ես ձեր լաւութիւնն եմ ուզում։

—Մա—մա,—մու—մու, ասացին եղները. այսինքն ինչ անենք ուրեմն, որ ազատւինք այդ փորձանքից։

—Ոչինչ հարկաւոր չէ, ասեց գայլը, դուք ձեզ համար արածեցէք այստեղ, ես կազատեմ ձեզ նրանցից։

Եղները կամք տըւին, և գայլը գնաց սպիտակի բակիցը բռնեց։ Սպիտակն իր օրհասական գոռոցով և բղբղոցով միւսներին օգնութեան կանչեց, թէ եկէք, եղբայրք, օգնեցէք, սա գայլ է, մէկ օր էլ ձեր բակին կըշոթի իսկ սև ու կարմիրը նրան չօգնեցին, այլ ուրախանալով ասացին՝—Քո հաղն է, անպիտան, ինչու դու սպիտակ ես և ոչ մեզ պէս կարմիր կամ սև. դու քո անպիտան գոյնովդ մեզ էլ պիտի կրակի մէջ գցէիր։

—

Գայլը երբ որ հատացրեց Սպիտակի միսը և նորից քաղցեց, մէկ օր էլ մօտեցաւ Սևին և փսփսաց ականջին.—Գիտես ինչ կայ. ես անցեալ անգամ քեզ ոչինչ չասացի, որովհետև Կարմիրը մօտը էր. բայց հիմա պարտ

եմ համարում ասել, որ կարմիր գոյնը նոյնքան վնասակար է, ինչքան և սպիտակը։ Միայն քո գոյնն է շահաւէտ, որ ոչ ցերեկն է երևում և ոչ գիշերը։ Եկ ինձ լսիր և թող կարմրիցն ազատեմ քեզ։ Այնուհետև դու մենակ կարածես, նրա բաժին խոտն էլ քեզ կըմնայ։

Սևուկը կամք տըւաւ. գայլը գնաց Կարմրի բակիցը բռնեց։ Կարմիրն ազաղակեց և Սևուկին օգնութեան կանչեց՝ ասելով.

—Արի, օգնիր ինձ, սպանենք այս կեղծաւորին, թէ չէ՝ մէկ օր էլ քո բակին կըշոթի։

Սևուկը հետու կանգնած, փորն ուռցրած, պոզերը չարդախ արած, տեսնում էր իր ընկերոջ մահը և ուրախանալով՝ ասում.—Քո հաղն է. ինչու դու էլ ինձ պէս սև չես. քո անպիտան կարմիր գոյնովդ ինձ էլ պիտի կրակի մէջ գցէիր։ Այսուհետև քո բաժին խոտն էլ ինձ կըմնայ, ես մենակ կուտեմ և աւելի կըգիրանամ։

—

Մի քանի օրից յետոյ անկուշտ գայլը Կարմրի միսը հատացրել էր և կրկին քաղցել։ Մօտեցաւ Սևուկին և ասեց.

—Բարեկամ, ախորժակս բացւել է. էլի միս է ուզում սիրտս։ Ասում են՝ եթէ առաւմներդ սև եզան կաշւին քսես, իսկոյն կըկշտանաս, էլ քո օրումը չես քաղցիլ։ Մտածեցի, որ սրանից լաւ բան էլ ինչ կըլինի։ Կերթամ, ասացի, առաւմներս մեր Սևուկի կաշւին կըքսեմ և կըկշտանամ, նա էլ այնուհետև էլ երկիւղ չի ունենալ ինձանից, և մենք աւելի սիրով կապրենք։

—Բօ, հմմ—հմմ, ասեց Սևուկը, որ կընշանակէ, թէ —այդ ինչ լաւ բան են ասել։ Ճշմարիտ որ միշտ կասկածով եմ նայում քեզ վրայ, բայց որ կուշտ կըլինես, ինչ ասել կուզի, որ էլ ինձ մի վնաս չես տալ։ Ահա իմ կաշին, առաւմներդ վրան քսիր, ինչքան կամենում ես։

—Շնորհակալ եմ, բարեկամ, շատ շնորհակալ, որ այդքան բարի ես. միայն խնդրեմ որ մի բոպէ աչքերդ փակես, եթէ ոչ կաշիդ չի ազդիլ առաւմներիս վրայ. այսպէս են ասում, ես ինքս էլ չըգիտեմ թէ ինչու։

Սևուկն աչքերը փակեց. էն փակելն էր որ փակեց և մինչև այսօր էլ դեռ փակած են։

101։ ՀՆԱՐԱԳԻՏ ՋՈՒՀԱԿԸ

1.

Շահ-Աբասի ժամանակ հեռու աշխարհից դէրվիշի հագուստով մի մարդ է գալիս Սպահան քաղաքը։ Քաղաքի ընդարձակ հրապարակի մէջ այդ դէրվիշը մի մեծ շրջան է քաշում փայտով, ինքն էլ կշտին նստում լուռ ու մունջ։ Անց ու դարձ անողները նայում են և զարմանալով հարցնում, թէ դու ո՞վ ես, այս ինչ բան է որ դու քաշել ես. արդեօք մի թալիսման չէ՞ սա, և մեզ համար բարի, թէ չար թալիսման է... Դէրվիշը բնաւ չի խօսում։ Ամբողջ քաղաքը վարանման մէջ է ընկնում, թէ սա ինչ կընշանակէ արդեօք։ Վերջը իմաց են տալիս Շահ-Աբասին, թէ այսպէս մի դէրվիշ է եկել...

Շահ-Աբասը իր գիտնականներից մէկին ուղարկում է, որ տեսնէ ինչ բան է, ինչ է դէրվիշի ուզածը, ինչո՞ւ է ժողովրդին սարսափի մէջ գցել։

Գիտնականը գնում է և ասում դէրվիշին.

— Ո՛վ մարդ, ես հասկանում եմ քո միտքը։ Քո շրջանը նշանակում է, որ դու ուզում ես երկինքը կապել, որ ոչ մի ամպ չըլինի այնտեղ, որ էլ անձրև չըգայ, սով ընկնի մեր աշխարհը։ Գիտեմ, գիտեմ, որ դու կարող ես այդ բոլորն անել. բայց խղճա մեզ, այդպէս բան մի անիր, ինչ-որ ուզես, քեզ կըտայ թագաւորը...

Դէրվիշը բնաւ չըխօսեց և գիտնականի երեսին անգամ չընայեց։ Բայց ժողովուրդը լսելով գիտնականի բացատրութիւնը, աւելի մեծ երկիւղի մէջ ընկաւ։ Էլ չէին ասում, թէ դուցէ սխալ էր գիտնականի բացատրութիւնը, այլ դրա հակառակ՝ լուն ուղտ շինելով, պատմում էին իրար, թէ՝ «Բա չէք ասիլ, դէրվիշը մի ամենազօր մարդ է, այս ինչ երկրում հեղեղ և կարկուտ է թափել, բոլոր բնակիչներին կոտորել. այն ինչ տեղ հօթը տարի շարունակ կապել է երկինքը, ոչ մի կաթիլ անձրև չի եկել, սով է ընկել երկիրը, բոլորիքեանք կերել են միմեանց»... Մի ւս օրը Շահ-Աբասն ուղարկեց մի ուրիշին։

— Գիտեմ, գիտեմ, ով ես դու, մարդըդ Աստուծոյ, ասում է գիտնականը։ Քո շրջանը նշանակում է երկիրս։ Դատարկ է մէջը։ Դրանով ուզում ես ասել, որ ժանտախտով պիտի դատարկես մեր երկիրը։ Ինայիր մեզ. խնայիր, ի սէր Ամենակալին, այդպէս բան մի անիր։

Դէրվիշը դարձեալ մնաց լուռ։ Աւելի ևս սաստկացաւ ժողովրդի երկիւղը և նորանոր առասպելներ տարածուեց քաղաքի մէջ։

Բոլոր գիտնականները յաջորդաբար գնացին դէրվիշի մօտ և բոլորն էլ ունքը շինելու տեղ աչքն էլ հանեցին՝—փոխանակ ժողովրդի կասկածը փարատելու, նրան աւելի երկիւղի ու սնահաւատութեան մէջ գցեցին։

2.

Թագաւորը կարծում էր, որ դէրվիշի արածը մի հասարակ հանելուկ պիտի լինի, և իրան համար շատ ամօթ էր համարում, որ այդ հասարակ հանելուկը լուծող մի գիտնական չունի։ Այսպիսի մտատանջութիւնով նա մէկ օր ծպտած ման էր գալիս Սպահանի Հայոց թաղումը, ուր հանդիպեց մի տարօրինակ բանի։ Մի տանիքի վրայ ցորեն կար փռած ադունի համար. ոչ ոք չէր կար մօտը, բայց մի երկայն եղէգ կար ցցած, որ ինքն իրան անդադար տարուբերելով քշում էր ճնճղուկներին։—Այս հրաշքի պատանիքը պէտք է տան մէջը փընտրել, ասաց թագաւորն ու ներս գնաց տուն, և այնտեղ տեսաւ մի ջուլհակ, որ կտաւ էր գործում։

Երբ որ թագաւորը ներս մտաւ, ողջունեց ջուլհակին. ջուլհակը նայեց նրա վրայ, իսկոյն ոտքի կանգնեց, խոր գլուխ տալով պատասխանեց նրա ողջունին, յետոյ սկսեց շարունակել իր գործը։ Ջուլհակի աջ ու ձախ կողմին մի-մի օրօրոց կար դրւած։ Երբոր որ նա սկսեց գործել, օրօրոցներն էլ սկսեցին օրօրւել տանիքի ինքնաշարժ եղէգնի պէս։ Օրօրոցում եղած երեխաները ծե-

բունու թոռներն էին, որոնց մայրերը տան մի անկիւնում նստած՝ ճախարակով բամբակ էին մանում կտաւի համար։ Իր հարսներին գործից չըզցելու համար հնարագէտ ջուլհակը տանիքի եղէգից մի թել էր կապել, թելի մէկ ծայրը փաթաթել կտաւի սանդրին, որ իր տարուբերւելովը շարժում էր եղէգը։ Օրօրոցներից նմանապէս թելեր ունէր կապած, որոնց հակառակ ծայրերը իր աջ ու ձախ մատներին էր փաթաթել։ Աջ ձեռքով մաքուրը նետելիս, աջ կողմի օրօրոցն էր օրօրւում, ձախով նետելիս, ձախ կողմինը։ Այսպիսով նա մէկ անգամից երեք գործ էր կատարում։

Թագաւորն այդ ամենը նկատեց և զովեց իր մաքուրը նրա հնարագիտութիւնը, միայն նրա ոտքի կանգնելով խոր գլուխ տալը թագաւորի մէջ կասկած ձգեց, թէ չըլինի իրան ճանաչեց։ Այս բանն ստուգելու համար, թագաւորը մի մուէթ հարցմունք արաւ նրան.

—Չըլինի՞մ, չըլինի՞մ...

—Մ՛իթէ, մ՛իթէ... պատասխանեց ջուլհակը։

Թագաւորը «չըլինի՞մ, չըլինի՞մ» ասելով, ուզեց ասել ծերունուն. «եթէ ինձ ճանաչեցիր, չըլինի թէ երևցնես այդ բանը, թող մեր մէջը մնայ»։ Իսկ ծերունին պատասխանեց «մ՛իթէ, մ՛իթէ». այսինքն՝ «մ՛իթէ ես յիմար եմ և այդքանը չըգիտեմ»։

—Քանիսի՞ մէջն ես, վարպետ, յետոյ հարցրեց թագաւորը։

—Երկուսը լրացել, երեքի մէջն եմ մտել, պատասխանեց ջուլհակը։

Թագաւորի այս հարցմունքը ջուլհակի հասակին էր վերաբերում։ Ջուլհակը պատասխանեց, որ երկու ոտքով մանգալն արդէն վերջացրել է, հիմա գաւազան է դործածում, իբրև երրորդ ոտք, մէկ խօսքով ծերացել է։

Թագաւորն այսպիսի շատ մուէթ հարցմունքներ արաւ և բոլորի պատասխանն էլ ստացաւ դարձեալ մուէթ կերպով։ Տեսաւ որ ծերունի հայը մի հնարագէտ և հանճարի տէր մարդ է թէ գործով և թէ խօսքով, մտածեց, որ միայն սա կարող է դէբւիշի պատասխանը տալ։

—Դու որ այդչափ հնարագէտ ես, ասաց թագաւորը, եթէ մի քանի սաղ ուղարկեմ քեզ մօտ, կարո՞ղ ես փետրել նրանց։

—Դրա քաջ վարպետն եմ ես, ասեց ջուլհակը։

3.

Այս պատասխանն ստանալուց յետոյ թագաւորը զբնաց։ Շատ չանցաւ, ջուլհակի մօտ եկան թագաւորի պիտանական նէզիր-վէզիրները։

«Ահա եկան թագաւորի սաղերը. իրաւ որ լաւ փետրելու թռչուններ են», ասաց ջուլհակը ինքն իրան։

Թագաւորը տուն գնալով սաստիկ բարկացել էր պիտանականների վրայ և սպառնացել էր, որ եթէ գոնէ մի մարդ չըգտնեն, որ դէբւիշին պատասխան տայ, նրանց բոլորին էլ կաքսորէ։ Այսպէս նեղի գալով՝ որոշեցին պիտի հնարագէտ ջուլհակին, որի համբաւը նրանցից մէկը լսել էր։

—Վարպետ եղբայր, կարող չե՞ս արդեօք մի պատասխան տալ մեր տաբօրինակ հիւրին, որ ժողովրդի վրայ սարսափ է տարածել, ասացին պիտանականները և պատմեցին դէբւիշի դէպքը։

—Ինչո՞ւ չէ... կարող եմ... բայց մեծ ծախք կըպահանջւի դրա համար։ Պէտք է ձեռք բերել մի կախարդական գաւազան, մի անմահական սխտոր և մի ոսկի ձու ածող հաւ։

Պիտանականները մնացին ապշած։

—Դրա ծախքը մենք կըվճարենք, ասացին նրանք ուշքի գալով, միայն մենք չենք կարող գտնել այդ բաները, ինչ-որ դու ես ասում։

—Երեք բան է իմ ուզածը, և ես ինքս կըգտնեմ, միայն ամեն բանի համար մի գլխարկ լիքը ոսկի է պէտք։ Դուք երեք հոգի էք, ամենքդ ձեր գլխարկովը մէկ ոսկի կըբերէք, ես էլ կըգամ դէբւիշին պատասխան կըտամ։

Պիտանականները ճարահատած համաձայնեցին։ Գնացին երեք երեք գլխարկ ոսկի բերին տըւին ջուլհակին։ Այսպէս փետրելով նրանց, ինչպէս պատւիրել էր թագա-

ւորը, վերկացաւ առաւ իր հոնի գաւազանը, մի գլուխ հոտած սխտոր, ոտի մէկը կոտրած մի հաւ, և գնաց սարսափ տարածող դէրւիշի մօտ։

Հաւաքւեցին բոլոր քաղաքացիք, ներկայ էր և թագաւորը իր բոլոր իշխաններով։

Ջուլհակը չըխօսեց դէրւիշի հետ. նա լուռ ու մունջ իր գաւազանի ծայրով մի խոր ակօս քաշեց շրջանի մէջ տեղով ծայրէ ի ծայր և այսպիսով դէրւիշի շրջանը երկու հաւասար մասնի բաժանեց և նստեց նրա դէմ յանդիման։

Դէրւիշը երկար մտածեց, գլուխը թափ տրւաւ. վերջը մի գլուխ սոխ հանեց դրաւ արջևը։

Ջուլհակն, առանց երկար մտածելու, իսկոյն իր սխտորը հանեց դրաւ իր առջևը։

Բարկացաւ դէրւիշը և իր ջէբից հանեց մի բուռ կորեկ և շաղ տրւաւ ամբողջ շրջանի մէջ։

Ջուլհակը փեշի տակից հանեց իր հաւը, որ իսկոյն կըտկըտալով կերաւ բոլոր կորեկը։

Դէրւիշն էլ մինչև վերջը չըսպասեց, իսկոյն վեր կացաւ և մռմռալով հեռացաւ գնաց...

Թագաւորը մօտեցաւ ջուլհակին և խնդրեց, որ բացատրէ այդ հանելուկի նշանակութիւնը։

—Ողջ լինի թագաւորը, ասաց ջուլհակը։ Այս մարդը մի խելագար դէրւիշ է։ Երևակայել է, որ ինքը մի շատ գօրեղ խմաստուն մարդ է և կարող է մեր ամբողջ աշխարհքին տիրել։ Իր քաշած շրջանով ուզում էր մեզ հասկացնել, թէ իրանն է բոլոր մեր երկիրը։ Ես չուզեցայ հասկացնել նրան, որ այդ խելագարութիւն է, այլ կէս արի մէջտեղից, որով ուզեցայ ասել, թէ կէսն էլ իմն է։ Նա բարկացաւ և իր սոխով ինձ պատերազմ յայտնեց, կամ ուզեց ասել, մեր մէջ դառնութիւն կըծագի, կռիւ կըլինի։ Ես էլ իմ սխտորով հասկացրի նրան, որ ես փախչող չեմ, թէկուզ կուից էլ վատթար բան պատահի։ Նա կորեկով ինձ սպառնաց, որ իր գօրքերն անհամար են։ Ես էլ իմ հաւով ցոյց տրւի, որ ահա այսպէս կըջարդեմ ես քո անհամար գօրքը։ Դրա վրայ նա

տեսաւ, որ էլ չի կարող մեզ վախեցնել, փախաւ գնաց...

Քաղաքացիք շատ ուրախացան, որ վերջապէս ապատւեցին դէրւիշի տալիք երևակայական սովից ու մահից և ամենքը միաբերան գոչեցին՝ «Կեցցէ ջուլհակը»։

Շահ-Աբասը որ շատ արհեստասէր թագաւոր էր, գովեց ջուլհակին և յետոյ հարցրեց։

—Ի՞նչ արիր իմ սաղերին, լաւ փետրեցիր, թէ ոչ...

—Ողջ լինի թագաւորը, այո, լաւ փետրեցի, ահա նրանց փետուրները, ասաց ջուլհակը և թագաւորի առջևը դրաւ մի պարկ ոսկի։

—Քեզ են արժանի այդ ոսկիքը, ասաց թագաւորը, դու աւելի օգտակար գործադրութիւն կըգտնես դրանց համար։ Մի այդքան էլ իմ դանձարանից ստացիր և մի մեծ գործարան բաց արա. թող ծաղկի քո արհեստը իմ երկրիս մէջ։ Այսուհետև իմ պալատի դռները միշտ բաց են քեզ համար. թող իմ հովանաւորութիւնը լիուլի տարածւի քո իմաստուն ժառանգների և քո ազգի վրայ։

---

102. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՕՁԸ

Մի օր օձը սողալով՝ մի գիւղացու մօտ եկաւ և իր անուշ լեզուվը հետը խօսել սկսաւ.—

—Բարի դրացի, դիտես ինչ, արի, ապրենք եղբօր պէս, կամ եթէ կուզես, եկ ընկերանանք, էլ ոչ դու ինձնից և ոչ ես քեզնից էլ չըվախենանք։ Ես իմ հին խորխը հէնց այս ամառս դէն շըպտռեցի, գնա, ասացի, ինձնից հեռացիր, ես այսուհետև ծուռ ու մուռ ճանապով չըպիտի սողամ, վնաս ոչոքի էլ չըպիտի տամ։

Բայց գիւղացին օձի խօսքին չըհաւատաց, ձեռքն առաւ հատ մահակը ու ասաց.—«Թէպէտ նոր է քո կաշիդ, բայց միևնոյն է հոգիդ», և մէկ հարւածով գլորեց գետնին խարդախ դրացու անկենդան մարմին։

---

103. ՀԵՑԱՔՐՔԻՐ

Բարի եկար, հազար բարի, բարեկամ, ուր էիր տեսնամ։

—Թանգարանիցն է գալս. չորս ժամ եղաւ ման գալըս, ամեն կողմ պտըտեցի, պրպըտացի, բոլորը տեսայ, ոչինչ չըթողի։ Աշխարհումս ինչ ասես որ չեն եղել, որ կողմը նայես, աբմանք զարմանք, հրաշալիք, որն էլ դիտես՝ մէկը միւսից զեղեցիկ։ Ի՜նչ պազաններ, ինչ թըռչուններ, թիթեռնիկներ, բզէզներ, ինչ զատիկներ, ինչ կերպ ճանճեր, որքան ոսկի եղնակներ. որը կանաչ զըմրուխտի պէս, որը կարմիր բուստի պէս. հապա մանրիկ բոտոնները՛, հաւատա՛, գնտասեղի գլխից էլ շատ փոքրը կայ։

—Հապա փղին ինչ ասիր, ինչ ահագին վիթխարի։ Անշուշտ այնպէս կարծեցիր, թէ մէկ լեռն է սոսկալի։

—Մ'թթէ փիղն այնտեղ էր.

—Ի հարկէ, մ'թթէ չըտեսար.

—Ախսոս, այդ ինչպէս է եղել, որ փիղն աչքովս չի ընկել։



104. ՓԻՂՆ ՈՒ ՉԸՍՏԻԿԸ

Փիղն է հսկայ մի կենդանի,
Չորս ուղտի չափ հեշտ կըլինի.
Ինքն ըզգայուն
Եւ իմաստուն,

Վրան կառնէ մի ամբողջ տուն։
Թէ ինչպէս է տեսքովն էլ նա,
Պատկերի մէջ լաւ կերևայ.—
Գլուխը հաստ՝ մի ծառաբուն,
Ջիթը երկայն՝ եօթը կանգուն.
Միւս կողմերն էլ սրանց նըման
Կոշտ ու կոպիտ, հսկայական։

—

Այսպէս մի փիղ ժամանակով
Անց էր կենում մեծ քաղաքով.
Չէնց որ տեսան այդ կենդանին,
Ուղտն ու էշը, ձին ու ջորին,
Եզն ու գոմէշ, շունն ու կատուն,
Սարսափելով փախան իսկոյն.
Զըվախեցաւ միայն մի շուն.—
Աւելի ճիշտ՝ փոքրիկ շընիկ,
Փոքրիկ շընիկ,
Բայց շատ ճարպիկ,
Պըսպիկ,—
Զըսպիկ։
Զըսպիկն ադմուկ բարձրացրեց,
Եւ հաչելով հասկացրեց
Մեծ շուներին,
Բողարներին,
Թէ՝ «փախչիլը ամօթ բան է,
Փիղն ինչ է որ՝ մեզ ըսպանէ».
Այս ասելով՝ վրայ վազեց,
Փըղի ոտքից մի պինդ կըծեց.
Փիղն այդ ըզգաց,
Բայց լուռ մնաց։
Երբ Զըսպիկը մէկ էլ խածեց,
Փիղը արագ պտոյտ գործեց,
Որ շընիկին բռնէ շուտով,
Կամ մի զարկ տայ երկայն քթով։
Պըսպիկ-Զըսպիկն այդ իմացաւ,

Ճարպիկութեամբ մի կողմ անցաւ,
Կրկին ադմուկ բարձրացրեց,
Մեծ շներին խրախուսեց։
Հաւաքուեցին մեծ շները,
Զանգին, Զրանգին և միւսները,
Հարայ-հրոց բարձրացրին,
Եւ բլրաչափ զբուխի Փըղին
Վախեցրին
Ու փախցրին։

—

Ճըշմարիտ է, մեր Զըսոխկին
Հին ժամանակ տնազ արին,
Մեղադրեցին
Ու ասացին,
Տեսէք՝ ինչքան յանդուգն է նա
Որ հաչել է Փղի վրայ,—
Բայց երբ խելքով հասունացան,
Գլխի ընկան
Եւ խմացան,
Որ մեծերն են լինում վախկոտ,
Իսկ փոքրերը՝ քաջ ու սրտոտ։
Թէ՝ այս բանը բնական է,
Իսկ պատճառը—պատմական է։

—

Բայց դուք, փոքրեր, երբ մեծանաք,
Ոչ մի բանից չըվախենաք.
Թող լինի փիղ, արջ ու վարազ,
Գայլ ու առիւծ, վագր ու յովազ,
Յարձակուեցէք անահ սրտով՝
Եւ անխըռով,
Թէ միայնակ
Եւ թէ խմբով...

---

105. ՋՐՎԼԻԺ ԵՒ ՎՏԱԿ

Լեռան տակից մի վտակիկ կըվազեր, բայց ջուրն այնքան նըւազ էր, որ անցող դարձողի աչքին հազիւ կերևար, միայն թէ շատ անուանի էր նրա ջուրն առողջարար։

Վտակին մօտիկ՝ բարձր ժայռերից՝ փրփրած, կատաղի մի ջրվէժ կիջնէր։ Սա հպարտ-հպարտ, վերից վար նայեց, վտակին ասեց.—Տես, ինչ կասեմ քեզ, դու խեղճ ջրիկ ես, բայց ինչո՞ւ այնքան քեզ հիւրերը կըգան։ Ինձ մօտ եթէ գան, զարմանալի չէ, իմ տեսքն է անընման, իսկ քեզ մօտ ինչո՞ւ կըգան, դու ինչ ունիս պատւական։

Վտակն ասեց ամօթով, հեզիկ ու քաղցր ձայնով.

Գիտես ինչու—

Բժշկւելու։

---

106. ՀՈՎԻՒՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ

Մի քաջ հովիւ՝ յոյսը դրած շներին, ստւերի մէջ հանգիստ, անուշ քուն մտաւ։ Մի օձ պառկած, թփերի մէջ գալարւած, տեսաւ հեռւից, ծածուկ սողաց, մօտ եկաւ, պիտի խայթէր, մեռցընէր։ Մոծակն այս որ տեսաւ, խղճաց վրան, թռաւ հասաւ, բոլոր ուժովը կըծեց, հովւին քնից զարթեցրեց։

Հովիւը զարթեց, օձին սպանեց, բայց դրանից առաջ կէս քուն, կէս արթուն խեղճ մօծակին էլ խըրեց, տըրորեց։

---

107. ՄՈՒՐՃՆ ՈՒ ԻՐ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Լեռան խորչի մէջ, մի մեծ քարայրում,
Քարհատը մուրճով խիճ էր փորփըրում,
Եւ մուրճի ձայնը՝ աննշան, անմեղ,
Տալիս էր իսկոյն արձագանք ահեղ...

—«Եղբայր Արձագանք», Մուրճն ասաց մի օր,
«Քո ձայնն ինչո՞ւ է իմից զօրաւոր.
Իմ շշնջիւնը շինում ես գոռոց,
Փոքրիկ թխկոցս՝ ահեղ գոռգըռոց,
Գործո՞ղը ես եմ, գոռացողը դու,
Այն էլ այդքան թունդ, այդքան ահարկու»...
—«Ապերախտ Մուրճիկ, անմիտ, անիմաց»...
Շատ նեղանալով՝ Արձագանգն ասաց.
«Ես որ չըլինիմ, էլ ո՞վ կիմանայ,
Որ այս ձորի մէջ մի ինչ որ մուրճ կայ.
Ես քո շշունջը շինում եմ բոմբիւն,
Թեթև թխկոցըդ մի զօրեղ զանգիւն,
Որ կարծւի՝ թէ դու չես մուրճիկ չնչին,
Այլ մի վիթխարի կռան ահագին»...
Առակիս նման
Շատ շատերը կան
Որ չնչին մուրճին
Շինում են կռան։

---

108. ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

Հարուստ մեծատան ընդունարանում
Երկու թըռչուններ չոկ-չոկ վանդակում
Իրանց երգերով զմայլեցնում էին
Յարգոյ մեծատան փայլուն հիւրերին։
Միակերպ էին երկուսի երգն էլ,
Նոյն հընչիւնները անհասկանալի...
Եւ ո՛ւմ մըտքից կարող է անցնել,
Որ մէկի երգը սուգ էր թախծալի։
—Ես չեմ հասկանում—ասաց մի անգամ,
Ջահիլ թըռչունը ծեր հարևանին—
Այդ անվերջ սուգը, գիտե՞ս, բարեկամ,
Վիրաւորանք է տիրոջ հասցէին։
Ի՞նչ է խընայում տէրը մեզանից,
Ջուրըդ անպակաս, կորեկըդ համեղ
Հեռու ձմեռուան ցրըտից ահեղ...
Եւ դարձեալ դու միշտ դժգոհ ես կեանքից։
—Օ՛, որդեակ, պարզ է, որ չես հասկանար
Իմ դժոխային վիշտը անփարատ...
Դու այդ վանդակում ըստրուկ ծընուեցար,
Իսկ ես, որդեակ իմ... ծընուել եմ ազատ...

---

109. ԱՌԻԾԻ ԲԱԺԻՆԸ

Առիւծն ու Ոչխարը որսի գնացին, իրանց հետ վերցրին մի քանի զապան. Առիւծն երդւում էր, որ վերադարձին՝ փոյթ չէ, թէ ոմանք շատ կամ քիչ որսան, նա պիտի բաժին անէ հաւասար ամենի համար։

Եղջերուն ընկաւ Ոչխարի թակարդ, որ իսկոյն յայտնի եղաւ Առիւծին, նա էլ մօտ վազեց, ճանկեց որպէս սարդ, և եղջերուին արաւ չորս բաժին, և վերցնելով այն, ամենի դիմաց նա այսպէս ասաց.—

—Առաջին մասը պատկանում է ինձ, քանի որ ինքս առիւծ եմ կոչւում. օ՛, ես անվախ եմ, համարձակ ձեզնից, այդ երկրորդ մասն էլ ինձ է վայելում։ Երրորդ մասն էլ դուք պիտի ինձ զիջէք, քանի որ ձեր մէջ ամենից քաջն եմ. իսկ չորրորդ մասին եթէ որ դիպչէք... Այդ մէկ փորձեցէք, յետոյ կըտեսնէք...

---

110. ԳԱՌԸ ԳԱՑԼԻ ՄՈՐԹՈՎ

Մի օր մէկ գառը,—չըգիտեմ ինչ էր, խելքին ինչ տեսակ քամի էր փչել,—մի գայլի մօրթի զգեց քամակին ու գնաց խառնուեց ոչխարի հօտին։ Բայց երբ շնեբի աչքովըն ընկաւ, ասին՝ անտառից ահա գայլ եկաւ. գոռում զոչումով վրայ վազեցին, բերաններն առան ու պըզպըզեցին։ Լաւ էր որ շուտով հովիւը տեսաւ՝ երկայն մա-

հակով նոյն տեղը հասաւ, ու խեղճ գառնուկը կատղած
շների սուր ատամներից հազիւ փրկւեցաւ։

Եւ մեր գառը հազիւ հազ,
Արիւնթաթախ ու նրւազ,
Թոյլ ոտները քաշ տալով,
Հասաւ դոմը մի կերպով։

---

111. ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Երկու ընկերներ իրիկնապահին
Հրացան առած՝ անտառ գնացին։
Որ մէկ բան որսան,
Շուտով յետ դառնան։
Յանկարծ անտառից մի արջ դուրս պրծաւ
Ու կատաղութեամբ նրանց վրայ վազեց.
Մէկն շտապելով ծառը բարձրացաւ,
Միւսն անճարացած գետնի վրայ պառկեց,
Շունչն իրան քաշեց
Ու անշարժ մնաց,
Որ արջը կարծէ,
Թէ նա մեռած է։
Արջը մըռռալով՝ մօտեցաւ նըրան,
Ականջը կամաց դրաւ բերնի վրան,
Ականջ դրաւ
Հոտ առաւ։
Վերջապէս նրան մեռած կարծելով,
Հեռացաւ գնաց՝ դունչը լիզելով.
Փախած ընկերը ծառից իջաւ ցած,
Ընկերին հարցրեց, թէ արջն ինչ ասաց։
—Արջն ինձ պատւիրեց, որ ես միւս անգամ
Թեզ պէս մարդու հետ որսի չըգնամ,
Որ մեզ մի վտանգ, բան պատահելիս՝
Մենակ չըթողնես ու ինքդ փախչիս...

---

112. ՏՈՒՐՔ



Երբ որ անարատ երեք աբրած—
Յասմիկն ու Զուշան շաղկապած սիրով
Եւ Վարդիթերը դեռ նոր կոկոնած՝
Հուռ անցնում էին փողոցի միջով,
Մի խղճուկ մանուկ թըշւառ մուրացկան
Տուրք էր աղերսում շուկայում կանգնած.
Եւ տեսնելով այն երեք աղջկանց,
Մօտեցաւ նրանց թոյլ ձեռը մեկնած։
Երեխան օրհնեց իր ամբողջ հոգով
Յասմիկին մի հատ լումայի համար.
Զուշանի մի զոյգ լումայի տուրքով
Աղօթեց մինչև ջինջ երկնակամար։
Բայց Վարդիթերը աղքատ լինելով,
Թըշւառ մանուկին ոչինչ չըտուեց.
Միայն թէ սաստիկ խղճահարւելով,
Ոսկու փոխարէն նրան համբուրեց։
Նրանցից մօտիկ մի մարդ էր կանգնած,
Գոյն-գոյն հոտաւէտ ծաղկէփնջերով.
Աղջկայ համբուրից ջերմ փայլագունած՝
Թըշւառը վազեց «ծաղիկ» կանչելով։
Եւ մի հոտաւէտ ալ վարդի փնջին
Նա բոլոր երեք լուման էլ տըւեց,
Բիւր երջանկութեան ժպիտը շրթին՝
Իրան համբուրող կուսին պարգեւեց...

---

113. ՀԱԽՂՈՒՆԻ ԹՈՒՐԸ

Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թագաւոր կար, անունն էր Պռօշ, ինքը զօրաւոր, ազնիւ ու արդար։ Նստում էր նա իր Լաթար քաղաքում։ Նա չէր կռւասէր, թէպէտ կարող էր ամեն բան ուժով. եթէ ուզենար, աշխարհը կըքանդէր Հալւունի թրով.

Հալւունի թուրը, Հալւունի թուրը,
Ամեն բան կանէ Հալւունի թուրը.
Չի լինիլ նըրան աշխարհում նման,
Կանէ ամեն բան Հալւունի թուրը։
Օ՜, նա չէ շինած հողեղէն ձեռքով,
Անձեռագործ է Հալւունի թուրը.
Չէ նա Խորասան և ոչ ալմազից,
Ալմազ կըկոտրէ Հալւունի թուրը։
Կրակոտ ամպերում, կայծակների հետ
Մխել է, կոփւել Հալւունի թուրը.
Կրակոտ ամպերում, կայծակների հետ
Աշխարհ է իջել Հալւունի թուրը։
Ով տիրէ նրան, աշխարհ կըտիրէ,
Աշխարհ կըզերէ Հալւունի թրով.
Դէւերի մեծին զերի կըբերէ,
Ըստրուկ կըշինէ Հալւունի թրով։
Արքայազնուհին Չինումաչինի
Իր հարս կըբերէ Հալւունի թրով,
Եալբուզ սարն էլ որ նրա առաջ ելնի,
Երկու կէս կանէ Հալւունի թրով։
Հալւունի թրով, Հալւունի թրով,
Ամեն բան կանես Հալւունի թրով,
Չի լինիլ նրան աշխարհում նման,
Ինչ ուզես, կանես Հալւունի թրով։

Ահա թէ ինչու Պռօշ թագաւորից ամենն էին սարսում, թէպէտ նրա մարքով մի մարդու անգամ վնասել չէր անցնում։ Եւ ով չէր սարսիլ. մեծ էր Հալւունի թրի

զօրութիւնը. բայց չէր ցանկանում Պռօշ թագաւորը վատը, իշխանութիւն։

Ոչ ոք չըգիտէր, թէ քանի տարի Պռօշի պապերը կըռւում էին իրըև մի անգին աւանդ Հալւունի թուրը, թէ ինչ հրաշքով ընկել էր թուրը աշխարհի վրայ, թէ ուրը Պռօշի մեծ նախնիքներից ձեռք էր բերել այն, յայտնի չէ թրի սկզբնաւորութեան մութ պատմութիւնը. լռում է այդ մասին աւանդութիւնը. դիտեն այս միայն, որ Պռօշի նախնիք այնքան տարիներ իրանց զօրութիւնը և ուժը երբէք ի զուր չեն զործ դրել։

Պռօշն էլ հետևեց իր նախնիքներին, ստացաւ թուրը հօր մահւան ժամին, առաւ աւանդը, խոստացաւ հօրը.—«Հայրիկ, երդւում եմ քո տրւած սրով, որ քեզ հետևիմ, չարի կործանիչ, բարու հաստատիչ հանապազ լինիմ»։

Այսպէս էլ արաւ։ Քառասուն տարի Պռօշի ձեռքում Հալւունի թուրը կայծակի նման փայլում էր վառւում, բայց նրա ձեռքով մի անմեղ արիւն երբէք չըթափւեց, կայքից ու կեանքից Հալւունի թրով ոչ ոք չըզրկւեց։ Ոչ մի թագաւոր կամ արդար իշխան չընկաւ իր գահից. ոչ մի ժողովուրդ չըզրկւեց իրա ազատութիւնից։ Ինչ բան բ՝՝րի էր, նա զօրացնում էր իր զօրեղ ձեռքով, ինչ բան որ չար էր, ջնջում, կործանում Հալւունի թրով։

Եւ ինչ չէր անիլ. մեծ էր Հալւունի թրի զօրութիւն, բայց Պռօշ թագաւորն այդ չէր ցանկանում, այլ ասում էր միշտ։ «Թող մարդիկ ապրին ազատ ու խաղաղ. Լաթար քաղաքս լաւ կառավարեմ, այն էլ է հերիք» Եւ լիանում էր Լաթար քաղաքը ամեն բարիքով, ձգւում էր շէնացած Խաչըլւայ լճի կանաչ ափերով։

Բայց ինչ կայ յաւիտենական այս աշխարհի մէջ։ Պռօշ թագաւորի գլուխն էլ ծածկւեց սպիտակ մազերով. այն զօրեղ անձը, որից դողում էր ամբողջ աշխարհը, էլ չէր կարենում վերցնել Հալւունի յաղթական թուրը։

Ընկաւ Պռօշը, ուժահատ ընկաւ մահիճը մահւան։

«Ահա մօտեցաւ իմ վերջին օրը», ասաց ինքն իրան. «իմ ժառանգն ով է, ում պիտի յանձնեմ Հալումնի թուրը»։

Թագաւորն ունէր եօթը հատ որդի, իւրաքանչիւրը մի սարի գլխի, ամեն մէկն ունէր մի բերդ սեփական, ամենքն էլ ծարաւ մէկ մէկու արեան։ Ո՛րին տար արդեօք Հալումնի թուրը. նրանցից ոչ ոք սրին չէր արժան. վեց անզէն եղբայրք գլխները կտրած պիտի թրպրտան. Հալումնի թուրը պիտի ղէնք դառնայ մարդասպանութեան։

«Ո՛չ, այս չի լինիլ», ասաց Պռօշը, կանչեց մեծ որդուն ի՛լէջանու բերդից։ Եկաւ մեծ որդին, որ լսէ իր հօր կտակը վերջին։

«Որդի, մեռնում եմ», ասաց Պռօշը. «վերջին կտակս յայտնում եմ ես քեզ, բայց մահիցս առաջ պիտի կատարես»։

—Հայրիկ, պատրաստ եմ. վերջին կտակդ ես կըկատարեմ, տուր ինձ, թէ կուզես, Հալումնի թուրը, աշխարհք կըբանդեմ։

«Այո՛, քեզ կըտամ Հալումնի թուրը, բայց լսիր, որդիս, աշխարհք մի քանդիր, այլ տար, Խաչըւայ ծովակը ձգիր»։

Մեծ որդին տարաւ Հալումնի թուրը, բայց հօրը խաբեց, ծովը չըձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց։

«Որդի, ինչ արիր Հալումնի թուրը, ձգեցիր ծովը», հարցրեց հայրը։

—Այո՛, այո՛, հայր, Հալումնի թուրը տարայ ձգեցի Խաչըւայ ծովը։

«Ցեսա՛ր ինչ եղաւ Խաչըւայ ծովը, երբոր ձգեցիր Հալումնի թուրը»։

—Հայր, ոչինչ չեղաւ Խաչըւայ ծովը, բայց ես ձըրդել եմ Հալումնի թուրը։

—Ո՛չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խաբում ես հօրըդ, գնա՛, բեր շուտով, թէ չէ՝ կանիծեմ, գլխիդ կըճաքի Հալումնի թուրը»։

Որդին զողալով գնաց, յետ բերաւ Հալումնի թուրը։

Պռօշը կանչեց իր երկրորդ որդուն և ասաց նրան։ «Որդի, մեռնում եմ. վերջին կտակս ես յանձնում եմ քեզ, բայց մահիցս առաջ պիտի կատարես։

Պատրաստ եմ, հայրիկ, վերջին կտակդ ես կըկատարեմ. տուր ինձ, թէ կուզես, Հալումնի թուրը, աշխարհք կըբանդեմ։

«Այո՛, քեզ կըտամ Հալումնի թուրը, բայց լսիր, որդիս, աշխարհք մի քանդիր, այլ տար, Խաչըւայ ծովակը ձգիր»։

Երկրորդը տարաւ Հալումնի թուրը, բայց հօրը խաբեց, ծովը չըձգեց, այլ հօրից թաքուն մի տեղ թաքցրեց։

«Որդի, ինչ արիր Հալումնի թուրը, ձգեցիր ծովը», հարցրեց հայրը։

—Այո՛, այո՛, հայր, Հալումնի թուրը տարայ ձգեցի Խաչըւայ ծովը։

«Ցեսա՛ր ինչ եղաւ Խաչըւայ ծովը, երբոր ձգեցիր Հալումնի թուրը։

—Հայր, ոչինչ չեղաւ Խաչըւայ ծովը, բայց ես ձըրդել եմ Հալումնի թուրը։

«Ո՛չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խաբում ես հօրըդ. գնա՛, բեր շուտով, թէ չէ՝ կանիծեմ, գլխիդ կըճաքի Հալումնի թուրը»։

Որդին զողալով գնաց, յետ բերաւ Հալումնի թուրը։ Մէկել որդուն էլ կանչեց Պռօշը, բայց նրանք ամենքն էլ այնպէս վարուեցին, մինչև հերթն ընկաւ ամենից փոքրին։ Եկաւ և փոքրը։ «Որդի, ասաց Պռօշը. գոնէ դու լսիր վերջին կտակս։ Հալումնի թուրը յանձնում եմ ես քեզ, կըտանես Խաչըւայ ծովը կըձգես»։

—Հայր, ես պատրաստ եմ, կուզես ես ինքս էլ նրա հետ ընկնեմ։

«Ո՛չ, դու մի ընկնիր, այլ միայն թուրը ծովը կըձգես և ինչ որ տեսնես, կըզաս ինձ կասես»։

Ուրբաթ էր օրը, թուրն առաւ որդին ու ծովը ձգեց։

Բայց թէ ինչ տեսաւ, ինչքան վախեցաւ, նա այսպէս պատմեց.

«Չէի մօտեցած դեռ ևրս ծովին,
Արևն երկնքում երեսը ծածկեց,
Սև ամպից իջաւ սատանի բամին,
Խաւար և մռայլ աշխարհս պատեց.
Մօտեցայ ծովին, ա՜խ, մեր սիրուն ծով,
Իր նախկին գոյնը այլ ևս չունէր,
Փանտ դէւի նման պղտոր ջրերով
Մի անմեղ որսի կարծես սպասում էր։
Ծովը ձգեցի Հալումնի թուրը՝
Ցանկարծ մի գոռոց ծովի յատակից,
Մեծ իրարանցում ծովի խորքերում,
Ահեղ արձագանք ձայնեց երկնքից.
Ջրերը լեռնացան ու իրար անցան,
Երկինք էր հասնում ծովի փրփուրը,
Ցանկարծ Խաչլըւան բացեց իր բերան,
Դէւի պէս կլանեց Հալումնի թուրը։
Ահեղ փոթորիկ, աղմուկ, որոտում,
Թէ ծովին նայես և թէ երկնքին,
Իրար են խառնուել. դողում է աշխարհ.
Ես էլ վախեցայ և ընկայ գետնին։
Կրկին նայեցի, ոչինչ չըտեսայ.
Խաւար մռայլը աշխարհս է պատել.
Ամպեր, ալիքներ իրար վրայ դիզած,
Երկինքը երկրի հետ էր միացել.
Ծովի խորերից բիւրաւոր ձայներ
Խառնիխուռն և խուլ որոտում էին,
Կարծես բիւրաւոր քաջերի դնդեր
Ծովի յատակում մարտնչում էին։
Հայրիկ, դողում եմ, էլ մի յիշեցնիր,
Չեմ կարող պատմել ես իմ լեզուվը,
Հայրիկ, սարսում եմ, էլ մի հարցնիր,
Թէ ինչեր արաւ Խաչլըւայ ծովը»։
—«Այո՛, այդպէս է, ա՛ռ իմ օրհնութիւն,
Լաթաը քաղաքս էլ քեզ ժառանգութիւն.

Ասաց Պռօշը ու աչքը խփեց,
Եւ իսկոյն ևեթ հոգին աւանդեց։
Անցան տարիներ ու դարեր անհետ,
Աշխարհիս վրայ շատ բան փոխւեցաւ,
Պռօշի աւանդն էլ նըրա մահից յետ
Երկրիս երեսից շուտ անհետացաւ։
Բայց ժողովրդի մտքից չի կորել
Հալումնի թըի վառ պատմութիւնը,
Նա ոգևորւած պատմում է դեռ էլ
Պռօշ թագաւորի աւանդութիւնը։
Նա ցոյց է տալիս մի աւեր աւան,
Ասում է. «Այստեղ էր Պռօշը կենում,
Այս Լաթաը քաղքից առիւծի նման
Ընդակայ ազգաց սարսափ էր ազդում»։
Նա ցոյց է տալիս մի պղտոր լճակ,
Ասում է. «Սա է Խաչլըւայ ծովը.
Սա չէ, ասում է, մի ծով հասարակ,
Այստեղ է թաղւած Հալումնի թուրը».
Թէ հարցնես նրան՝ իրրև կարեկից,
«Ինչո՞ւ է պղտոր ձեր ծովի ջուրը».
Կասէ. «Այսպէս եղած է այն օրից,
Երբ այստեղ ընկաւ Հալումնի թուրը»։
Նա քեզ կըպատմէ, թէ ամեն ուրբաթ
Խաչլըւայ ծովը փրփրում է, կատղում,
Իրար են գարկւում ջրեր լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսւում...

Երբոր Պռօշի փոքրահաս որդին
Տանում էր ծովը Հալումնի թուրը,
Դեռ չէր մօտեցել նա ծովի ափին,
Երբ իրար անցան ծովի քաջերը.
Կռիւ, կոտորած ընկաւ նրանց մէջ,
Սուրը ընկղմւեց Խաչլըւայ խորը.
Ահեղ կոտորած, բայց յաղթող չեղաւ,
Եւ անտէր մնաց Հալումնի թուրը։

Ահա այն օրից ամենայն ուրբաթ
Խաչլուայ ծովը փըփրում է, կատղում,
Իբար են զարկւում ջրեր լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսւում...
Այդ հին կռիւն է կրկին նորոգւում,
Կրկին ընկնում են իրար վրայ քաջեր.
Անցնում են դարեր, կռւում են, կռւում,
Բայց Հալուշնի թըրին չեն կարում տիրել։

Բայց Պռօշ աըքան սուրը կախարդեց,
Երբ կըցամաքի ծովակի ջուրը,
Նրա տոհմիցը մի քաջ կըծնի,
Կրհանէ լըճից Հալուշնի թուրը։



ՑԱՆԿ

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԶԽԱՐՀ

Տարեմուտին. Ղ. Ա. . 3
Թռչնիկներ. Ղ. Ա. . 3
Նոր տարի. Ղ. Ա. . 4
Սագեր. . . . 5
Մանկական հէքիաթ. Ղ. Ա. 5
Կաւոռ . . . 6
Մանկական խաղեր. Մուշ. Մամիկոնեան . 7
Աքաղաղն ու հաւը . 11
Զորս եղանակ. Մուշ. Մամիկ 12
Տաւարածի ճաշը. Ղ. Ա. 13
Երկու և մի. Ռ. Պ. . 13
Զորս եղբայր. Ռ. Պ. . 13
Գարուն. Ռ. Պ. . . 14
Հովի անկողինը. Ղ. Ա. 14
Ջաղացպանի ննջարանը. Ղ. Ա. . . 15
Ջաղաց. փոխադրած . 15
Պարզամիտ հովիւ. Ղ. Ա. 16
Մայրիկը. փոխադրած . 17
Զարդ տանեմ. Յ. Յակօբ. 17
Առածներ . . . 18
Վիճակի երգեր . . 18
Գիւղի գրագէտը . . 19
Տատի սպառնալիքը . 19
Որբի պահանջը. Մուշ. Մամիկոնեան . 20
Լաւ ընկեր . . . 20
Մայրենի լեզու 1—2 20—21
Կռունկ . . . 21
Ղարիբ Մշեցուն. Ա. Խ. 22
Պօղոս-Պետրոս. Յ. Թում. 23
Հզօր ճաթ. Ռ. Պ. . 25
Արդար դատաստան. Թ. Ղ. Ա. 25
Կամակոր սայլապաններ. Թ. Ղ. Ա. . 26
Բարի գործ. Յով. Թում. 26
Վարդենի և փշենին. Թ. Ղ. Ա. 27
Առածներ . . . 28
Կըտենի. Յ. Յակօբեան. 28
Հայթուխ. Կ. Մ. Շ. . 29
Լըւացարար. Կ. Մ. Շ. . 30
Շապկի երգը. անգլիերէնից Մէլիք-Ջհանեանի 31
Պառաւի հաւը . . 33
Կթի կով . . . 33
Շունն ու կատուն. Յ. Թում. 34
Երևելի խոհարար. . 36
Ապագայի համար. Ղ. Ա. 37
Առածներ . . . 37
Ծառերի վէճը . . 38
Գիւղումը. Յ. Թում. . 39
Պարտիզպանի կտակը . 39
Գութանի երգը. Յ. Թում. 40
Երկրագործ. Կ. Մ. Շ. 41
Հասօի երգը. Ռաֆֆի. 41
Գեղչկուհու երգը. Ռ. Պ. 42
Ամպեր. Կ. Մ. Շ. . 43

Եղիայի հանաքը. Ղ. Ա. 43
Գարնանային ջրեր . 44
Կարկուտ. Լ. Ման. . 44
Աննառն ու վտակը . 45
Առւակ. Զօկ. . . 45
Հնձւորներ. Ղ. Ա. . 46
Տիկնիկի հարսանիք. Ղ. Ա. 47
Տատիկի հէքիաթը. Ի. Մ. 49
Դարբին. Կ. Մ. Շ. . 52
Առաւօտեան ճառագայթներ 52
Արև. Ղ. Ա. . . 53
Տխուր երեխայ. Ռ. Պ. 54
Թռչուններ. Սօֆ. Արղ. 55
Պահպանեցէք ձեր բարեկամներին. . . 56
Մանկական բարեկամներ. Ղ. Ա. . . 56
Ծիծեռնակներ. Սօֆ. Արղ. 58
Ծիծեռնակի յիշողութիւնը. Ղ. Ա. . . 60
Մի աւանդութիւն ծիծեռնակի մասին. Մուշեղ Աղայեանի . . 60
Ծիծեռնակին. Ռ. Պ. . 62
Փիղ. Թարգ. Ղ. Ա. . 63
Դժւար ընտրութիւն. Կ. Մ. Շ. . . 64
Երկու քոյր. Ռ. Պ. . 69

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՀԷՔԻԱԹՆԵՐ ԶՐՈՅՑՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

Գառնիկ ախպէր. Յ. Թ. 71
Ցախաւել. Ղ. Ա. . . 77
Ցանկութիւններ . . 80
Ոսկի ձկնիկ Թ. Ղ. Ա. 82
Խելքն ու բախտը Ղ. Ա. 91
Բախտի սպասողը. Յար. Թում. . . 94
Վայրենի և տանու թռչունը. Թ. Ղ. Ա. . 100
Գիւղացին և ձին. Թ. Ղ. Ա. 100
Արծիւը և Մեղուն. Թ. Ղ. Ա. 101
Նապաստակներն ու գորտերը. Թ. Ղ. Ա. . 102
Արագիլներ. Անդերէնից Զ. Տէր-Գրիգոր. . 102
Սարդն ու Շերամը. Ղ. Ա. 110
Արջը և Մեղուն. Կ. Մ. Շ. 111
Աղէտն ու ապաւէնը. Ղ. Ա. 111
Արջը և գայլը. Ղ. Ա. . 112
Լուանահաչ. Ղ. Ա. . 113
Գայլ և Սկիւռ. Ղ. Ա. . 113
Գառն ու գայլը. Ղ. Ա. 114
Բազէն և Աղաւնին. Բարկաս 116
Ծովն ու կաղնին. Կռ. . 117
Ծառերն ու կացինը. Խ. Աբովեանի . . 118
Օտարն ու հարազատը. Զ. Բալուղ. . 148
Անմիտ եզներ. Աշխէն (Ս. Ռ). . . 119
Հնարագէտ ջուլհակը. Ղ. Ա. 122
Գիւղացին և օձը. Կռ. . 127
Հեռաքրքիր. Կռ. . . 128
Փիղն ու Զբատիկը. Ղ. Ա. 12
Զրվէժ և վտակ. Կռիլովից 13
Հովիւն ու մոծակը. Կռ. 13
Մուրճն ու իր արձագանքը. Ղ. Ա. . . 1
Երկու թռչուն. Զ. Բալուղ. 1
Առուծի բաժինը. Կռ. . 1
Գառը գայլի մորթով. Կռ. 1
Երկու ընկեր. Կռ. . 1
Տուրք. Մխ. Կօնս. . 1
Հալուռնի թռուրը. Գ. Աստ.

ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ ԵՆ ՊԱՏՉԱՃԱՒՈՐ ԻՀԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ուսում Մայրենի լեզւի, ա. տարի՝ «Պատկերաւոր Այբբենարանով» . . . . . 20 կ.
Ուսում Մայրենի լեզւի, բ. տարի. . . . . 40 կ
Ուսում Մայրենի լեզւի, գ. դիւրք, երբորդ, չորրորդ և յաջորդ տարիների համար, նայած՝ թէ քանի դաս է տանում շաբաթական . . . . . 70 կ.



Գտնւում Թուատեմբերգ գրավաճառանոցում, ուր գումարով գնողներին 25% զեղչ է լինում

Դիմել՝ Въ Тифлисъ, Въ Книжный Магазинъ „Гуттенбергъ“.

0014320

2013

